

ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ.

1859.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻԳՆԱՅՐ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Մեռելահարցուկ, դպիծ Միքայէլ Նալբանդեանց ..... 665—708
Ինախօսականք, Ս. Ալեխսիքեանց ..... 708—724
Ցիշատակարան Կամ Նմմանուէլ ..... 725—750

ՄՈՍԿՎԱ,
Въ Типографіи Грачова и К°.
1859.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1859 ԹՈՒԱԿԱՆԻ

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

—

ՄԵՒՈՒԼԱՀԱՐՅՈՒԿ,

ԳՈՐԾ

ՄԻՔԱՅԵԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ։

(Շարունակութիւն.)

Ի.

Շատ ժամանակ չէր, որ կոմս Ալմաննուէլը բնակվուէր այս քաղաքի մէջ, ուր անցան նախընթաց դլուխներուս պատմած անցքերը։ Նորա անձնական տիարութիւնքը հպարտացրել էին նորան, օդաւորութեան համար դուրս դալ իւր մեսյլոտ բնակարանէն, ուր շատ տարիներ անցուցել էր մելամաղձական և տխուր միայնութեան մէջ։

Վարութեան կանոնքը սորվելուվեն վեր, առանց որ և իցէ մարդու կամք առանալու, ստացուածքեւոր հրատարակել նորա

վարքագրութիւնը. այս պատճառով համարձակութիւն չունիմ խօսել հրապարակով իմ ընթերցողների հետ, կոմս Նմինանուէլի անձին վերայ, հերիքանալով, որ թոյլտուութիւն ունիմ նորա կողմից ասել այնքան, որքան ասացի կամ որքան դեռ ևս պիտի ասեմ:

Բաց ի սորանից, կոմս Նմինանուէլը մի նոր մարդ չէ մեր ազգի համար. նա փոքր ի շատէ յայտնի է ընթերցող հասարակութեանը իւր Յիշատակարաններով և ուսանաւորներով, որ տպվուաին Իւսիսափայլ օրագրի մէջ. այս պատճառով ևս իմ ընթերցողքը չէն կարող ասել ինձ, թէ խօսում էի մի բոլորովին նոցա անծանօթ մարդու մասին: Ինչ և իցէ:

Ես հա այս քաղաքը գալով կոմս Նմինանուէլը մտն էր եկել համարեա թէ բոլոր փողոցները, տեսել էր բոլոր եկեղեցիքը, վանուանոցները, ըստ որում հայաբնակ քաղաքներում սոցանից աւելի բան չկայ, որ կարողանար գրաւել մի եկաւոր կամ հարցասիրող մարդու ուշադրութիւն: Ես հասարակ շատ սխալ երևոյթ է այս, բայց անմիջական հետևանք Հայերի կեանքի ասիական բնաւորութեանը: Այն տեղ, ուր չկայ կրթութիւն և դաստիարակութիւն, չէ կարող լինել ընկերական կեանք. իսկ ուր չկայ ընկերական կեանք, այն տեղ թագաւորում են միմեանցից բաժանող և հեռացնող եսական սկզբունք, որի հիմքի վերայ ոչ թէ միայն բան չէ շինվում, այլ յառաջուց շինուածները ևս քանդվում են: Որ և իցէ գործ, որ պիտի պատկանէր ամբողջ ազգին, հարկ է որ կատարվի հասարակայ ձեռքով, հասարակայ հոգու միաբան գործակցութեամբ. բայց ուր իշխում է եսականութիւն, այն տեղից հալածական է միաբանական ատտուածային հոգին: Եսական հոգով բան չէ յառաջանում նորա համար, որ նա կենդրոնացած է իւր մէջ. նա մեռած է շրջակայքի համար, թէև դառնվում էր մի կենդանութեան պատկեր ունեցող կեղևի մէջ: Մի Ասդպիսի մարդու վարդապետութիւնը զոհաբերութեան մասին (առանց որին ոչինչ առաքինութիւն չկայ) այսպէս է, թէ այն զոհն է արժան և ընդունելի, որ վարձատրում է իակոյն նիւթական ձանապարհով: Նա չիամի և հասկանալ, թէ առաքինութիւն ասածը մի վերացական բան է և չէ երևում նիւթական կերպարանքի տակ: Հեռի է նորանից այն հասկացողութիւնը և վարդապետու-

թիւնը, թէ ամենայն ղօհ, որ վարձատրմամբ մաքուր խղճմտանքի դիտակցութեամբ, արդէն ամենալաւ աղբիւրն էր մխիթարութեան։ Ո՛հ, արևը շատ անգամ դեռ ևս պիտի մոռանէ Հայերի ասիական պղտոր հայեացքի վերայով .... դնայուն մեռեալները (ходячіе трупы) դեռ ևս շատ ժամանակ պիտի կենդանի մարդիկ թուին մեր արտասուելի աղքի աչքում։ Նրբութիւն, որ մեք տեսանելու չենք Վաղամնամութեան այցելութիւնը այս աղքին հասած. բայց արդեօք պիտի տեսանէին մեր որդիքը կամ թոռները, դժուար է հաւատալ։ Ընկրմնած, հնձելու յոյսը չար անձնասաբէութիւն է. եթէ մեր պապերը և հայրերը սերմնած լինէին, մեք այժմ կը հնձէինք, ներկայումս չենք հնձում նորա համար, որ մեր նախնիքը չեն սերմնած. բայց մեք ևս չենք սերմնում, ի՛նչպէս ուրեմն կարող են հնձել մեր որդիքը և թոռները։ Հայերի համար, երէկ և այսօր նոյն և միշտ, չեմ ասում յաւիտեան, որովհետև այդ աղքի բռնած ճանապարհը այնպէս է, որ դարերի ևս դժուար թէ կը դիմանալ, ուր մնայ յաւիտեանը։

.... Նրբեկոյեան ժամանակ, կոմս Նմմինուէլը հեռացաւ դէպ ի քաղաքի ծայրը, դէպ ի մի պարապատուր եկեղեցի, որի բակը էր մի և նոյն ժամանակ և գերեզմանատուն։

Պանապատատ էր բոլորովին այդ եկեղեցու բակը, և շատ ծառեր անկած կային պարսպի հետ զուգահեռաբար, որոնց ստուերքը ստանալով առաւել և առաւել հսկայական երկայնութիւն, որքան արևը խոնարհվումէր դէպ ի մուտ։ Թեթև քամին, խաղալով ծառերի տերևների հետ, պատճառումէր մի ախորժելի խշխշոց. ծաղկիները և արօտները սկսանումէին առուգանալ, թարմանալ, և բարձրացնել իւրեանց դլուխը, աղատվելով արևի ուղղահայեաց այրող ճառագայթներից, որ խաղումէին այժմ կաթողիկէի ոսկեզօծ խաչի վերայ։

Ընկերուն, աչքը ձգեց լայնատարած, դեղեցկանիստ բակի վերայ. ոչի՛նչ, և ո՛չ ոք .... Այն տեղ տալուումէր միայն անշունչ բնութիւնը. այն տեղ, քամին միայն, որոտը, և նշանակեալ ժամերում, եկեղեցու տխուր հնչող զանգակը կարող են ընդհատել միշտ թագաւորող լռութիւնը։ Գերեզմանները որը կարդով և որը անկարդ շարված էին կանաչ, թաւիշապատ յատակի վերայ։ Ընես թէ մարդերի գերեզմանքը ծառայումեն բնութեան ձեռ-

քում Շ ալմանաի քարկըի տեղ: Կնուխիւնը խաղում այս խաղը ժամանակի հետ: Ամեն մի նոր գերեզման, նոր քար է, որ ստանում բնութիւնը և դնում և զանազան ուղղութիւններով շարում իւր խաղակից ժամանակի առաջև: Ժամանակը տանում այդ քարերը յաւտակից....

Այդ կոմս Լամմնուէլը մեռ գալով գերեզմաններըի մէջ և կարդալով տեսու և սխալներով լի տապանագիրքը, որոնց և՛ գրել սուտդը, և գրողը և՛ փորողը էին դիտեցած հայերէն, անցաւ դէպ ի եկեղեցու սեղանի քամակը, այսինքն, արևելեան կողմը: այս տեղ տեսաւ նա մի կենդանի էակ: բայց և սա սպասաւոր էր մահու թագաւորութեանը....

Մի վախճանեմեայ, բայց առյդ ծերունի, ձագատ ձակատով և սպիտակ մազերով բահը ձեռքին փորումէր.... Նորա խոշոր դէմքի գծագրութեան հանդարտութենից երևում էր, որ շատ տանուտեարը կատարումէր այդ գործը, և ամենևին մեքենաբար, առանց մտածելու և իւր գործի հետևանքից կամ շարժառիթից մի տպաւորութիւն նեղս ընդունել իւր հոգու վերայ:

Կոմս Լամմնուէլը մօտեցաւ այս մարդուն:

«Հարև, ծերունի», ասաց նա:

— Ստուծոյ բարին, — պատասխանեց խօսակիցը:

«Գարձեալ գերեզման....»

— Օրհնած, այս տարի դեռ տասնեւրորդն է, որ փորումեմ մի'թէ շատ է: Նթէ այդքան էս չլինի, ասես որ պիտէր քաղցած մեռանել: Ի'նչ է իմ ստացածս եկեղեցուց, որպէս տարեկան ռոճիկի, — երեսուն մանկէթ. Ստուծոյ համար ասա, կարելի է այդքան գումարով ապրիլ, տուն տեղ և ընտանիք պահել: Ա'հ, ասումեն, թէ արդիւնք ունէինք ժողովրդից. ի'նչ տեղից է մեր արդիւնքը: Ա'կրտութենից, պսակից և մեռելից, բայց մկրտութիւնը և պսակը, համարեա թէ ոչինչ արդիւնքի աղբիւր չեն. քսան կոպէկ, երբեմն երեսուն և երբեմն կէս մանկէթ: Ամբողջ մանկէթ տասն տարին մի անգամ չէ պատահում: Ա'նում մեռելը. գերեզման փորելուց ստանումեմ երկու մանկէթ, լուսնալոյս համար, նթէ պսական է, տալիս են մի բան. ինձ որ մեռելի շապիկը, վերայի զգեստները կամ մահիճը, որի մէջ հանգուցեալը փչել էր իւր հոգին, նոյնպէս պատկանում մեզ.

նոր հանդերձը լրիվ կողոպուտ [1]) կը պատկանի ծխատէր քահանային, այս պատճառով ահա մեռելային աւելի եկամուտքի արդիւնաւոր աղբիւր չունինք։

«Լսեմն, դու ուրախանումես, երէկ մեռանումէ մի մարդ»։

— Կնէ մեղքս պահեմ, այն՝ իմ աղքատութիւնը ստիպումէ ուրախանալ։ Ձքաւորութիւնը, աղքատութիւնը, ապրելու և ընտանիք պահելու հոգսը, շատ անգամ խորութիւն չունին հնարնելի մէջ, որոնցով կարելի էր արծաթ վաստակել, կեանքի անհրաժեշտ պիտոյքը հոգալու համար։ Բայց ի տղանէց, այս ևս կայ, որ իմ ուրախանալուս չէ, որ մարդիկ մեռանումեն։ Խոլերայի ժամանակ ձշմարի՛տ աւելի պատճառ ունէի տրտմելու, քան որում երկիւղ կար սրտիս մէջ, որ մի գուցէ ես ևս, կամ իմ ընտանիքիցս մի մարդ մեռանի։ բայց դորա վրայանակ, այն ի՛նչ տրտմութիւնք էր այն տարում....

«Հայց, մի կատարված գործողութեան վերայ մեծ ուրախութիւն ցոյց տալը, ասել է, թէ պատրաստութիւն կար ձեռնտու լինել, երէկ միայն հնար լինէր, որ այդպիսի գործողութիւնք կատարվէին առաւել ստէպ»։

— Ձշմարի՛տ ասեմ, ցաւելու չեմ, երէկ ամենայն օր գերեզմանի փորում այնպիսի մարդերի համար, որպիսու համար փոթրումեմ այս գերեզմանը։

«Լսեմն կան մարդիկ, որոնց մեռանելը այնքան ախորժ չէր քեզ, չնայելով, որ պիտի արդիւնաւորվէիր»։

— Կնչպէս չէ։ Օ՜որ օրինակ երիտասարդ մարդերի, նոր դեռ ևս ընտանիքի տէր դարցած, նոր տեսած կեանքի արևը, որոնց դուռը միշտ բաց է իմ պէս աղքատների համար։ տօնի, զատկի, տալիս են մի բան, երէկ մկրտութիւն կամ մի այլ հոգևոր պէտք կատարվի նոցա տանը, նոյնպէս չեն մոռանում ժամակոչը։ Որքան և խղճ, այդպիսի մարդերից տարու մէջ տասնումեմ գո՛նէ մի մանէթ. ձշմարի՛տ, երէկ այդպիսիք մեռանին, մինչև չորս հինգ մանէթ կ՛տասնաս, բայց, բանը այս է, որ այդ չորս կամ հինգ մանէթով բոլոր հաշիւդ կը վերջանայ մեռանողի հետ։ Ընդ այս-

---

[1]) Յաւելում մատերումեմ այս տեղ մի քանի քահանայք, որ ժողովրդի հետ կռիւ ու վէճ էին բանում կողոպուտ պահանջելով, թէ արժան է որ այս հանդուցեալու այս ինչ և այն ինչ հանդերձները ևս տային նոցա, ձգուելի իրաւունք։

պիսի մարդիկ, եթէ մեռանին, ախոռտումեմ. բայց այն միւս մարդիկը, որոնցից ոչինչ ալուիւնք չունինք, որոց շրմքը երբէք չենք կոխած, որք հայը միանգամ ուտումեն, միւսանգամ կշտանում, թէ մի՛ գուցէ պակասէր, որ բոլորովին նման են անպիտան ձիու, որի տէրը մի միայն օգուտ, որ կարող էր քաղել նորանից, այդ էր նորա կաշուցը, որ աստակելուց յետոյ կարող էր վաճառել, ըստ որում նորա կենդանութիւնը չէր արժում և նորա կաշուն:

«Այն մարդը, որի համար փորումես այդ գերեզմանը, նոյնպէս պատկանում այս վերջի՞ն տեսակի մարդերին»:

— Ասելն վատթար: Այո, մեր եկեղեցու նախկին երեսփոխանն էր, տան և հինգ տարի կատարեց այս պաշտօնը, բայց ինչ պէս, մի հարցրու:

Տարին մի անգամ մի քանի քահանայք գալիս էին հաշիւ տեսանելու. բայց ինչ հաշիւ, ինչ քննութիւն: Հանդուցեալը լաւ գիտէր իւր բանը: Հաշիւը սկսանելուց յառաջ, պատրաստումէր, ահա այն ծառերի տակ, խորովածը, գինին և արաղը: Ընտրակոյս, յառաջ դնումէին այդ բարութիւնքը վայելելու, որ մի փոքր ոյժ ստանան այն մեծ և երկար, ամբողջ տարու մանրամասն հաշիւը քննելու համար: Նեղացի էր շատ մեր երեսփոխանը, նա սկսանումէր մի մի արաղից և բանը բերումէր հասցնումէր այն տեղ, որ հաշուատետքը տաղ չէին թողում, մեղկդի, շարական չէին թողում, որ չ'երդէին.... Սովորաբար առաւօտեան տասն ժամից կը սկսվէր այս բանը և կը տեւէր մինչև ժամը երկու կամ երկքը ձաշից յետոյ. այս միջոցին երեսփոխանը ասումէր, «այժմ սկսենք հաշուի բանը, որովհետև մի երկու ժամից երեկոյեան ընդհակը կը զարկեն, ժողովուրդ գուցէ սկսանի գալ եկեղեցի և խափան լինել մեր գործին»: Ու հասարակ շատ բարեսիրտ են մեր քահանայք, այս չէ կարելի ուրանալ. երախատրութեան մասին ևս յետ չեն ժողովրդից. այս պատճառով ևս ասումէին, — օրհնած, այսքան տարի եկեղեցու ղրանը ծերացար, այժմ սիրտ խարդախութի՞ւն գործելու հաշիւներին մէջ. մի՛թէ մեք չենք հաւատում քեզ: Մեր գալը մի օրինք է որ կատարումենք, լրացանումենք առաջնորդի հրամանը, որ սաստիկ պատուիրումէ ուշի ուշով քննել հաշիւները, որպէս թէ դողերի և սաւզակներուն ձեռքում էր եկեղեցին: Հանճարեղ երեսփոխանը պատասխանումէր, «Ձէ, տեսէք հարք, ես խղդրումեմ, որ հաշիւ-

նեղիս վերայ աչք գարձուցանէք, եկեղեցու մի կոպեկը ևս կրակ լինի իմ համար, եթէ խառնել եմ իմ գոյքի մէջ»։ — Ով Աստուած սիրուածս, ձեռք վեր առ այդ բաներից, մեք լաւ ճանաչումենք քեզ, Աստուած տայ, որ բոլոր երեսփոխանք այն հոգին ու հաւատը ունենային, ինչ որ դու ունիս, բեր մատեանները, — շարունակումեն քահանայք։ Երեսփոխանը բերում. և ահա, եկեղեցու տարեկան եկից և մտից տակը գրվում գեղեցիկ գրչով. «Հոգևոր կառավարութիւնս վերահաստս եղեալ ստուգութեան հաշուոց, ելից և մտից եկեղեցւոյն, եդիտ ըզայս ի պատշաճեալ կարգի, ըստ օրինացն հրամայելոյ, զորմէ ստորագրութեամբ անդամոց և դրութեամբ ինքոյ վկայէ»։

Ընտուհետև մի ամբողջ տարի ով էր եկեղեցու մօտ եկողը, ով էր հաշիւ հարցնողը։ Տարեգլխին, նոյն քահանայքը, նոյն խորովածը, նոյն պատիւը, տաղը և շարականը, հետևաբար և նոյն վկայութիւնը «ստորագրութեամբ անդամոց և դրութեամբ ինքոյ»։

Ահա այս կերպով տան և հինգ տարի վարից հանգուցեալը երեսփոխանութեան պաշտօնը։ Բայց երբ սորանից հինգ տարի յառաջ հիւանդանալով հարկադրվեցաւ թողուլ իւր պետը, եկեղեցին, բացի քանի մի փութ մոմից, կոճաւից և խունկից այլ բան չունէր....

«Ապա ժողովուրդը՞», հարց արեց կոմս Լամմանուելը։

— Ը՛մ. ժողովրդին ինչ. եկեղեցական գործերի մէջ ինչ գործ ունի ժողովուրդը. այս տեղ հոգևոր իշխանութիւն կայ, կառավարութիւն և առաջնորդ. — պատասխանեց ժամակոչը, ձախտի քրտինքը սրբելով։

«Շատ բարի. բայց եկեղեցին ոչ հոգևոր կառավարութեանն է և ոչ առաջնորդին. եկեղեցին պատկանում ժողովրդին և գեռ օրէնքի զօրութեամբ ևս ժողովուրդը պիտի վերահասու լինի եկեղեցու տարեկան ապրիւնքին և ծախքին։ Երեսփոխանը ինչ է. ովի՛ երեսփոխանն է նա. ոչ ապաքէն ժողովրդի եկեղեցու մէջ, ժողովրդի գործակատարը։ Ժողովուրդը գնում մի մարդ եկեղեցու մէջ, որ նա անտեսէ տարեկան ապրիւնքը և ծախքը, այլև հոգաբարձու լինի եկեղեցու գիւղում»։

— Մեր ժողովուրդը այդպիսի բան չգիտէ։ Նորան վաղուց արդէն հաւատացուցել են, որ ժողովուրդը, ազգը հոգևոր բանե-

լրի մէջ իրաւունք չունի խառնվելու, որովհետև այդ բոլորը պահ-
ված է հոգևոր իշխանութեան:

«Եկեղեցու եղ ու մուտը հոգևոր պաշտօն չէ, մի սրբազան խորհուրդ չէ, որ սոսկական մարդը համարձակութիւն չունենայ մերձենալու: Հոգևոր իշխանութեան դործը է հոգաբարձու լինել եկեղեցու կլօնական մասին և ոչ եկեղեցու անահասութեանը, որ հասարակաց ոչնչ չունի կլօնի հետ: Եկեղեցին շինողը և պահողը է ժողովուրդը, սորա վերայ է նորա ծանրութիւնը, եթէ եկեղեցին քանդվի, ժողովուրդն է շինում, դարձեալ եկեղեցու սրբիւնքը ժողովրդից է»:

— Ընտրը, բուրդը և կաթը իւր տիրոջը տալով, իրաւունք ունի պահանջելու, որ տէրը հաշիւ տայ նորան, թէ որքան արդիւնք էր ստացել նորա բուրդից և կաթից, և թէ ուր, կամ ինչ բանի համար ծախք էր արել:

«Ընտրը անբան անասուն է. բայց ժողովուրդը բաղկանում է բանական մարդկից. մի՞թէ ընդունե՞մ ժողովուրդը, որ վարվէին իւր հետ, որպէս անբան անասունի հետ: Դա շատ զարմանում եմ ձեր ժողովրդի վերայ»:

— Դժե զարմանում ես, ապա ուրեմն ոչնչ հակացողութիւն չունես մեր ազգի մասին: Ժողովուրդ ասացիր բաղկանում է զանազան առանձին առանձին մարդկից, այնպէս չէ՞:

«Այնպէս է»:

— Ուրեմն ժողովուրդը խօսելու համար, հարկաւոր է, որ այդ առանձին առանձին մարդիկը միաբանից մօտենան, խորհուրդ կատարեն, և իւրաքանչ մտնաւոր ձայնները, դէպ ի մի սերտ հաւաքելով, լսեցնեն որպէս մի հասարակաց ձայն, այնպէս չէ՞:

«Միևնոյն այդպէս»:

— Ասա դու տեսա՞ր, երբևիցէ քո կեանքում, երկու Հայ, մանրուք խղճմտանքով և անկեղծ սրտով միաբանց մօտ եկած մի աղքային դործի համար, որի օգուտը անմիջական յարաբերութիւն չունէր նորա անձնական շահասիրութեանը: Տեսա՞ծ բան է Հայերի մէջ բարոյական մօտաւորութիւն, կա՞յ Հայերի համար մի սուրբ առարկայ, որի անուամբ ամենայն երկրորդական պղտորութիւնք յետ դնելով բարեկամական ձեռք պարզէին միմեանց: Ա՛խ, պարո՛ն, երևում է, որ դեռ անփորձ ես և երիտասարդ, արիւնդ

տաք, ինչ ասես մոածել է տալիս, առանց կշռելու այն հանգամանքը, որոնց թույլատրելիությունից կախ էր այդ դեղերիկ գաղափարների իրագործելիությունը: Իմ այս մտքերը չեն սպիտակացել ջրաղացի դռնում, այլ ժողովրդի մեջ. և ես մտել եմ ժողովրդի սաճն մի կողմի մեջ, սկսած յետին ադքատից մինչև երևելի պարոնը: Տարու մեջ, ես տեսանում եմ շատ տեսակ հատարակութիւնք: Սահն մի թաղումի, կիրակամոի կամ այլ այսպիսի բանների ժամանակ, ըստ մեծի մասին մի տան մեջ հաւաքված են լինում երեսուն, քառասուն և երբեմն յիսուն կամ վաթսուն հոգի: Այդ տեղերում լինում են շատ խօսակցութիւնք, և այդպիսի տեղերում կարելի է ճանաչել ժողովրդի սոյդ բնաւորութիւնը: Ես այս տեղ ասլատ է, չէ հաւաքվել պաշտօնական խորհրդով, որ միտքը փոքր ի շատե լարված կամ նախապաշարված լինի, չէ սերտել խօսելիքը, ինչպէս պաշտօնական ժողովների ժամանակ. բայց ի սորանից, նա անվաւեր է համարում այն բոլոր խօսք ու զրոյցքը, որ լինում այսպիսի տեղերում, և այս պատճառով ևս ցոյց է տալիս իւր հոգու միջինը ամենայն միտումնաթեամբ, և խելացի կամ զննող մարդը, որ կուզէր, շատ բան կարող է իմանալ այսպիսի ժողովներից: Իմ կոչումը և պաշտօնը այնպէս է, որ ոչ ոք արժան չէ համարում խօսել իմ հետ. աղախինքը կամ սպասաւորքը զղուելով տալիս են ինձ մի բաժակ պաղ, կամ առաջևս դնում են կերակուրը. շատ անգամ տեսել եմ, որ բաժակը կամ ամանը, որ ես դործ էի դրել, խակոյն կոտրտումէին, որպէս թէ նա պղծվել էր: Այսպէս լինելով իմ դրութիւնը ժողովրդի մեջ, ինքս ոչինչ չխօսելով հարկաղրվում եմ ականջ դնել ուրիշների խօսածին: Միանգամ մի տան մեջ հաւաքված կային մօտ երկու հինտուն հոգի, կիրակամուտ էինք կատարում մի հանդուցեալու: Այդ տեղ սկսվեցաւ մի խօսակցութիւն հասարակաց և մանաւոր խնդիրների վերայ, որ տևեց ամբողջ երկու ժամ: Բայց չկարծէք, որ հինտուն հոգին ևս խօսում էր, թէպէտև դործը հինտունին ևս վերաբերվում էր: Ամէն տեղ երեսուն հոգու չաւ յետին դասակարդից, այսինքն չունևորք, կային, որոնք ոչ լեզու ունին և ոչ բերան, ձուկի նման մունջ են: Այս դասակարդը պարիզեցի է, և դիտելով իւր աղքատութիւնը, որովհետև խօսելու կամ բանի մեջ խառնվելու իրաւունքը շատ կամ սակաւ կապուածութեան տէր մարդն ունի, ոչինչ չէ խօսում, թէպէտև խո-

սել ևս չդիտէ, ինչպէս նաև շատերը . . . . և թէ ի՛նչ բանի վերայ խօսումէին, նոյնպէս չդիտէ. նորա խելքը չէ հասանում այսպիսի բաներին: Նա ապրումէ քաղաքի մէջ իւր չքաւորութեամբ և յոյս ունի հարուստների վերայ, որ կը հոգան քաղաքի բոլոր պիտոյքը: Այսպէս ահա, իննսունից երեսունը դուրս եկաւ, միայ վեցտասն: Բայց այս վեցտասնը ևս չէ խօսում: Վեցտասնի մէջ կան քառասուն և հինգ կամ յիսուն միջակ մարդիկ, որոնց առաջ է հարուստի ներկայութեամբ խօսել, կամ հրատարակել իւրեանց կարծիքը. պատճառ, միանգամ հաւատացած են, թէ կարծիք յայտնելու իրաւունքը պատկանումէ միայն պարոններին, այսինքն նոցա, որ շատ արծաթ ունին: Միջին դասակարգի մարդիկը, եթէ հաւաքվին մի այնպիսի տեղ, ուր չկան հարուստ մարդիկ, այն տեղ խօսումեն, քննումեն և շատ անգամ աւելի առողջաբար մտածումեն, քան թէ մի ութտասն տարեկան ջաղջախած ծեր, որ միշտ պանչվումէ ժողով, որովհետև հարուստ էր: Այս կերպով մտածին մէջ տեղում տան կամ տասն և հինգ հոգի հարուստքը, որ խօսումէին: Բայց պիտի այս ևս ասել, որ այս մարդիկը ևս բաժանվումեն զանազան դասակարգ: Ծեր, կամ հին ժամանակներից հարուստ տան ժառանգը, աւելի պատուաւոր է քան թէ մի երիտասարդ կամ նոր հարստացած մարդ. այս պատճառով ևս, նորա կարծիքը կամ խօսքը աւելի մեծակշիռ է: Սակայն այս է բանը, որ այդ ծերերը անցուցած լինելով, ինչպէս ևս, իւրեանց ժամանակները, ամենայն բանի վերայ նայումեն այն աչքով, ինչ աչքով նոցա հայրերը նայումէին, կամ ամենայն բան չափումէին հին չափով: Այժմեան ժամանակիս տղայքը բոլորովին ուրիշ կերպով են նայում, և հաւան չեն ծերերի կարծիքին: Ծերերը պահանջումեն, որ ամենայն բան կամաց կամաց լինի, համբերութեամբ լինի, առանց մի մարդու անձնասիրութեան մօտենալու, բայց երիտասարդքը պահանջումեն, որ վճռաբար կատարվի ամենայն գործ, յետ դրվի դանդաղկոտութիւնը և վնասվի մի մարդու անձնասիրութիւն, եթէ այդ մարդը իւր անձնասիրութեամբ կապումէր ազդի կամ քաղաքի յառաջադիմութեան ընթացքը: Խօսակցութեան ձայնը սկսանումէ այնուհետև բարձրանալ, հասանումէ մինչև միմեանց պատուի ձեռնամերձ լինելու. ծերը ազդումէ երիտասարդին, դու դեռ տղայ ես, ի՛նչ մարդ ես որ մէջ տեղ ես եկել, քո խելքի՞ բան է այսպիսի բա-

*նելի վերայ խօսել: Երիտասարդը առաւել է զայրանում և պատասխանում. ժամանակը մեզ է պատկանում, և մեք աւելի լաւ ձանաչումենք նորան քան թէ դուք, ձեր ժամանակը անցաւ, հերիք է որ ձեր սկսնելի անխել կարծիքները երեսուն քառասուն տարի պաշտպանեցան քաղաքի կամ ազգի վնասի համար: Մինա մնացող հարուստներից ոմանք նոյնպէս խօսումեն իւրեանց մէջ: Ասոցանից մինը կամ երկուքը պահումեն երիտասարդի կողմը, միւսքը պաշտպանումեն ծերի կարծիքը. բաբելոնեան խառնակութիւն: Բայց այս բոլորը չէ դեռ ևս. այն տեղ երկու երեք մարդ, միօրինակ դատապարտումեն երկու կողմը ևս, այլև պատաքին կերպով ցոյց են տալիս, որ ոչ մի կողմին կուսակից չեն, բայց եթէ առանձնապէս պատահեն երիտասարդին, գովումեն նորա կարծիքը և համաձայնումեն նորա հետ. իսկ թէ բաղդը բերէ պատահել ծերին, նորանից ևս չեն հրաժարվում, նորա սասծները ևս ճշմարիտ են, և այս պարոնները պատրաստ են ստոյգութեամբ հաստատել ծերի խօսքերը: Ա՛յս տեսակ էջերքանի մարդիկը այսպէս մոռացումեն. թէ հարկաւոր չէր հաստատելց օգտի համար սասնալ անձնական թշնամիք. ինչ որ սիրտ մտանէ հաստատութեան դանձարանը, մի՛ թէ օգո՞ւտ ունի նոցա անձնական շահասիրութեանը, ուրեմն ինչ հարկաւոր է սեն մարդու հետ կռիւ վէճ բռնալ: Վաղուքը մինչև այժմ կառավարվել է, այսուհետև ևս կը կառավարվի, մեք մեր կեանքի շատ մասը անցուցել ենք, թող մեր որդիքը ինչ կամին առնեն:

Ա՛հա քեզ, պարոն, մի անշուք, բայց ճիշդ պատկեր մեր հաստատութեանը. այսպէս լինելով բանը, ո՞ւր կը մնան ձեր պահանջողութիւնքը և խօսքերը:

Շատ տխուր տպաւորութիւն գործեցին այս բաները կոմս Նմմինոուէլի վերայ. նա, որ քաջ գիտէր այս բոլորը, վերստին լսում մի ժամակոչի բերանից....

Երեք չորս քարշեց իւր վերջին ձառապայթքը և ժամակոչը երկու ձեռքը դնելով գերեզմանի ափերին, դուրս եկաւ նորա միջից:

— Երիք է այսքանը, — ասաց նա ինքն իւրեան, բայց այնպէս, որ լսեց Կոմս Նմմինոուէլը:

«Ինչպէս թէ հերիք է, հապէ՛ մի և կէս կանդուն կայ փո-

լսածի խորութիւնը, այդպիսի գերեզմա՞ն կը լինի»։ պատասխանից կոմս Նմմանուէլը։

— Ինչ է, մտածումես, որ դուրս կը փախչի մեռեալը, այդ երբէք լինելու չէ։ Քահանայն անդրէն եղեալ առնով խաչի նիւթը գնելուց յետոյ, եթէ մի կանգուն ևս խորութիւն չունենայ փոլսածը, մեռեալը չէ դուրս գալու։

«Այս դիտեմ որ մեռեալը չէր դուրս գալու, բայց փոքր հողի տակ ծածկվելով մարմինը, երբ որ սկսանուամի փտել, իւր վերլուծութեան միջոցին, օդը կ'ապականէ անպիտան արտաշնչութեամբ, որից յառաջանուամեն զանազան վատ հիւանդութիւնք։ Ես այս է պատճառը, որ օրէնքը ևս հրամայուամ երկիք կանգուն խորութեամբ փորել գերեզմանը, այս պահանջուամեն առողջապահական կանոնքը»։

Բայց ժամակոչը ուշադիր չեղաւ այս խօսքերին. նա իւր կեանքում չէր փորել այդպիսի խոր գերեզման։

Ը.

Կոմս Նմմանուէլը, ախորութեամբ լցուած, բաժանվեցաւ մահու թագաւորութեան սպասաւորից, և սկսեց դիմել դէպ ի պարսպի դարպասը, որ գնայ իւր օթեւանը։ Նա մտածուամը, թէ արդարև Հայոց ազգը թէպէտև քանի հազար տարեկան, այնու ամենայնիւ դեռ ևս մի խակ տղայ է և դուցէ երբէք դուրս գալու չէ այս տղայութենից։ Այսպիսի ազգերը, ասուամը ինքն իւրեան, կարօտ են, որ, ինչպէս անչափահաս որբեր, դասանվին հոգաբարձութեան տակ, բայց Հայոց ազգը չունի հոգաբարձու և դասանելու չէ երբէք։ Ուրեմն ինչ պիտի լինի այս ազգի վերջը, շարունակուամէր նա մտածել։ անտարակոյս այն, ինչ որ լինուամ առանց հոգաբարձուի մնացած անչափահաս որբերի վերջը....

Այս խորհրդոյ, բայց տխուր և արտում մտածութիւնքը զբաղացուցին կոմս Նմմանուէլի սիրտը, և արտասուքի երկու խոշոր կաթիլներ դուրս թռան նորա լցուած աչքերից և թաղվեցան գետնի փոշու մէջ։ Այո՛— ասաց նա, նայելով իւր

աստասուքի ընթացքին, — Թէպէտ և ասումեն, որ աստասուքի Թափվելը ԹէԹևուԹիւն է տալիս մի վշտահար սրտի, բայց դուք Թաղվելով այս ոտնակոխ փոշու մէջ, տեղիք էք տալիս, որ աւելի տխրուԹեան ամպեր պատեն իմ սրտին: Դուք ցոյց էք տալիս ինձ, որ տարագիր ընկած ազգի կամ մանաւոր մարդու աստասուքի համար ևս չկայ մի աղնիւ առարկայ, որ ժողովէր այս աղնիւ հիւԹը, որ միմիայն հոգու նկրգործելուց գուրս է գալիս մարմնից:

Ա՜յո՛, երանի՜ այն անբաղդին, այն Թշուառին որ միայ իւր տեղում դռնէ դռնա աստասուքը կը Թափվին հայրենիքի աւերակների կամ իւր անցած կեանքի յիշատակարանների վերայ, որ սուրբ են և միշտ սրտի սուրբ միան քնքուշ և հասկացող սրտի համար: Բայց վա՜յ այն ազգին, այն ժողովրդին որի աստասուքի համար օտար փոշուց աւելի չկայ մի ուրիշ աղնիւ ընդունարան:

«Ո՛նչ այդպէս դլուխներդ կախած գնում էք, պարո՛ն», ասաց մի ձայն:

Կոմս Լամմանուէլը վեր բարձրացրեց դլուխը և ձեռքի Թաշկինակով սրբեց աչքերը շտապով, բայց, ծածկել կամենով իւր աստասուած լինելը, ձևացուց, որպէս Թէ սրբում էր ձնհալքի փոշին կամ քրտինքը: Դրբեմն, աստասուքներ, որ յատուկանում են հոգու խիստ մեծութի, խիստ սիրահան, բայց օտարի համար գաղտնի պատճառից, չէ պիտոյ երևին ուրիշին. սա իրաւունք չունի նկատել այդ նուիրական գաղտնիքի ազդեցութեան հետևանքը, այդ մի սուրբ բան է և պիտի ծածուկ մնայ միշտ ուրիշից, որ մի դուցէ օտարոտի խորհուրդների տեր լինելով, անարժանաբար տեսանէր մի այսպիսի մաքուր պերճանք սրտի:

Կոմսի հետ խօսողը էր մի տիրացու:

— Դո՞ւք էք, — ասաց կոմսը փոխված ձայնով: Նորա կիրքը նոսրած չէր դեռ ևս, և արիւնը ալեկոծվում էր սրտի և Թոքերի մէջ:

«Ա՜յո՛, ես, ես», պատասխանեց տիրացուն: «Դրեւի, օրի լաւութեան պատճառով դուրս էք եկել մեզ դալու, շատ լաւ էք արել: Մի միայն երջանկութիւն, որ կայ մեր քաղաքում, դա օրի մաքրութիւնն է, մանաւանդ առաւօտներն և երեկոյեան ժամանակ»:

— Սոյնդ է, ես ևս նկատումեմ այդ, — պատասխանեց կոմսը, բայց այնպիսի սառնութեամբ, որ յայտնի ցոյց էր տալիս, թէ ծանրութիւն էր իւրեան, խօսել այն բոպէին օդի վերայ։

Ընդարձ, եթէ մարդու կեանքը առնունք որպէս մի թել, ապա ուրեմն շատ խայտաբղետ և պիսակ մի թել է նա։ Այդ կարճ կամ երկայն շղթայի օղերը ունին իւրեանց վերայ զանազան դրոշմեր, ոմանք ուրախութիւան, ոմանք տրտմութիւան, ոմանք յուսահատութիւան. մի խօսքով, հոդու բոլոր զգացողութիւնքը, բոլոր հոգեբանական երևոյթքը։ Կեանքի մէջ կան և այնպիսի բոպէներ, երբ մարդը պիտի խօսի միմիայն իւր հետ, իւր հոդու հետ, իւր Աստուծոյ հետ։ Այդպիսի նուիրական բոպէներում մարդը հրաժարվումէ նիւթական աշխարհից, նա մոռանումէ իւր շրջակայքը, նա դուրս է դալիս մարքի ծովի վերայ և այդ ձանապարհորդութեամբ ապրումէ այն բոպէին։ Այդպիսի բոպէներում մարդու բոլոր զգացողութիւնքը և կարողութիւնքը կենդրոնանալով մարքի գործարանի մէջ, ուղեղի վերին կիսաբաժիններին մէջ, միւս ջղերը և գործարանքը, ասես թէ դադարումեն ներգործելուց։ Էքը, տեսողական գործարանը, համարեա թէ սառչումէ, և այն բոպէին նորա վերայ ընկած ձառագայթը մի առարկայից, չէ հասանում դէպ ի ուղեղը. ականջը, լսողական գործարանը, նոյնպէս, և եթէ առաջինը կամ երկրորդը հասուցանեն մի կիսատ թերատ տպաւորութիւն դէպ ի ուղեղը, սա չափ է և չէ կարող ընդունել տպաւորութիւնք, մինչև մի դղրդեցուցիչ խթան չներգործէ նորա վերայ։ Բայց, սառնայական, այնպէս է պատահում, որ եթէ ոչ միշտ, դոնե շատ անգամ այսպիսի քաղցր բոպէները ընդհատվումեն այդ բոպէների բնաւորութեան մի բոլորովին հակառակ հանդիպմամբ։ Սա մի անախորժ զգացողութիւն է, որ մարդը ձգումէ համարեա թէ մի տեսակ կատաղութեան մէջ. և աներևոյթելի մարդը սառնայ է թվում այսպիսի ժամանակ։

Բայց կոմս Ֆմինանուէլի սառն ընդունելութիւնը ոչինչ ազդեցութիւն չգործեց տիրացուի վերայ։ Նա սովորած չէր օդից խոնաւութիւն ընդունել. դորա հակառակ, այն տեսակ մարդկերից էր, որոնց ջրհեղեղ է հարկաւոր խոնաւութիւն զգացուցանելու համար, անձրևը փոքր է։

— Այս ևս դուրս եմ ելած ման գալու, — ասաց տիրացուն, — եթէ կամիք, դնանք միասին:

Թէպէտ և շատ ծանր էր կոմսին ընդունել այս հրաւէրը, բայց մի փոքր մեղմացել էր սրտին սրտի կրակը. բայց ի սորանից յիշեց նա իւր սովորական կանոնը, թէ չէ պիտոյ արհամարհել և դայթակղեցնել մի խեղճ մարդ, որի պատահական դրութիւնը նախանձելի մի բան չէր աշխարհի երեսին:

«Գնանք, գնանք», պատասխանեց կոմսը «բայց այսպէս.... ուղի՛ղ. պատճառ, ես այժմ վերադառնումեմ դէպ ի տուն և միտք ջունիմ երկար միջոց ման գալու»:

Սկսեցին գնալ: Երկու կողմից ևս պահվումէր մի կամակոր լռութիւն:

Կոմսի միտքը նմանումէր մի ծովի, որ երկար ժամանակ մրրկից ալէկոծվելով, չէ կարող խկկին հանդարտել, թէև դադարել էր մրրիկը: Մրրկից յետոյ ևս դեռ բաւական ժամանակ վազումէն կատաղութեամբ դէպ ի ծովեզերը փրփրած ու դէպ ի վեր ցից ցից դագաթներով սուր անկիւնաւոր ալիքները, մինչև որ ծովի մրրկից ստացած ոյժը թուլանայ և ալիքների սուր և կոնոնաձև դագաթները ստանալով աւելի կամարաձևութիւն մօտենան հորիզոնական մակերևութեին: Բայց այս բանի համար հարկաւոր է երկար միջոց. տիրացուն հանդիպեցաւ կոմսին, երբ նորա միտքը հասել էր խաղաղութեան մինչև հնազանդ ծայրը. այս պատճառով կոմսը չէր կարող խօսել այլ բանի մասին, քան թէ նրանի էր եղած նորա ամբողջմունքին: Տիրացուի լռութիւնը յանգչանումէր նորանից, որ չդիտէր թէ ինչպէս խօսք բանայ և ինչ բանի համար: մանաւանդ լսած լինելով իւր ուղեկցի անունը, հարկաւոր էր համարում զգուշութիւն գործ դնել, որովհետև կոմսը համարված էր այդ քաղաքում, որպէս մի վտանգաւոր մարդ:

Տիրացուն մտածեց մտածեց և վերջապէս ոյժ և սիրտ ստանալով ասաց. — Պարոն, դուք ինչպէս էք վերլուծում «Լյոշըրնը»:

Ահա քեզ մի ուսումնական խնդիր, որ արժէ tartarus emeticus. ինձ հարկաւոր չէ մի խօսք ևս յաւելացնել. ինքեանք ընթեր-

ցողք կարող են հասկանալ խելօք կոմսի դրութիւնը: Ինչ պիտոյ է առնել: Ընկել էր միանգամ:

«Երկնաւոր, անմահ սուրբ և կենարար Հօր սուրբ փառքին, ղուարթ լոյս — Յիսուս Քրիստոս», պատասխանեց կոմսը, ախ քաշելով սրտի խորքից: Ինքը ինչ բաների վերայ էր մտածում, ինչ օդեղէն ամրոցներ էր շինում, տիրացուն, որ և քառատունի չափ աշակերտ ունէր, ինչ բան էր հարցանում:

Տիրեց դարձեալ լռութիւն:

Տիրացուն առաջարկեց մի այլ պատմական խնդիր:

— Պարոն, — ասաց նա, — Ընտրել պատմագիրը, Վէոռ — Օղլուն և նորա աւազակ ընկերները անուանում Ջալալիք, այս մարդիկը հա՞յ էին:

«Մի՛թէ չդիտէք, որ մահվեստականք էին նոքա», պատասխանեց կոմսը:

— Այս ո՛ր տեղից է Հայերի մէջ Ջալալեան մականունը. ես այնպէս էի կարծում, որ այդ տուները յառաջանում Ջալալներից:

«Նշանակում է, սակիւ ծագում էք վերագրում նրանց այդ տուներին: Ես չդիտեմ այդ տուների ծագման պատմութիւնը, սակայն հաւանական է, որ Ջալալների ժառանգները էին դոքա» Թող որ նոցանից Բահան ազգը Աբրահամից Յոստանդնուպօլիս գալով միացել էր Վէոռ Օղլուի հետ, երբ սա գնացել էր այն տեղ Տէմիրճի Օղլուի ձեռքից Նիվաղը — իւր սիրական մանկլաւիկը — ազատելու, որ իւր կարդով մի փոքր ժամանակից յետոյ նոյնպէս ջալալի դարձաւ»:

Դարձեալ վերջացան տիրացուի երկբայական խնդիրները, դարձեալ լռութիւն:

Փողոցը, որով գնում էին այս երկուքը, դատարկ էր բոլորովին մարդկից: Սովերը նախկից տուն վերադառնալով բարձրացրել էին մի թանձր փոշի, որ քամի չլինելուց բաւական երկար ճնուում էր օդի մէջ, որ միևնոյն դողումը այս անասունների բառանչելուց:

Այս և այն բաց պատուհաններում երևում էին կանանց և աղջիկների կերպարանքներ, որ մի ձանձրալի միօրինակութեամբ անշարժ նստած նայում էին այս երկու գնացողների վերայ:

— Մայրի՛կ, մայրիկ, — ասաց դուստրը իւր մօրը, — ահա այն մարդը, որ նոր է եկել, երևի թէ դալձեալ գնում Մահտեսի Թովմասի տուն. առաւօտ ևս այն տեղ էր, ես տեսայ նոցա տանից դուրս գնալը։

«Հատ կարելի է», պատասխանեց մայրը. «դուցէ նշանվելու դիտաւորութիւն ունի։ Մահտեսի Թովմասի Մարիամը գեղեցիկ աղջիկ է և վարժված, ով դիտէ....

Յանկարծ, այս միջոցին, կոմս Լամինանուէլի ականջին հասաւ մի ֆորտոպիանօի ձայն.... Ուշադրութեամբ ականջ դնելով հասկացաւ որ ածում էին «Տէր կեցո դու զ՚այս» [1]) *երգի եղա-*

---

[1]) Այս երգը առաջին անգամ երևեցաւ Կալկաթայի Ազգասէր անունով օրագրի մէջ, որ հրատարակուէր յաւելենական յիշատակի արժանաւոր Մեսրոպ Դաւթեան Թաղիադեանց ուսումնական ազգասէրը։ Այս երգը թէ իւր բովանդակութեան, թէ իւր բանաստեղծական վսեմութեան յօրինուածքի և թէ հայոց ներկայ վիճակի ճշգրիտ պատկերը հանդիսացնելու և գորա բարւոքելու համար հարկաւոր եղած հնարները խնդրելու մասին, արժանի է ազգի մանաւոր ուշադրութեանը։ Եթէ հնար ունենայի ես, ամենասրբ պարտականութիւն կը դնէի ամէն մի հայի վերայ անդիր ուսանել այս երգը։ Մինչև այսօր իմ կեանքի մէջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ։ Խնդո՛ւմ Թաղիադեանց. խաղաղութի՛ւն քո հոգուն, չարչարվեցար չարչարվեցար ազգի լուսաւորութեան համար, քայց էլ չմոլորեցաւ քեզ, որպէս և շատերին, տեսանել քո մարգարէական ազդու քարոզութեան պաղատերութիւնը մեր ազգի մէջ։

«Արշալոյս Արարատեան» Զմիւռնիոյ պատուական և անդրանիկ օրագրի 1858 թուականի հոկտեմբ. 31, Ուրբաթ, 583 համարի մի յօդուածը արժանայիշատակ Թաղիադեանցի մասին, արժան եմ համարում դուրս գրել այս տեղ բառ առ բառ, իմ ծանօթութեամբ հանդերձ։

«Առ յարգոյ հրատարակիչ Արշալոյսոյ Արարատեան,

ՑԱՐԳՈՑ ՊԱՐՈՆ՝,

«Տիրութեամբ ծանուցանեմ, որ Մեսրոպ Դաւիթ Թաղիադեան, վաղաժա-«նօթն յարգութեանդ ղբաւեալ է ի Թանգագին կենաց իւրոց՝ի 10 Յունիսի այսր «ամի՝ի Ընրազ քաղաքի. յորոյ վերայ ի ներքոյ գրեալս սակաւատող բանս խընդրեմ, ընդ արարեալ հաճնսիք հրատարակել միջոցաւ պատուական օրագրի ձեռնարկ, որով և շնորհալարտ կայուցանել զձեր խոնարհ ծառայ Թադէոս Խ. Ավետումեան։ Ընդ՝ Կալկաթա, 21 Օգոստոսի, 1858։»

ԱՀԱ ՑՕԴՈՒԱԾՔ, ՈՐ ՈՒԴԱՐՈՒՄՔ ԱՅՍ ՊԱՐՈՆՔ։

«Ձե՛ մեր նպատակ գրել զվարս ազգասէր հեղինակիս, մանաւանդ զի չունիմք «զքաւական նիւթս առ նմին ձեռնարկ, այլ սակաւուք ուզեմ յայտնել կամիմք զմտան «գործոյ նորա, որք եղեն մեզ ծանօթ։»

«Մեսրովբ Դաւիթ Թաղիադեան ծնեալ էր՝ի Կարբի, որ յերևան և անեալ ի «սուրբ աթոռն Էջմիածնի, առ ժամանակաւ Սրբազնասուրբ Կաթողիկոսին Եփրե-«մայ, ուր և ձեռնադրեցաւ սարկաւագ։ Իրրև յամի 1823, եկն՝ի Հնդիկս յերևա-

նակը: Տիրացուն նկատեց, որ այս ձայնը տպաւորութիւն գործեց կոմսի վերայ, վանդոյց և ասաց, «ես լսմանուամեմ թէ ով է դորա ածողը. ահա, այն սպիտակ տանիքն է լսվուամ..... Պահակի թովմասի տանից, նորա դուստրն է ածողը»: Ապտալև մի վայրկեան նից յետոյ լսվեցաւ մի քնքուշ և թարմ կանացի ձայն, որ երգում էր.

«Ալվոզ համատարած
Զաղգ մեր արտահալած
Փոյթ գուսարեա.
Ցաշխարհ Արարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեպհական
Օտար աղգաց»:

Գալձեալ մի տխրութեան ամպ անցաւ կոմս Լմմանուէլի երեսի վերայով: Ալս խեղճ մարդը դարձել էր մի ամենազգաստ

«սարդութեան հասակի և միջնորդութեամբ Տեառն Աբրահամու ծայրագոյն նուի-
«րակին Երուսաղեմի, եմուտ ի համալսարանն եկեղեցական ուսանել զննգղեերէն,
«ուր թարգմանեաց ի մեր լեզու և ի լոյս ընծայեաց զՀուգօ Գրովտիոսի ճշմարտութիւն
«քրիստոսական հաւատոյ, զգործ ընծիր: Ցետ սակաւուց ելեալ անտի եկաց երրորդ
«վարժապետ ի մարդասիրական ճեմարանի միրուամ»:

«Ապա գնացեալ 'ի Հուղայ կարգեցաւ գլխաւոր վարժապետ գպրոցի որ անդ,
«զամս յոլովս: Անտի էոդաւ ի կողմունս Տաճկաստանի և կացեալ առ ժամանակ մի
«ի Կոստանդնուպոլիս, շրջէ վտարանդի ընդ Հայս և գալոս և վերադառնայ միւսան-
«գամ 'ի Հնդիկս»:

Զարմանալի բան է. այս մարդու (Թադէոսեանցի) և Ալովեանի կեանքը շատ նմանութիւն ունին միմեանց: Երկուքը ևս դուրս գալով Էջմիածնից գնում են օտար և հեռաւոր աշխարհներ և ուսանելով իսկոյն վերադառնում Էջմիածին. ինչո՞ւ համար. մի գպրոց հիմնարկելու, ստացած լոյսը ազգի մէջ տարածելու համար: Ալովեանը կատարեց երկրորդ անօգուտ փորձը, որի առաջինը կատարել էր Թադէոսեանցը: Սա վերադարձաւ Էջմիածին Ցովհաննէս Կաթողիկոսի ժամանակին (1835—1840) և աղաչելով պաղատելով, սորան միջնորդ և միասին բարեխօս բռնելով կարողացաւ որպէս գլխաւոր ուսուցիչ մտանել Էջմիածնի գպրոցը: Բայց ի՜նչ ուսուցչութիւն. ի՜նչ նշաւակ այս եռանդուն ջանքի հետևանքը: Կարճ միջոցում ստացաւ նա, ինչպէս սովորական է Հայերի մէջ, մի ահագին բազմութիւն թշնամիների, որոնցից գլխաւորքը էին Սիւնհոդոսի պրօկուրոր Ալօրդանեանցը և ատենադպիր Քարտաշեանցը: Ի՜նչ զրպարտութիւնք, ի՜նչ հալածանք բարձրացաւ այնուհետև խեղճ Թադէոսեանցի վերայ: Ցուբա սենեկի մէջ, փայտ չէր ատանում վառելու, ահա մինչև այս վիճակին հասաւ նորա թշուառութիւնը: Ոչ ով տաք արտով արժան չէր համարում նայել գպրոցի և հետևաբար նորա գլխաւոր վարժապետի կամ կառավարչի վերայ: Ցովհաննէս Կաթողիկոսի իշխանութիւնը հասած էր վերջին աստիճանի թուլութեան: Ուխտեքեանց (այսպէս անուանուէին Էջմիածնումը այն ուխտն ալեզդանները, որ ապստամբվել էին կաթողիկոսից և բողոք էին գրել դեպ ի Ռուսաց Տէրութիւնը) վանական գոր-

ծանրոչափ — բարօրեալ ազգային բաների համար, որոնց և վերջինը, ամենաթեթևը մեծ ազդեցութիւն էին դործում նորա վերայ: Մի րոպէի մէջ ուղղելով իւր պլպլված դրութիւնը, ասաց, — ա՛ա, Մահտեսի Յովհաննի տանից. ուրեմն օրիորդ Մարիամն է ածողը:

«Ի՞նչպէս դուք գիտէք և անունը», հարց արեց տիրացուն. «դուք ձանաչո՞ւմէք նորան»:

— Ա՛յո, — պատասխանեց կոմսը, — ես այսօր առաւօտ ևս այն տեղ էի, և օրիորդ Մարիամը ածեց իմ համար պոլոնէզ-Հաֆ անունով ողբերգութեան դեղեցիկ ներածութիւնը: Ես չգիտէի, որ ունի նա «Տէր կեցո» ի նօտերը, ասա թէ ոչ, խնդրած կը լինէի ածել այդ ևս, ըստ որում շատ սիրում եմ այդ տաղը:

«Ձշմարի՛տ է, լաւ տաղը շատ լաւ բան է: Բայց իմ տաղարանի մէջ չկայ այս, չնայելով, որ բաւական հարուստ տաղա-

---

ծակատարութիւնը շուարեցուցել էր Յովհաննէս կաթողիկոսը, և ամենամերձ եպիսկոպոսքը, որք դեռ ևս բարերարված էին կաթողիկոսից, հարազատ չէին սորան թէպէտ և առ երեսս լարեկամ և գործակից: Քարտաշեանցը սկսել էր մի երկար ու ձիգ կռիւ Ներսէս Աստչնորդի հետ, Լուսաւորչական և Գրիգորեան, Սիւնհոդոս և Սինօգ բառերի մասին: Ներսէս Արք եպիսկոպոսը գրուածք ի Գրիգորեան Հայոց Սինօդն, Քարտաշեանցը պահանջուեր որ գրե ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն: Սորանից չոկ ուրիշ այլ բաների մասին, մինչև որ բողոքել դեպ ի Մինիստր Բլուդովը: Ներսէս սրբազանի պատասխանը այս բողոքի ընդդէմ հասաւ Բլուդովի յաջորդի կոմս Պերովսկու ձեռքը: Շատ չանցաւ սորա վերայով, Ներսէսը կաթողիկոսացաւ, և Քարտաշեանցը իսկոյն դուրս եկաւ սիւնհոդոսի ծառայութենից: Ինչ և իցէ: Ահա այսպիսի մի ժամանակում կացաւ Թաղիադեանցը Էջմիածին: Վերջապէս տեսանելով, որ ոչինչ հնար չկայ մնալու, ստիպվեցաւ վերսին դուրս գնալ Ամիռից:

Մի փոքրիկ անցք, որ պատահումէ սոյն այս միջոցում, աւելի ճշդիւ պատկեր է տալիս Թաղիադեանցի վառ աշխուժի մասին:

Վերջին անգամ գնում էր Յովհաննէս կաթողիկոսի մօտ հրաժարական ողջոյն տալու: Վեհարանում գտանվում էին եղած, հին ժամանակներից կաթողիկոսին ընծայ ուղարկված, ձախարակեայ մարմարիոնեայ թզքամաններ: Սորանից մի փոքրը և դեղեցիկը, կաթողիկոսի Սարկաւագը չկնել է թանաքաման: Թաղիադեանցը տեսանելով այս փոխարկութիւնը թզքամանի դեպ ի թանաքաման, անպատրաստից ասում էր հետևեալ տաղանաւորը:

«Երբ թզքաման, թանաքաման
Դարձեալ եւես այս Վեհարան,
Զինչ այլ քեզ յոյս ասել ինալ
Մեսրոպ Դաւթեան Թաղիադեան»:

բան ունիմ, չնայելով որ Խաղդասար Խալիֆայի քոլոլ տաղերը. Օվ֊ա քո սիրոյն, Արիք որ երթամք, գարունն է բացուել....

Նրդի կախարդիչ շարունակութիւնը ընդհատեց իմ տիրացուի բանասիրական քննութիւնը. լսեմ՝

«Լռաքեա՛ ի բարձանց
«Հնամակցութիւն կամաց
«Ի մերազնեայս
«Զոմն ի մէնջ յարո՛
«.... ազգի մերոյ
«Տուր նմա ցուպ հուժկու
«Հովուել զմեզ»։

— Չէ, — ասաց կոմս Լամմանուէլը, — չէ կարելի, որ ես մի րոպէ չմոռանիմ Մահտեսի Թովմասի տունն։ Մնացէք բարեաւ. ներողութիւն, որ չեմ կարող աւելի երկար ընկերակից լինել ձեզ։

«Յամի 1845, յամենայն օգոստոսի օժանդակութեամբ Արարատեան ընկերու֊
«թեան սկսաւ հրատարակել զԱզգասէր լրագիր. սակայն զբաւումն ի կենաց միոյ և
«ախորժութիւնք միւսոց ընկերացն քակտեցին զընկերութիւնն վաղվաղակի։ Բայց
«եաւնդ հանգուցելոյս ոչ շինեալ. այլ շարունակեաց զտպագրութիւն լրագրին մինչ
«ցամն 1852 ամի։ Թէ որքան վառ եր եաւնդ նորա յայսմիսի գործ, և որքան ժիր
«յաշխատութեան, գործք իւր ինքեանն յայտնեացեն քաջ։ Զի ի միջոցի եօթն ամաց
«սակաւուց բաց ի տպագրութենէ Ազգասէր լրագրին և ի կառավարութենէ առան֊
«ձին դպրոցի իւրոյ, ի լոյս ընծայեաց և զչետագայ գրեանն յօրինեալս յիւրմէ։
«Այբբենարան, Դաստիարակութիւն օրիորդաց — Ճառ, Ճանապարհորդութիւն ի
«Հայս, Պատմութիւն Պարսից, Սօս և Սօնդիոլի բանաստեղծութիւն չափեալ, Վար֊
«անիկ — Ստեղծաբանութիւն արձակ, և քերականութիւն Համառօտ»։

«Եւ թարգմանեալս։

«Առաքք Պարսից, Առաջնորդ մանկանց և Վարդգէս։ Թողեալ զտպագրութիւն
«այլոց վեշտասան մատենից, որք ընդ վերակացութեամբ իւրով տպագրեցան, ունի
«և զայլ գործս թարգմանեալս և ի լոյս ընծայեալս աստ, նախ քան զկազմիլ ընկե֊
«րութեան Արարատեան. որք են վերոյիշեալ Դրուագք հնոց, Դիւցազնութիւն, Պա֊
«ղեստին — Ի. Հիբերայ — Յաթեալ, և Պատմութիւն հին Հնդկաստանի։ Ունէր և
«զայլ գործս բանաստեղծականս և զօրագիր ձեռագիր Ճանապարհորդութեան իւրոյ,
«զորս ոչ ժամանեալ ի լոյս ընծայել, տարաւ ընդ իւր, և որք հասցեն արդեօք ՚ի
«Հայս ընդ այլոց մատենից, թէ ի Ընդրազ անդ անհետ եղիցին, չկարեմք ամենևին
«դուշակել»։

«Ուրախ ի վախճան 1857 ամի, հիւանդագին և տկար եղ, ասուի վերադառնալ ի
«Հայս և զինացեալ աւուրս իւր նուիրել գաստիարակութեան մանկանց ազգիս, և
«հասեալ ի Ընդրազ գաւառն անդ յայզօգուտ կենաց իւրոյ ի 10 Յունիսի այսր ամի ի
«հասակի իրրև 56 ամաց. կտակելով զհազարաւոր մատեանս, պատանեալս թէ ին֊
«քեան և թէ Արարատեան ընկերութեան, Սրբազան առաջնորդին Սրբոյ Ամենափրկչի
«վանաց, որ ի Հայս, ուր և հասեալ իսկ են, և զայլ սատարուածս իւր ընտանեաց
«իւրոց, որք բնակին Ներևան քաղաքի»։

«Ո՛չինչ, ո՛չինչ», պատասխանեց տիրացուն կակազելով և բոլորովին մեքենաբար, առանց հասկանալու ասածի խորհուրդը:

Կոմս Նմմնանուէլը մտաւ Մահտեսի Թովմասի բակը:

Ընդհն երեկոյեան ժամը ինն էր համարեա, և շամանդաղը սկսումէր փոքր առ փոքր գետինը առնուլ: Դատարկ փողոցի մէջ լսվումէր մի բարձրաձայն երգեցողութիւն. «Յ՛որ քահանայն և Ղևտացին հանդիպեալ զանց արարին, աւաղ ո՛հ....

Էյդ տիրացուն էր, որ, տաղերի մասին խօսելուց ոգևորվելով, ցոյց էր տալիս անմարդացած փողոցի պատերին իւր երաժշտական քանքարը:

Էյս տեղ հարկաւոր է չմոռնալ առանց յիշատակի այն, որ միւս առաւօտը, որի օրամոի մասին խօսեցի, պաշտօնական լուր էր այդ քաղաքի պառաւներին բերանում, թէ կոմս Նմմնանուէլը կամի նշանվիլ Մահտեսի Թովմասի դստեր հետ:

«Եթէ յարդի լինէր գրագիտութիւն և ի միջի մերում հարիւր մասամբ չափ «Եւրոպացւոց, աշխատութիւնք սորա յոյժ աւելի լինէին քան որք եղենն. զի վկա- «յեալ եմք բազմից, ընական ակնոյժ եռանդեան նորա, որ նատեալ ընդդէմ բա- «զում խիստ դիւրութեամբ և ընտիր հայկազանութեամբ ի միջոցի սակաւ «ժամուց առանց ընդվզոյ գոգցես և զքառ մի»:

«Ընդժեալ ի տխրութենէ պրտիս, զյետագայ ողբերգն նուիրեմ վսեմ հոգւոյն «այնմիկ, որ յուսամ երկնային պսակին արժանի եղեալ, սակս յարգելոյն զտաղանդն «աւանդեալ ինձեան, յօգուտ և խիտաս եղբարց իւրոց»:

«Եւ դու Մեսրովբ, անդի՛ն Մեսրովբ,
«Եւ դու այդպէս վաղ հանգեար.
«Ի վշտալից աշխարհէս մեր,
«Ցերանաւէան ճեպեցար:

«Վաստակեցաւ, այո՛, մարմինդ,
«Այլ ոչ հոգիդ, ես գիտեմ.
«Ընդմա՛հ հոգիդ միշտ աննկուն,
«Միշտ վառվռուն, միշտ վսեմ:

«Ափսո՜ս Մեսրովբ,— խնդէս բազումք
«Ափոսացին այսուհետ,
«Որոց հոգի ազդիս վառայ
«Նախանձաւոր իցէ երբ:

««Մեռի՛ր, յետոյ սիրեմ զքեզ»
«Այլք ասասցեն, այլ ոչ ես.
«Ես սիրեցի զքեզ կանխաւ,
«Ա՛զդասիրա՛ւդ վկայես:

Մարդ ու աղջիկ, որոնց մասին յիշեցի վերևումը, պատուհանից տեսել էին կոմսի մտանելը նոցա տուն։ Հայերի մէջ մի անսովոր բան չէ, մանաւանդ կանանց մէջ, այսպիսի հիմքերով պրական բան խօսել։

ԹՈ.

Մահտեսի Թովմասի տանը կային շատ հիւրեր, ալք և կանայք, երբ ներս մտաւ կոմս Նամմանուէլը։ Մի փոքրիկ յետոյ կը ծանօթացնեմ իմ ընթերցողքը Մահտեսի Թովմասի տան հետ, այժմ Թողնք, որ չխոչեմ բանի թելը։

Կոմսը ներս մտաճ, չմտաճ, բոլորեքեան ամբոխվեցան, վեր կացան տեղերից և օրհնուդ Մարիամը նոյնպէս դադարեցով եր-

---

«Ոչ ախտաւոր վան քո ինչ,
«Զի դու գերծար ի ցաւոց.
«Զարդիւնաշատ աւուրս քո
«Ազգին ի սպաս զոհեցով։
«Որքան կայցէ լեզուս հայոց,
«Որքան կացցէ և մեր գիր,
«Պայծառ անուն իմ Մեսրովբիդ
«Անմահասցի անխափ։
«Այլ ախտաւոր վան ազգիս,
«Որ քեզ պէս մարդ արդ կորոյս.
«Որոյ նման հազուագիւտ է,
«Հայիմ յոր կողմ և ի կոյս։
«Զի բանաստեղծ, ի բնութենե
«Գարէ մկայն ծնանել.
«Տաշեալ կոկեալն արհեստիւ
«Ո՛չ կարէ յայն ժամանել։
«Դու բանաստեղծ և ճարտասան
«Միանգամայն յայտնեցար,
«Թէև անձուկ էր ասպարէզդ,
«Սակայն ոչինչ վերջացար։
«Աշխարհանաղ Սօս Սօգիպի
«Եւ Ազգասէր լըսգիր,

դէլուց և աճելուց, սկսեց ողջունել նորեկ հիւրը: Կոմս Լամմանուէլին շատ անախորժ երևեցաւ այս· ըստ որում այն տեղ, ուր մտանում էս, որպէս մի մօտ ծանօթի տուն, շատ անտեղի են ազատքին քաղաքավարական սրամտութիւնքը:

Կոմս Լամմանուէլը բոլորին ողջունելուց յետոյ դէմքը դարձուց դէպ ի օրիորդ Մարիամը և ասաց՝ —Նա, յատկապէս ներս մնայ, որ լսեմ «Տէր կեցո՛ն» բայց դուք դադարեցաք խոհոյն: Այժմ կրկնատրիկ եղաւ իմ ցաւը, նախ, որ ես չեմ լսում, երկրորդ որ իմ անակնկալ ներս մտանելու պատճառով այս սրտոյ հիւրերը ևս զրկվեցան այդ քաղցր երգի վայելքից, որ շատ գեղեցիկ երգում էք:

«Խնդրեմ, առանց հաձոյախօսութեան.... ես ի՛նչ երգող իմ· այնքան հրատարակի մէջ, ամօթ է մինչև անգամ իմ պէսին երգել» պատասխանեց օրիորդը մի փոքր կարմրելով: Բայց բոլորովին սուտ էր խօսածը· նորա կարծիքը իւր երգածի մասին

«Բաւական են ի հաստատել,
«Զոր ասացի, լեալքը:
«Ոչ է ինձ հարկ թուել զամեն
«Զգործ մատանցդ ձարտար,
«Ժամանակաւ, կնի իմ
«Ձկայեցէ և աշխարհ:
«Բայց ե՛կ Մեսրովբ, ե՛կ ասա՛ ինձ
«Հի՞մ առ օտարս ետուր վազ·
«Ո՞ր Հայաստան քո հայրենիք
«Եւ ո՞ր Պարսիցն Ճիրազ:
«Ցողքալ զքեզ լամ և զիմ ազգ,
«Ձտարանդի ցան ու ցիր·
«Ընդ ամենայն ոլորտս երկրի
«Քան զիարապէլ տարագիր:
«Իմ ընտանեացս պատմութիւն
«Կարճեմ ուղիղ օրինակ
«Ի իմ ազգիս, որք յայսքան դարս
«Զարչարին տարբ օրինակ.... և այլն և այլն:

Այս վերջին պարբերութիւնը համարեա թէ նոյն խօսքերն են, որ Եւժէն Սիւ ֆրանսիական հեղինակի «Թափառական Հրեայի» մէջ խօսում լինը Թափառական Հրեայն:

Սրանից յետոյ շարունակվում քանի մի այլ պարբերութիւնք յարակցութիւն չունենալով թաղիադեանցի հետ, հարկաւոր չհամարեցի դուրս գրել:

ամենևին այնպէս չէր, ինչպէս կամէր հաւատացնել կոմսին։ Այս էր լուրը, որ նորա առաջև կանգնողը ևս շատ խաբվելու պատրաստ չէր. նա ինքը մի բան սրտի վկայութեամբ ճանաչելուց և դնահատելուց յետոյ, հաղար պարկեշտութիւն, հաղար չքմեղութիւն չէին կարող փոխել նորա կարծիքը։

— Ամենևին ղուր էք խօսում, — պատասխանեց կոմս Նիմնանուէլը, — և ես չէի կարող երբէք երևակայել, որ դուք ընդունակ էիք հանել բերանից, երբ և իցէ, մի անարդար վկայութիւն ձեր մասին։ Առանց կեղծաւորութեան ասումեմ, դուք շատ գեղեցիկ երդումէք, և ոչ միայն ձեր, այլ և ձեր բարեկամների տան մէջ ևս կարծում էք երդել, եթէ մի խնջոյք կամ մի բան պատահի։

«Հասու չնորհակալ իմ. բայց չեմ կարող ընդունել ձեր ասածները հալած իւղի տեղ, ըստ որում ես ինքս նկատումեմ զանազան թերութիւնք իմ երդեցողութեան մէջ»։

— Ա՛, ա՛, ես այժմ տեսանումեմ, որ դուք կամէիք ոչինչ թերութիւն չունենալ երգելու մէջ, այդ այլ բան է. ես խօսումեմ համեմատաբար։ Այո՛, կատարելութեան ցանկութիւնը մի գեղեցիկ առաքինութիւն է, և եթէ դուք այդ աչքով նայումէք խնդրի վերայ, ուրեմն թոյլ տուէցէք ինձ ասել ձեզ իմ կարծիքը և խորհուրդը։ Ինչքան, այսօր առաւօտ ձեր տան մէջ, և այժմ փողոցից լսելով, նկատեցի ձեր երգածը, ձեր կոկորդային լաւ խաղը կարօտ է մի փոքր մշակութեան։ Ու առ ժամանակ

Առ հասարակ, թո՛ղ հաճի պարոն Ավետումեանը ընդունել իմ առ ի սրտէ անկեղծ շնորհակալութիւնը այս յօդուածի մասին, որով կամեցել է պատուել մեր քաղքարաւոր հեղինակի յիշատակը։ Շնորհակալութիւն և Արշալոյս պատուական օրագրին, որ իւր թերթերի վերայ հասուց մեզ այս, թէև տխուր բայց սրտերիս խիստ մօտ ճանաչութիւնքը։ Աղաչումեմ Արշալոյսը, միշնորդ լինել իմ և պարոն Ավետումեանի մէջ, և իմ շնորհակալութիւնը յայտնել նորան նոյնպէս Արշալոյսի միջնորդութեամբ։ Խորհուրդս այն է, որ յարգելի պարոնը մխիթարվի, լսելով, որ իւր ողբացած թաղեակցի յիշատակը յարգելի է մեզ լսողիս և թէ նորա գեղեցիկ յօդուածը ղուր չէ գրված հայերի համար։

Աղաչումեմ և Ջուղայու Սուրբ Ամենափրկիչ անունով վանքի Սրբազան առաջնորդը աշխատութիւն յանձն առնուլ հոդաբարձու լինել, որ Թաղեադեանցի գըրչագիր մնացած աշխատութիւնքը պահպանվին կորստի և ժամանակի երեսից։

Յաւելի լսան, հայերի անգրագիտութեան մեղքից յառաջացած մի դառն հեռանք, որ մեր հեղինակներից (հին և նոր) շատերի աշխատութիւնը ծնանելով, այլ դեռ ևս հրապարակի լոյսը չտեսած, դատապարտվումն դէպ ի մահ — դատապարտվումն որ վանական խցերի անկիւններում թաղվին փոշիների տակ և որդնակեր ու ցեցակեր ոչնչանան։

Եա խորհուրդ չեմ տալիս ձեզ երդել այնպիսի բաներ, ուր շատ կային ցած լաղեր, այդ կարող է վնասակար լինել ձեր ձայնին: Խնդրեմ այս ասածներս ընդունել, որպէս մի բարեկամի խորհուրդ, և ոչ որպէս պատուէր կամ խրատ. ես առ հասարակ սովորութիւն չունիմ իմ խրատներով դլխացաւութիւն պատճառել օրիորդներին, — յաւելացուց կոմսը ծիծաղելով:

«Շատ ընորհակալ իմ: Ես ինքս բաւական նեղութիւն ղգուեմ ցած լաղեր երդելու ժամանակ, վասնորոյ իրաւունք տալով ձեր դիտողութեանը, կ՚աշխատեմ օգուտ քաղել նորանից. սակայն այս է բանը, որ չեմ հաւատում, թէ կարող էի երբ և իցէ հասանել այն աջողակութեանը, որ տանելի կերպով երդէի»:

— Իւր անձին վերայ հաւատ չունենալը — ասել է անարդել իւր անձը. իսկ իւր անձը ինքը անարդողը կորուսանում ուրիշներից յարդանք պահանջելու իրաւունքը: Գիտէք այս, օրիորդ մարիամ, — ասաց կոմսը ծիծաղելով:

Օրիորդը շատագունեցաւ և դարձ՚վնճի աւելորդութիւնը, տեսանելով, որ բանի տեղ չէ անցանում իւր կատակելը:

Միւս կողմում, բոլոր հիւրերը կանդնած լսում էին այս խօսակցութիւնը. երբ որ վերջացան, նոյնի բոլորիքեան նստան իւրեանց տեղերը և կոմսը աթոռը մօտ քաշելով Մահտեսի Թովմասին ասաց. — Օրհնած, եթէ օրիորդ Մարիամը ունէր Տէր կեցո՛ ի նօտերը, ինչո՞ւ չասացիք առաւօտ, որ մի լոպէ աւելի յառաջ վայելած լինէի այդ երդը լսելու երջանկութիւնը:

«Ուրաւօտուն չկայ, և մի՛ օտարոտի բան պատճառ եղաւ, որ գնեցի երգարանը [1]: Մի մտդ, այսօր առաւօտ, ձեր քամակից ներս մնաւ մեր տունն, լաւ որ Մարիամը տանն էր, որ կարողացաւ ֆրանսիարէն խօսել, ապա թէ ոչ, անհնարին պիտի լինէր միմիանց հասկանալ»:

---

[1]) Մի օրինաւոր հայոց երգարան, առաջին անգամ տպվեցաւ Պետերբուրգ Պ. Գամառ-Քաթիպայի աշխատութեամբ: Շատ տաղերի նօտերը ևս տպած են քամակում: Շնորհակալութիւն, Պ. Գամառ-Քաթիպային. դուք այսուհետև հայերի ուրախութիւնը կամ տրամութիւնը յայտնող երգերը լինին ազգի պտի և հոգու բղխուածք, և դադարին Բեթռովղեսի Ալվազի տաղերը երգելուց: Թեպետև պիտի ասել, որ մեր երգերը ևս մի երևելի բան չեն, բայց ինչ պիտոյ է առնել, առ ժամս չեղածից լաւ են, և կարող են գործ դրվիլ, մինչև որ դուրս գան օրինաւոր ազգային բանաստեղծք:

Կոմս Նէմմանուէլը լսելէ իւր ուշադրութիւնը այս պատմութիւնը լսելու համար։

«Նոյնպէս է այդ մարդու ազգը», շարունակից Մահտեսի Թոռմասը,» բոլոր Եւրոպա մեն է եկած, վերջումը պատահել է և Պետերբուրգ, կալծեմ Մոսկվա ևս, այժմ ձանապարհի վրայ անցանելով այս քաղաքից, բայց ոչինչ ծանօթ չունենալով, այլև ստուգած լինելով, որ այս տեղ շատ սակաւ մարդ կայ ֆրանսիագէտ, եկել էր մեր տուն, որ ինչ ասես բաներին մասին խօսէ»։

— Այդ նա ուստի՛ դիտէր, որ ձեր տանը կայ ֆրանսիագէտ, — հարց արեց կոմս Նէմմանուէլը, — այս շատ զարմանալի բան է, շանկարծ, ոչ այն, հաղարաւոր ֆրանսիարէն չհմացող տուներից ուղղակի մի տուն մտանել, ուր խօսումէին այդ լեզուով։

«Նա ևս զարմացայ, երևի այդպէս պատահել է.... ինչ և իցէ, խնդրեցի որ նստի, սրդէն ժամը տասներկուն էր, խոկոյն ղահվէ մատուցինք, խմեց և խօսեց երկար միջոց Մարիամի և իմ հետ, (Մարիամի թարգմանչութեամբ)։ Ինձ ասաց, որ շատ կը ցանկանար լսել մի Հայոց երգ, փորձելու համար, թէ ինչ տպաւորութիւն կը գործէր իւր վերայ Հայոց երգը. ես խոստացայ լցուցանել նորա ցանկութիւնը։ Մի փոքր նստելուց և քաղաքի որպիսութեան մասին այս և այն տեղեկութիւնքը հարցանելուց յետոյ, դնալու ժամանակ խնդրեց ինձանից, թէ երբ կարող էր գալ մեր տուն մի Հայոց երգ լսելու համար։ Ես ժամանակ նշանակեցի էգուց առաւօտ դարձեալ տասներկու ժամը, եթէ կարող էք, դուք ևս շնորհ բերէք»։

— Ինձ ուրախութեամբ կը գայի, բայց կարող չեմ, որովհետև այդ ժամին հիւր պիտի ընդունեմ իմ մօտ, — պատասխանեց կոմսը։

«Ինչ այս պատճառով դնացի դնեցի Հայոց երգարանը, որի մէջ Մարիամն որոնեց որոնեց, այդ տաղից աւելի ամենևը, աւելի հաւանելին չգտաւ»։

— Օրիորդ Մարիամը յոյժ է տուել դորանով իւր ճաշակութիւնը, — ասաց կոմսը։ — Ուրեմն այս սերտողութի՞ւն էր, որ կատարումէիք, — շարունակից նա դառնալով դէպ ի օրիորդ Մարիամը։

«Ա՛յո՛», պատասխանեց օրիորդը։

— Ձի՛ կարելի, որ վերստին կրկնէք, աւելի լաւ է, Repetitio est mater studiorum, ասում էր առածը, — յաւելացուց կոմսը, ժըպտելով։

«Ինչո՛ւ չէ կարելի», ասաց իսկոյն Մահաեսի թովմասը և նշանացի պարոց դստերը, որ մօտ դնաց Ֆօրտօպիանին։

Օրիորդ Մարիամը սկսեց ածել և երգել։

Նըրկեցողութեան ժամանակ, մի բան շատ անախորժ տպաւորութիւն գործեց կոմսի վերայ, այդ էր, որպէս հիւր նստած կանանց միմեանց հետ բարձր ձայնով խօսելը և ծիծաղելը, մինչև երբեմն երբեմն խափանելով ոչ թէ միայն երգողն այլ և Ֆօրտօպիանօի ձայնը։ Այս յառաջանումէր նորանից, որ իրրև ասիացիք ոչինչ հասկացողութիւն և համակրութիւն չունէին կանոնաւոր երաժշտութեան հետ, այլև չէին հասկանում տաղի խօսքերը նորա լեզուի հնութեան պատճառով [1]։

Յաւելի է մեր ազգի դրութիւնը ընդհանրապէս, բայց մասնաւոր արտասուքի արժանի են Հայ կանայքը։ Կեղծերը բոլորովին անկիրթ և անդաստիարակ, հասարակ թէ ապրումն մի միայն բուսական և շնչական կեանքով, իմացականի մասին գաղափար ևս չունին։ Պարզ, գրել, ընդհանրապէս չգիտեն, շատ չնչին բացառութեամբ։ Իւրեանց տանից կամ իւրեանց բնակված քաղաքից դուրս, աշխարհ կայ, չկայ, այդ մասին ևս չունին ոչինչ տեղեկութիւն։ Այսպէս լինելով նորա դրութիւնը, ի՛նչ զարմանք, որ մի տաղ կամ մի կանոնաւոր երաժշտութիւն տեղ չգտանէ նորա սրտումը. ի՛նչ զարմանք, եթէ սառն աչքով նայեն այսպիսի բանի վերայ, առանց որ և իցէ գաղափար ունենալու ազատական արուեստների մասին։ Նորա ինչով մեղաւոր են, ով կրթեց ու դաստիարակեց նորանց, և նորա իւրեանց անընդունակութեամբ չըւսաւորվեցան, կամ մնացին վայրենի հասկացողու-

---

[1]) Ես մինչև այժմ չեմ հասկանում, թէ Թաղիադեանցը ի՛նչ խորհրդով գործածական լեզու չինեց իւր մատենագրութեան հանդիսում հին և միւռաճ լեզուն։ Ագաթէր Օրագիրը ևս հրատարակվումէր այդ լեզուով։ Դժուար է հասկանալ այսպիսի անընական գործը, մանաւանդ Թաղիադեանցի կողմից, որ Եւրոպական կրթութիւն ստացած լինելով և այն մի գործական աղդից, ինչպես Անգլիացիք են, չէ մտածել, թէ խօսելու կամ գրելու խորհուրդը այն է, որ ժողովուրդը կարդայ և լաւ հասկանայ։ Ինձ շատ ծանր է թուել Թաղիադեանցը այն հայերի կարգում, որ մտածումէին միեւնոյն գործիք շինել, ժողովրդի մէջ կեանք ներս բերելու համար։

թեան վիճակի մէջ [1]: Նոյնը, իւր մի լոպէ նեղանալը դատապար-տեց իսկոյն, աչքի տակ առնելով այս բոլորը: Եթէ այնքան ոյժ և զօրութիւն ունենար մարդկային քնաւորութիւնը, որ իւր կըր-քի սանձը միշտ ամուր պահէր ձեռքում և ամենայն բանի վե-րայ դատաստան կատարելու ժամանակ անտես չառնէր այն հան-գամանքները, որոնց մէջ գոյացել ու ազել էր դատաստանի տակ ընկած իրողութիւնը կամ անհատը, ապա ուրեմն, անտարակոյս, հարիւրին հօթանասուն պիտի փոքրանար նեղսրտելու և բարկա-նալու պատճառների թիւը:

Վ՛երջապէս, օրիորդ Մարիամը աւարտեց իւր երդելը և ածելը, և, վերստին լսելով կոմս Էմմանուէլի դովեստը, շնորհա-կալ եղաւ նորանից, կատարելով մի խորին բեվեռանս:

— Տեսանենք, — ասաց Մահտեսի Թովմասը, — ի՛նչ ազդե-ցութիւն կը գործէ այս տաղը Պ. Էրումի վերայ:

«Ի՛նչ ազդեցութիւն պիտի գործէ. նա չէ կարող ընդունել դրան, որպէս բուն հայկական ազգային երգ»:

— Ի՛նչ պատճառով:

«Ընդ պատճառով, որ տաղի բովանդակութիւնը նա չէ կարող հասկանալ, ըստ որում չգիտէ հայերէն [2]. միակ տպաւորու-թիւն, որ պիտի գործէր նորա վերայ, այդ էր տաղի երաժշտու-թիւնը — եղանակը, բայց դուք ևս, ինչպէս ես, գիտէք, որ նորա

---

[1]) Ներկայումս փորր ի շատէ զգացել են հայք կանանց տեառ դաստիարակութեան կարօտութիւնը, և այս ու այն տեղ սկսել են երևել մանաւոր դպրոցներ օրիորդների համար: Բայց որովհետև մի անկարգ ազգի ամենայն բանը անկարգ կը լինի, վասնորոյ և հայերը ևս չեն կամենալ դուրս ննալ այս կատեդորիայից: Դպրոց պահողքը առ հա-ւարակ օտարազգիք են և հայ աղջիկները օտարի լեզուով պիտի լուսաւորվին, որովհետև հայոց լեզուն հոտած է: Դատաստարեալ՝ ձգտողութիւն և անկել գործ: Լսեցէք սիրական հայեր, սո՛ւտ է այն լուսաւորութիւնը, որ պիտի լինի օտարի լեզուով. այդ-պիսի դիպուածում, դուք ձեր զաւակները օտարացնումք ձեզանից, նորա օտարի լեզ-ուով դաստիարակվածք, անունով միայն կը լինին հայ. բայց ձեր թոռները գուցե այդ անունը ևս աւելորդ համարեն կրել իւրեանց վերայ: Խելացի եղէք, և ձեր դպրոցների մէջ թող լսվի ձեր մայրենի, կենդանի և նուիրական խօսքը: Երանի՛ թե ձայնս տեղ հասանէր:

[2]) Ի՛նչ կայ հայերի դպրութեան մէջ, որ օտարազգին ցանկանայ հայոց լեզուն ուսանել: Մի չար բաղդով հայկական մատենագրութիւնը, այս բոպէիս, չէ կարող հայերին ևս ծառայել, որպէս կամուրջ լուսաւորութեան, թէև հայերը չկամին այս բանի վերայ մտածել, չկամին վաստակել մի պարծանք, հայկական խոպան և անշէն անապատը մշակելով — հայկական դպրութեան ճիշ ուղ և ծուռ գնելով, որ ազգի զաւակը կարողանար իւր իմացական քաղցը կշտացնել իւր յատուկ ազգային հացով:

եղանակը հայկական չէ։ Ընտարակոյս, նա ցանկացած էր լսել մի այնպիսի երաժշտութիւն, որից կարող էր մի գաղափար ծնուել ցանել իւր մէջ Հայոց ազգի երաժշտական ճաշակի համ հասկացողութեան վերայ, բայց բանը այս է, որ մեք աւելորդ չունինք երաժշտութիւն»։

— Ապա հնուց մնացած տաղերը՞ և խաղերը՞։

«Հոգա եղանակների մեծ մասը թուրքից է առած. միւսները, նայելով թէ ժողովուրդը ինչ ազգերի մէջ բնակվել էր, ուրիշներից։ Դա մեզ գալով շատ հայաբնակ տեղեր, շատ աշխատել եմ, որ բոլն հայկական մի բան կարողանամ լսել, բայց այդ բանը մինչև այժմ չէ յաջողվել ինձ»։

— Ակնդեցական երգերի կամ շարականների մասին ի՛նչ է ձեր կարծիքը։

«Հոգա բոլորի արմատական բնաւորութիւնը բիւզանդական է, որ եթէ այժմ մի փոքր դուրս ևս եկել է բիւզանդական շէշտութենից, այդ պատահել է բոլորովին ակամայ։ Պատճառ երգեցողութեան դպրոց չլինելով, ամեն մարդ իւր կարողացածի կամ իւր հասկացողութեան պէս երգելով փոքր ի շատէ հեռացել են այդ եղանակները յունական դաղափարից, թէև կան նոյնպէս մի քանի ձայներ, որ մինչև այժմ հարազատ են յունականին, ղոր օրինակ եփրէտ յոյնը։

— Ո՛րեթէ Հայերը չունեի՞ն յառաջուց կրօնական երգեցողութիւնք։

«Տարակոյս չկայ, որ մի բան ունեցել են, բայց հեթանոսութեան ժամանակ։ Զեզ յայտնի է, որ Հայաստանի կրօնական լուսաւորութիւնը, երբորդ դարում կատարված սուրբ Գրիգոր լուսաւորչի ձեռքով, ծագումէր յունական աղբիւրից։ Լուսաւորիչը մեծ եռանդով քրիստոնէութիւնը վերստին հաստատելով Հայերի մէջ, Տրդատ թագաւորի հրամանով և ղօլքով մեն էր գալիս Հայաստան, մեհեանները — կռքատուններըը, կուռքերը քանդելու և կոծանելու համար, մեհենական գլքերը այրելու և չքացնելու համար, որ հեթանոսութեան յիշատակը ևս չմնայ Հայերի մէջ։ Եթէ նա չէ խնայել այս պատմական յիշատակարանքը, այն հոյակապ արձանները և մեհենական դպրոցութիւնը, որ այժմ մեծ լոյս կարող էին ծաւալել այն խնդրի վերայ, թէ ի՛նչպէս էր նախնի Հայկազնց հայկաբանութիւնը, կա-

լելի՞ է որ Թոյլ տալ հիմնված եկեղեցիների մէջ, քրիստոնէական կրօնի պաշտելութեան յարակից եղած աղօթքները և երգերը երգել թէև հեթանոսական ժամանակից մնացած, այլ բուն աղգային եղանակներով։ Եւ անհնարին էր Թոյլ տալ, որ ժողովուրդը լսէ վերստին այն ձայները աղօթքի, որ դատապարտված էին, անհնարին էր Թոյլ տալ մանաւանդ այն պատճառով, որ շատ տեղեր Հայաստանում քրիստոնէութիւնը ներս մտաւ Թագաւորական հրամանի ուժով, շատ տեղ սուր ևս գործ դրվեցաւ և մի փոքր յառաջ քրիստոնեայ կոտորող ու հալածող հեթանոս Հայերը կոտորվեցան ու հալածվեցան քրիստոնեայ Հայերից։ Մի կողմից հեթանոսականը բաց ձգելով, միւս կողմից հարկաւորաբար քրիստոնէականը — Յունականը պիտոյ էր ներս բերել։ Բաց ի սորանից, շարականները կամ եկեղեցական երգերը, որ լսում ենք այժմ եկեղեցու մէջ, կէս մի դրվեցան Թարգմանչաց ժամանակին, Թարգմանչաց ձեռքով և կէս մի յետոյ, մինչև տասներեքերորդ դարը յաւելանում շարականների Թիւը։ Մեր Թարգմանիչքը ստացան Յունաստանում, և ինչպէս նոցա բոլոր գրուածների ու Թարգմանութիւնների մէջ տեսանվում յունական հոգու ներկայութիւնը, այսպէս ևս եկեղեցական երգերի ձևակտադիրը։ Վերջին ժամանակների երգերը, բովանդակութեամբ միայն զանազանվում են, ըստ որում ոմն ձայները, ինչպէս ունի Յունաց եկեղեցին, վաղուց ահա ներս էին մտած մեր եկեղեցու մէջ։ Հարկաւոր է առանց ուշադրութեան չմտողուկ այն ևս, որ եթէ Հայերի հեթանոսութեան ժամանակ կային մեհենական երգեր ու երաժշտութիւնք, ապա ուրեմն խնդիր ողջմելի բաներ, ըստ որում օրինաւոր բան չէին կարող ունենալ»։

— Ո՛նչ պատճառով։

«Ո՛հ, շատ խոր է դորա պատճառը, և ոչքան խոր այնքան ևս խորին ցուցակցութեան արժանի։ Ո՛նչ հարկաւոր է այժմ դորա մասին խօսք բանալ և տխուր մտածութիւններով կամ քննութիւններով ձանձրացնել և այս պատուհէրքը, որոնք առանց տարտկութեան ախորժակ չունին տխրելու»։

— Ո՛չինչ, ոչինչ. մեղ ամենևին ձանձրութիւն չէ լսել ձեր խօսակցութիւնը, — պատասխանեցին մի քանի ձայներ, հիւրերի միջից։

«Տէսանո՞ւմէք», ասաց Մահտեսի Թովմասը, «ահա նոքա ևս ցանկանումն լսել, Մարիամ ևս հեռի չէ փախչելու լսելոց»։

Այս մասին բոլորովին անընտրող էր օրիորդ Մարիամը, ըստ որում դաղափար ևս չունէր ազգութեան մասին, իւր փոքր իշատէ կրթութիւնը ստացած լինելով մի օտար ազգի դպրոցում։

— Նայ ի դորանից, — յաւելացուց Մահտեսի Թովմասը, դեռ ևս տան ժամը չկայ, թէ տուն գնաս ի՛նչ սիրտ է առնես ոչ ապաքէն ժամանակ է որ անցուցանումենք, եթէ միայն ձանձրալի չէր ձեղ մեր ընկերակցութիւնը։

«Նայց դուք այժմ մի՛ կարծէք, թէ ևս ժամերով քարող ունէի այդ մասին ասելու.... ուր էր այն երանութիւնը, որ հնար լինէր սրտիս վերայի եղածը դուրս տալ և թեթևանալ այն անտանելի ծանրութենից, որ ճնշումէ հոգիս.... բայց ինչ.... առ այժմ այսքան ասեմ ձեղ, որ ազգային երդ, կամ առ հասարակ ազգային երաժշտութիւն ասած բանը պատկանումէ բանաստեղծութեան»։

— Ընտարակոյս, — պատասխանեցին մի քանի մարդիկ Մահտեսի Թովմասի հետ միասին, որով խօսակցութիւնը դարձաւ հասարակաց։

«Յառաջ գնանք, և չդադարինք սորա վերայ», շարունակեց կոմսը։ «Ազգերի բանաստեղծութեան միակ աղբիւրը է նոցա ազգային պատմութիւնը, այսինքն ազգի կեանքը։ Ազգային է բանաստեղծութիւնը, եթէ բովանդակումէ իւր մէջ ազգին պատկանած բաներ, եթէ այդ բանաստեղծութեան սկզբնական տարրը է մի իրողութիւն կամ թէ անձն, ազգին պատկանած. նոյնպէս, ազգային է բանաստեղծը, եթէ երգումէր կամ գրումէր մի այնպիսի բան, որ անմիջական յարակցութիւն ունէր ազգի հետ, ազգի իմացական և բարոյական կեանքի հետ. այս չէ կարելի հերքել։ Բանաստեղծութիւնը պիտի որ հոգի ունենայ, կեանք ունենայ, և այս կեանքը նա կարող է ստանալ մի այնպիսի բանից որ կեանք ունէր, որ ապրումէր, ոչ որպէս մի հանք կամ մի երկրաւտական մումիա [1]), այլ որպէս գործարանաւոր էակ յառաջ էր գնում

---

[1]) Կարելի էր հարցանել, մի՛թէ հանքերը կամ եգիպտական հազարամեայ մումիայքը ապրումեն. սորան կարելի է պատասխանել, թէ անգործարանաւոր էակների կեանքը երևումէ նոցա անձնապահութեան մէջ։ Որքան ժամանակ կայ նոցա մէջ ար-

իւր կերպարանագործութեան մէջ։ Ինչպէս ազգն է, ազգի կեանքն է, այնպէս է և նորա պատմութիւնը, իսկ ինչպէս պատմութիւնն է, այնպէս է և նորա բանաստեղծութիւնը»։

«Մի՛ նայէք այն արտաքին զանազանութեանը, պատմութեան և բանաստեղծութեան մէջ, որ երևումէ մի անփորձ աչքի, թէ պատմութիւնը մի յիշատակարան է ստուգապէս կատարված իրողութիւնների, կամ այդ գործերի մէջ գտանված մարդերի, իսկ բանաստեղծութիւնը դուրս է դալիս իրական աշխարհից։ Այո՛, պատմութեան առարկէղը է մի միայն իրական աշխարհը, բայց բանաստեղծութիւնը չէ կարող դորանով բաւականանալ։ Նա բարձրանումէ իրականից դէպ ի մի այլ անչափելի տարածութեամբ լայն աշխարհ — մի անվերջ կամ հոգևոյն աշխարհ։ Պատմութիւնը աւանդումէ մեզ ամբողջ կարգ իրողութիւնների, որ կատարվեցան որպէս հետևանք ազգերի կեանքի պահանջողութեան, որպէս հետևանք այդ ազգերի կերպարանագործութեան քաղաքական հանդիսում։ Պատմութիւնը քննումէ այդ անցքերի բնական և լոդիկական պատճառները, առանց տեղ տալու իւր էջերի վերայ վերայականութեան. և մի իրողութեան ստուգութիւնը հաստատումէ ուրիշ յարակից կամ երկրորդական իրողութիւնների վկայութեամբ։ Իսկ բանաստեղծութիւնը օգուտ է քաղում մի ծայրացեալ աղատութենից և ստիպված չէ ենթարկվել տեղագրական, ժամանակագրական կամ իրողութիւնների կատարվելու հանդէպ հարկաւոր եղած մեքենականութեան կանոններին։ Արդարև պատմութեան և բանաստեղծութեան մէջ կայ այս զանազանութիւնը, բայց դա մի արտաքին բան է, և խորը քննելով խնդիրը, կը տեսանենք, որ բանաստեղծութիւնը էս նոյնպէս ճշդիւտ յիշատակարան է ինչպէս պատմութիւնը։ Պատմութիւնը նկարագրումէ մեզ ազգի հոգևոյն կեանքի այն երևոյթը, որ մարմին առան ու երևեցան իրական աշխարհի մէջ այս և այն կերպարանքով, բայց բանաստեղծութիւնը մարմնաւորումէ, տեսանելի և շօշափելի կացուցանումէ մեզ ազգի հոգևոյն կեանքի այն երևոյթը, որ առանց մարմին ստանալու մնացին ազգի հասկա-*

տաքին ներգործող ուժերի դիմացող զօրութիւն, որով պահպանվումէր այդ հանքերի կամ մումիաների կերպարանքը, այնքան ժամանակ էս ասրումն նորա։

ցողութեան մէջ որպէս լոկ զաղափար, բայց որպէս մի անհերքելի և որոշեալ ղլուխ ազգի բնաւորութեան վերայ»։

«Կանաստեղծութիւնը կատարելագործուած մեր հասկացողութիւնը ազգի հոգու կամ հոգեղէն կեանքի մասին, որ պակասէր թողել պատմութիւնը [1]։ Կրկնում եմ թէ կանաստեղծութիւնը,

---

[1]) Բարի յիշատակի արժանաւոր Արովեանի, Վէրք Հայաստանի անունով, գործը — է ազգային կանաստեղծութեան մի հարազատ գաղափար։ Ինձ մինչև այժմ չէր յաջողվել մի քանի բառ խօսել այդ աշխատութեան մասին։ Ահա այդ աշխատութեան մէջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկայ վիճակը, ազգի հասկացողութիւնը։ Այս տեղ, որպէս մի կախարդական հայելու մէջ ցոյց է տալիս կանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կեանքի անշուք և անմխիթար պատկերները, այն տեղ տեսանում ենք գիւղերի Տանուտէրները, ճանօթանում նոցա հասկացողութեան հետ։ Բարեխիղճ կանաստեղծը հանդիպեցնում է մեզ հոգևոր մարդերի, խօսեցնում նոցա իւրեանց հասկացողութեան պէս այս և այն բանի մասին, պատկերացնում մեր առաջև նոցա ունկնդիրների հասկացողութեան վիճակը, տեսնում ենք այն տխուր յարաբերութիւնը, որ կայ նոցա մէջ։ Մենք տեսանում ենք այդ Պաղտնեան հայելու մէջ հայկական կեանքի մեռած պատկերը, տեսանում ենք, թէ ինչպէս այդ մեռելային դաշտի զանազան կէտերում խլրտում է առաքինութիւնը և հովուական կամ նահապետական ժամանակների հասկացողութեամբ ընդդէմ է զինուորվում այս կամ այն անիրաւութեան, թէ ինչպէս հալածվում է այս առաքինութիւնը և պատճառ է լինում բիւր կաթիլներով արտասուքի։ Նա ցոյց է տալիս Աղաստ ընկերներով, թէ ո՛չ բոլորովին սառել է հայկական արիւնը Հայաստանի զաւակների երակներում, ցոյց է տալիս թէ մի հերոսի հրաւէր, ազգի իրաւունքների, կրօնի և ազատութեան անարգվելու վտիտը մի թշնամուց հանելու համար, դեռ կա տեղ գտանում ազգի երիտասարդների սրտի մէջ։ Ցոյց է տալիս մեզ ազգի ընդհանուրի վհատեալ և յուսահատ դրութենից յառաջացած սառնութիւնը դէպ ի Աղաստ ընկերքը, նոցա կիսասիրտ կանացի ցաւակցութիւնը այս կորիճներին, որով հասկացնում Արովեանը, թէ Աղաստ ընկերների հոգին ընդհանրական չէ բոլոր ազգին, թէ այս ջերմարիւն տղամարդիկը չքնաղատաւած էին սառնարիւն մարդերից, որոնց աչքում ամենայն բարոյական խնդիր կորուսել էր իւր արժանաւորութիւնը, և որոնց միակ քաջութիւնը ամփոփվում էր այն բանի մէջ, որ կարող էին լալ, ողբալ և մորմոքվիլ, առանց որոնելու այդ գրութենից դուրս գալու հնարը։ Տեսանում ենք այն հայելու մէջ գարեկների բարբարոս վարեցողութիւնը մեր խեղճ ազգի հետ, մեր ազգի հարատահարված վիճակը. այս տեղ ցոյց է տալիս կանաստեղծը այն յարաբերութիւնը, որ մի անկիրթ ազգ կարող էր ունենալ դէպ ի մի բռնակալ իշխանութիւն։

Փարիզի «Արևմուտք» անունով հայկական օրագիրը, որ հրատարակվում էր 1859 Յունուարից, Ապրիլ Ստեփանոս Ոսկանեան գիտնական պարոնի ձեռքով, իւր 6 համարի մէջ առիթ տուանալով այս գրքի յայտնութենից խօսում Արովեանի վարքի վերայ, իսկ 7 համարի մէջ յայտնում իւր կարծիքը «Վէրք Հայաստանի» անունով գործի մասին։ Առ հասարակ գիտուն հրատարակողը Արևմուտքի գովութեամբ խօսում Արովեանի մասին և հասկացել է լոլորովին թէ գրքի խորհուրդը և թէ հոգևնական արժանաւորութիւնը, բայց այդ աշխատութեան մասնաւոր կողմերին վերաբերված մի քանի կարծիքների մէջ, չեմ կարող համաձայնիլ պ. Ոսկանեանի հետ։ Ես տարակոյս չունիմ, որ ամենայն բարեմտութեամբ կ՚ընդունէ պարոնը իմ այս համառօտ նկատողութիւնքը։ Առում. «Անհնարին է այս գիրքը գտնել եւրոպական

պատմելով մի անցք կամ խօսելով մի մարդու մասին, չէ պատհում այդ անցքերի կարգը, գործ է դնում զանազան կամայական և հնարաստեղծեալ հանգամանքներ, նկարագրում երբեմն գեղբնական անցքեր ու տեսարաններ և այլն, բայց այս է խնդիրը. կատարվել են այդ իրողութիւնքը, կամ եթէ չեն եւս կատարված, ապա, կարող էին կատարվիլ, թէ ոչ: Այն գեղբնական տեսարանքը, որ ոչ եղած են, ոչ կան, և ոչ էս լինելու են, բայց համաձայն էին նոքա ազգի հասկացողութեանը, և այդ ջանասա-

---

«կանոնով, վասն դի, ինչպէս ըսինք, ռամիկներու համար և ռամկի ոճով գրուած է «այն, և իրրև գրական շէնք մը չ'ընծայվիր մեր առջև»:

Եթէ Արովեանի վէրը Հայաստանին ունի արժանաւորութիւն, և եթէ այդ արժանաւորութիւնը կարելի է գնահատել, ապա ուրեմն մի միայն եւրոպական կանոնով, որ նայուած միշտ գործի խորհրդին և թէ հեղինակը մինչև ո՛ր աստիճան կարողացել էր հասկանալ և լուծանել իւր առաջև դրած խնդիրը: Եթէ եւրոպական կանոնքը թողունք ու ասիական աչքով նայենք այդ գործի վերայ, այն ժամանակ նա երևուժն մեզ որպէս մի առասպել (Հիքեաթ): «Ռամկի համար և ռամկի ոճով գրուած է այն», ասուաջ պարոնը. համահայն չէմ: Բոլոր ազգի համար է գրված. այն տեղ կայ ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլ և քաղաքացու, այլ և Հայոց կիսատ թերատ ուսումնականների համար եւս: Հայոց ազգը կորուսած լինելով իւր քաղաքականութիւնը, անհետացած լինելով տոհմական աղնուականութիւնքը տուներուն, ռամիկը ևս չկայ, որ կարող է լինել այն տեղ միայն, ուր կայ աղնուութիւն: Աղնուութիւնը հարստութեան վերայ չէ, և ոչ նաև ռամկութիւնը աղքատութեան վերայ. այս բոպեիս մեր ազգի ամեն մի անդամք հաւասար են իրենց մէջ: Աղնուական և ռամիկ չլինելով մեր ազգի մէջ, չունինք և այդ կացութեանների սեպհական բարբառներ. հին և մեռած գրաբառ լեզուն աղնուական չէ, և ոչ կենդանի ժողովրդականը ռամկական, ինչպէս մի քանի վայր ի վերոյ մարդիկ ասումեն, որոնց մէջ և պ. Դիւլորիե ֆրանսիացին, որ մեր ժողովրդական լեզուն և առ հասարակ կենդանի հայկական խօսքը անուանում jargon: Արովեանի լեզուի համար կարելի է ասել այս միայն, որ շատ յաղթահարված է տեղական բարբառից, բայց այդ բանում Արովեանցը ունեցել է իւր մասնաւոր խորհուրդը: Բայց այս պատճառով անիրաւութիւն կը լինի չընդունել այդ դրքի խորին արժանաւորութիւնը, — որ է պատկերացնել ազգի կեանքը նոյն իսկ ազգի առաջև: Այո՛, Արովեանցը իւր բանաստեղծութեանը չէ տուել այնպիսի ընթացք կամ վերջ, որ սովորական է եւրոպական բանաստեղծներին, չէ երևում նա որպէս մի անհատ կազմած, այլ որպես մի հանդիսարան որոշ որոշ պատկերների, բայց դորա առաջը առել է նա մի ընդհանուր անուն տալով իւր աշխատութեանը— Վէրք Հայաստանի: Լեզուի և ոճի ճաշակաւորութիւնը հեռևանք չէ բանաստեղծի դերմանագիտութեանը, այլ բուն ազգեցութիւն տեղական ժողովրդի կեանքին և միտք յայտնելու ձևերին: Նոյնանշան բառերի անհամ կրկնութիւնը տեսանում ենք այո՛, բայց չմոռանա՞ք, որ Արովեանցի խորհուրդը է գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծէ թէ դիրք է կարդում, այլ կարծէ թէ մի մարդ խօսում իւր հետ. ինչ առնէ Արովեանցը եթէ Սահակին չափաղանց է ամենայն բանի մէջ: Առ հասարակ ընդհանրութիւն Արևմուտքին. շատ բարեխղճութեամբ կատարել է իւր պարտականութիւնը և մեր սրաց ծանօթութիւնքը չեն պակասեցնում նորա յօդուածի արժանաւորութիւնը:

ռիկական դաշտախաղերի սերմը խոր դրած էր ազգի ուղեղի և արիւնի մէջ, ահա խնդիրը»։

«Այժմ աչքի տակ առնուենք մեր ազգի կեանքը — ամայի անապատ, կամ ձոր Յովսափատեան — տրտմութեան հովիտ. աչքի տակ առնուենք մեր ազգի պատմութիւնը, քննենք նորա քաղաքական և հոգեբանական կողմերը։ Ասայց արի տես, որ մեր ժողովուրդը պատմական ժողովուրդ չէ և նորա կեանքը չէ եղած պատմաբանական, կուպակից և լոգիկական, այլ կցկտուր. և այդ կեանքի շարունակութիւնը և ապահովութիւնը բոլորովին ապատան մնացած արտաքին պատահմունքի։ Ամէն վտքը ի շահ աշխարհակալութիւնքը մեր Ընշակունի թագաւորներին, Հայաստանի սահմանապահման ցիցերի մինչև օտարների հողերի վերայ զարկվելը, որ մեծ խորհուրդ և արժէք ունին մեր դիտուն անուանված պարոններին աչքում, ոչինչ են վերաբերութեամբ դէպ ի ազգի քաղաքական կեանքը։ Տէրութեան սահմանապահի այս կամ այն տեղ լինելը, օտար ազգեր իւր գայիսոնի տակ խոնարհեցնելը պատահական բաներ են, ոչ բղխումն ազգի կեանքի բնաւորութենից և ոչ կարող են պահպանել ազգը կամ տէրութիւնը։ Սորա ոյժը և կեանքը երևումէ մի միայն ազգութեան մէջ, զանազան անհատներ դէպ ի մի ամբողջ հաւաքող զօրութեան մէջ. և օտար ազգերի տիրելը ասել չէ նորանց սեփականել — իւրացուցանել բարոյապէս։ Այդ մի ֆիզիկական միաւորութիւն է, ոյժի զօրութեամբ կատարված, լոկ մեքենական մօտաւորութիւն. այդ տեղ չէ երևում քիմիական միաւորութիւն, որ միաւորվածքը կորուսաներին իւրեանց առաջնի տիպը և որակութիւնքը և կազմէին մի նոր մարմին։ Ֆիզիկապէս միաւորվածքը, եթէ բաղկանումեն հաղար մասնից, ապա այդ հաղարը և պահումեն իւրեանց արմատական կամ բնական բնաւորութիւնը։ Հայոց կցկտուր քաղաքական կեանքը վարելով իւր քաղաքականութիւնը լոկ, ֆիզիկապէս մեքենականութեան վերայ հնձված լինելով նորա տեսութիւնքը, կեանք տեսանել համարելով մի միայն սահմանների դլխում, չէ մնացել երբէք իւր ոյժը և զօրութիւնը ամփոփել իւր բարոյական կենտրոնում, չէ մնացել ամենայնել իւր զօրութիւնքը ևազգութեան տունկը որպէս մի գործադրանաւոր էակ, այլ հանքերի նման, առանց ներքին զօրութեան, առանց գործարանների, միմեանց վերայ թափելով կուտակելով

և նոյա միաւորութեան ապահովութիւնը այդ միաւորվածներվ քաղաքական յաւակութեան մէջ տեսանելով։ Ազգային սխալ և անբնական ձանապարհներով յառաջ գնալով քաղաքականութիւնը, չէր կարող ապրել որպէս մի բարոյական էակ։ ամենայն էակ ապրումէ պայմաններվ տակ, բայց ո՞յդ հանդր պահաս էին այս պայմանները, վանորոյ և չդիմացաւ հին կամ միջին դարերվ քաղաքական փոթորիկներին և թագաւորը փոխեց իւր գայիսոնը դէպ ի մի թափառական թշուառի գաւազան։ Կառավարութեան հայեացքի նիւթական բնաւորութիւնը նոր արմատացաւ ազգի մէջ, կառավարութիւնը կործանվեցաւ, բայց նիւթականութեան ղլոշմը միաց տպաւորված ո՞ւերվ վերայ։ Ազգ շատ խորախորհուրդ վնաս էր, բայց իմ մտքերը կերպարանագործելու և այս մասին երկար խօսելու հանդր հարկաւոր է ժամանակ.... մնանաանք այս տեղ յարմար չէր երկարաբանել.... դուցէ աւելորդ ևս խօսեցի.....

«Ահա այսպէս լինելով ո՞ւերվ կեանքը, բանաստեղծութիւնը ևս աւելի չէր կարող լինել, քան թէ եղած է։ Բայց ինչ կար. ո՛չինչ։ Ասացի մի անգամ, երանի՜ թէ քանի չէմ մեռած, թափիկի պտոյտ եղածը մեր ազգի առաջև, պատահէի մի քանի հախտրդական վարագոյրներ.... բայց դժուար թէ յաջողի ինձ այս և ես վախտմեմ, որ այն բաները ինչ որ այժմ ձնշումեն հոգիս, պիտի ձնշեն և ոսկերքն գերեզմանիս մէջ.....

.....

«Մենք չունինք ազգային երգեր, չունինք ազգային երաժշտութիւն, չունինք բանաստեղծութիւն, որովհետև ապրումենք միմիայն բուսականաբար և շնչականաբար։ Ո՞աբը կորեկ է տեսանում երազում, իսկ ո՞ոյը նի՛ւթ։ Ո՞ատ ու կոտոր բաներ, որ այժմ անփորձ մարդիկ ազգային են համարում, ժողոված են Թուրքից, Թաթարից, Պարսից, Հոյներց և ուրիշներից, որոնց ժամանակ առ ժամանակ հպատակեցան ո՞ոյք։ Նորերումն դուրս եկան ազգային երգերի անուններ մի քանի անապէ ոտանաւորք, Սայաթ-Նովա, Ազամ ազբար, Շ.իրին և այլն, բայց նորանց ազգային երգ անուանողը և այդպիսի մտաւորական հրէշների վերայ, անդատաստան երեխայի պէս ուրախացող պարոններըը ինքեանք չգիտեն, թէ ի՛նչ պայմաններ էին հարկաւոր, որ մի երգ լինէր ազգային։ Նորա ունին միայն մի պայման և հանա-

յուվեն թէ դոլա մէջ էր ամեն բան — երգիչը ՝այ է: Խայց ՝այ է միայն նորանով, որ ծնել է հայ ծնողներից. նորա երգը չէ և չէ հայերէն. երկը բառ Թխլքի, Թամթաբի և չգիտեմ ինչի խակ ՝այի մի երկու աղճատված կամ ձղակոտոր բան: Երգերի կազմակերպութիւնը հետևած Թուրքի ոտանաւորներին, հիմնած մի միայն ոտքերի և վերջերի նոյնայանգութեան վերայ առանց ամենայն մտքի, բովանդակութեան, խորհրդի և բանականութեան: Ըղգային են այն երգերը և պիտի համարվին ազգային, քանի որ կայ ՝այերից ինչ ինչ, մարդերի մէջ այն սխալ և վնասակար վարդապետութիւնը — թէ ամենայն բան, որ երևումէր ՝այոց ազգի վերայ, անշուշտ պիտի ազգանայ. ազգի յանցանքը ևս առաքինութիւն է, այն տիզմը և հոտած ձահիճը որի մէջ պարանոցաթաղ խեղդվումենք, նուիրական է, որովհետև մեք նորա մէջ ենք.... Ո՛վ բաբելոնեան խառնակութեանս մտքերի. բայց փոքր է այս, մտաւորական կամ բարոյական հարինք»:

— Թէպէտ և ես շատ գլուխ չունիմ ուսումնական բաներին, — ասաց Մահտեսի Թովմասը, երբ կոմսը աւարտեց իւր խօսքը, — բայց ասես թէ ասածներդ խելքիս նստումեն. ինչ և իցէ. դոքա ուսումնական բաներ են և դուք ձեր մէջ ինչ կամիք արեցէք, մեզ չեն վերաբերվում սոքա:

Կոմսը կամէր մի բան ասել, բայց Մահտեսի Թովմասը յառաջ առնելով իւր խօսքը չթողեց նորան բերան բանալ:

— Ձեր խօսակցութիւնը, որի մէջ յիշեցիք գերբնական ու ֆանտաստիկական բաներ, մի բան միտքս ձգեց: Էս մի պատճի ունիմ, ահա, այս կապոյտ պատուհաններով միայարկ տանն է բնակվում: — այս ասելով Մահտեսի Թովմասը մատով ցոյց տուեց պատուհանից մի տուն, որի բնակիչը ծանօթ է ալդէն իմ ընթերցողներին: — Հ՚աքարեանց է նորա ազգանունը, — յաւելացրեց Մահտեսին, — մի վերին աստիճանի ողորմելի մարդ: Գլխին դրել է, թէ աշխարհի երեսին կար մի առանձին գիտութիւն — թալլեսմանական, վհկութիւն, և թէ ամենայն բան կարելի էր յառաջացնել չար ոգիների գործակցութեամբ: Միշտ պարապումէ խեղ և խելառ բաներով, դիծեր է քաշում ախոռի մէջ, սև հաւեր է մորթում: Սև կատու, մարդու գանդ, չորացուցած գոլա ու չղջիկ, բուռ և այլ այսպիսի բաներ լի են գոլա ախոռի մէջ.....

«Չկր պատմելով», խօսքը ընդմիջեց կոմսը, «դորա ախտը բաւական նամանաւթիւն ունի Գաուստի սեռնկին»-

—Ես չգիտեմ Գաուստի ով կամ ինչ եղածը, միայն ձշմարիտ է այն, ինչ որ ասացի: Ես քանի օր է, դարձեալ, վեր ու վայր էր այդ պարոնը. խնդոյն հասկացայ, որ մի փորացաւ ունի, մի նոր խելագարութիւն մտել է գլուխը, ըստ որում, երբեմն ամիսներով, սամենայն ինչ հանդարտ է և ոչինչ չկայ. մտրդ է մտրդու պէս: Երեկեան երեկոյին, երկինքը պայծառ էր, դուրս եկայ բակը մի փոքր ման գալու: Տեսանեմ, որ այդ պարոնը ևս ման է գալիս իւր բակումն, որ բաժանվումէ իմից միայն մի բարակ տախտակեայ պատով: Ման է գալիս, բայց, բարձրաձայն խոսհելով—ինքը իւր հետ խօսակցելով: Ինչ մեղքս պահեմ, հետաքրքրութիւնս բռնադատեց ականջ դնել: Մօտեցայ պատին, և ահա լսումեմ, որ շաղփաղփումէ մի գեղեցիկ օրիորդի մասին, որ չգիտեմ թէ ուր տեսել էր, և այնուհետև շատ և շատ որոնելով ու չգտանելով, այժմ վշկական արարողութեամբ, չար ոգիներին—փերիների գործակցութեամբ պիտի տեսանէր նորա պատկերը կամ ուրուականը, մի ջրով լցուած պատուկի մէջ, որ դրած էր նորա ախոռում, այլ և պիտի խօսէր նորա հետ և այլն: Ես, որովհետև չեմ հաւատում այդպիսի բաներին, վաստոյց մեքենա գլեցի մի խաղ խաղալ դորա հետ, Նոր դիշերի մէջ, մինչ սամենայն մարդ քնեց ու ջրա կողմը հանդարտեց, առայ Թղթերիս միջից Յուլիա Պատրանայի պատկերը, ցած իջայ պատից նորա բակը և որովհետև միշտ համարեա բաց են նորա ախոռի դուռները, խնամով ընկղմեցի պատկերը պատուկի մէջ և լաւ գետեղեցի նորա պատուկի յատակի վերայ: Զգիտեմ տեսաւ թէ չէ, կամ թէ ինչ ազդեցութիւն գործեց այդ պատկերի յայտնութիւնը, երէկ տեսաւ:

«Ինչ պիտոյ է առնել», ասաց կոմս Նամնանուէլը, «Նանրահաւատութիւնը և նախապաշարմունքը, անկիրթ ժողովրդի համար, վաղուց դարձել է հոգեղէն կամ իմացական կեանքի մի մասնը: Գոյն այդ բանը երբէք դուրս գալու չէ Հայոց ազգի սրտից, քանի նորա լուսաւորութիւնը գտանվումէ այդպիսի վիճակում, ինչպէս այսօր: Ծոզած ուսանել ընութիւնը, որով պիտի մեկնվէր նոցա մի ամբողջ կարգ հրաշքների և պիտի փարատվէին այնուհետև այսպիսի մոլորութեան ամպերը պղտորված հայկա-

կան հոլիզնից, աշխատումեն ուսանել մի այնպիսի բան, որ չկայ, և որի գոյութիւնը երաշխաւոր է միայն անհիմն, չնչին և պառաւական աւանդութիւնը»:

— Այս, որ մնայ նորա ախտը, հերիք չէր որ ղրեցի վերասացեալ պատկերը, այլ և մի բան ևս գողացայ:

«Գողացա՞ք», ընդհատեց կոմը:

— Այո՛, — պատասխանեց Մահտեսի Թովմասը, — գողացայ ահա այս թուղթը, որ դրած էր սեղանի վերայ, պատուի մօտ, և որ տեսայ, մինչ զննեցի չորս կողմն փոքրիկ լապտերի լուսով, որ ունէի ձեռքումս:

Այս ասելով մի թուղթ հանեց ծոցից և տուեց կոմս Լամնանուէլին:

Կոմսը վերառաւ և սկսեց կարդալ.

ՓԵՐԻՆԵՐ ՀՐԱՒԻՐԵԼՈՒ ԽՐԱՏ.

«Նթէ կամենաս փերինները հրաւիրել, հարկ է, որ սուրբ «միաս անկողնուց: Ուր մի կլայեկած ամման, դի՛ր նորա մէջ մի «հայելի, յետոյ այնքան ջուր լի՛ց ամանի մէջ, որ հայելին ծած«կվի: Ուր մի ուրի կամ տասն տարեկան տղայ, բայց հարկաւոր «է, որ նոր և մաքուր լինին տղայի հանդերձքը, սկսած շապիկից «մինչև վերարկուն. ծածկի՛ր տղայի գլուխը մի կարմիր թաշկի«նակով, իսկ ինքդ սկսի՛ր կարդալ: Ուր ահա կարդալու բաներդ. «Ծննդեան ճրագալուցի գլքերը բաց ի առաջինից, «Ի սկզբանէ «արար Աստուած» և բաց ի վերջնից «Յամին ուրախասանե«արարիչ»: Երբ որ աւարտել էիր այս ընթերցմունքը, հրաւիրած «փերինդ կը գան, և տղան կը տեսանէ նորանց հայելու մէջ: Իսկ «նթէ չգան, միւս անգամ կրկնի՛ր ընթերցմունքը, և եթէ այս ան«գամ ևս չգան, ապա ուրեմն տղայի անձնաւորութեան մէջ կայ «մի ներհակութիւն դէպ ի փերինները, ուստի փոխի՛ր տղան և «երրորդ անգամ կարդա, անպատճառ կը գան: Մինչ որ ունիս «հարցանելու նոցանից, պիտի լինի տղայի միջնորդութեամբ, դու «կ՛ասես տղային, իսկ սա կը հարցանէ փերիներից, որոնց պա«տասխանը նոյնպէս կ՛ստանաս տղայի միջնորդութեամբ: Այլ «գիտելի է, որ երբ երևին փերիքը, սաստիկ ուրիշ բան հարցա«նելու, պիտոյ է հարցանել, — ի՛նչ ազգից էք: Նորա կը յայտ-

«նեն իւրեանց որ ազդից լինելը, այն ժամանակ, այն ազգի թըղ-«թով երդում տալ տուր և ապա հալցըրու հալցանելիքդ, որ «պատասխանեն և ամենայն ճշդութեամբ և հաւատարմութեամբ։ «Նըրը աւարտելիր հալց ու փորձդ, պիտոյ է նորանց արձակել, «որ գնան, ապա թէ ոչ պարտական են մնալու մինչև որ հրաման «տաս։ Արձակելու մասին կարդալիքդ այս է «Նր ի կատարել «ամացն քառասնից» վերջն «ի լեառն Սինայ», Սուրբ Ստեփա-«նոսի գրքից։ Ահա կը կարդաս կ'աւարտես և երեք անգամ կը «փչես ջրի երեսը և ջուրը մի ոտք չկոխած տեղ կը թափես, «ահա բոլորը»։

Ինչպես կարդումէր կոմսը այս յիմարական լուրատը, բոլոր հիւրերը որ կային Մահտեսի Թովմասի տանը, մեծ ուշադրութեամբ և մանակցութեամբ ականջ էին դնում։ Կոմսը կարդալով ասաց, — խնդմ մարդ, ամենայն կարեկցութեան արժանի. ճշմարի՛տ, եթէ պատահէի նորան կը խրատէի, որ յետ կենալ այսպիսի անօգուտ և յիմարական բաներից, և եթէ կամէր մի բան ուսանիլ, պարապէր բնական դիտութեամբ, այդ մանաւանդ հարկաւոր է, որովհետև ժողովրդի կեանքը միշտ դոյծ ունի նիւթի հետ։

Օրիորդ Մարիամը այս թղթի կարդացվելու ժամանակ դուրս էր գնացել հիւրընդունարանից և արդէն կոմսը խօսելու վերայ էր, երբ ներս մտաւ։ Չոքքում բռնել էր մի թուղթ։ Կոմսը վերջացնելով իւր խօսքը դարձաւ դէպ ի օրիորդը հարցանել թէ ինչ թուղթ էր այն։ Օրիորդը պատասխանեց թէ մի տագ է, և թէ պատրաստ էր երգել այն ևս, եթէ, դորա փոխանակ, կոմսը խոստանար նորա սոցա տուն դալու ժամանակ ներկայ լինել։

— Ո՛նչպէս անգութ էք, — ասաց կոմսը, — իմանալով որ չեմ կարող խոստանալ, պահանջումէք, մի՛թէ չէ կարելի խընդրել, որ առանց փոխարինի երգէք։

«Մի՛թէ չէ կարելի», պատասխանեց օրիորդ Մարիամը, որ դուք մի փոքր վաղ ձանապարհ ձգէք ձեր հիւրը, իսկ ես մի փոքր երկար պահեմ նորան մեր մօտ, այնպէս որ դուք հանդիպիք նորան այս տեղ»։

— Լսելու համար այդ երգը, ի՛նչ պիտոյ է առնել, հարկաւոր է յանձն առնուլ այդ թէև ծանր պայմանը։

Օրիորդի շրթունքի վերայ խաղաց մի խորամանգ, բայց ինքնաբաւական ժպիտ։

«Հայց սասցէք խնդրեմ», հարց արեց կոմսը, «ինչ ուտանելու է այդ և ովքե շինած»։

— Ահն ժամանակ կ'սասեմ, երբ լսեմ ձեր կարծիքը նորա մասին։

Ասյս ասելով օրիորդ Մարիամը մօտ քարշեց աթոռը ֆորտոպիանօին, դարկեց մատները կլաւիշներին և սկսեց երգել։

«Ո՛հ, լոկ երազ էր, մի՛ խոովէք ինձ,
«Իմ մոլորութեան քաղցր պատկերներ.
«Ինձ չէ թոյլ տուած երկաթի կեանքում
«Խնդալ, վայելել ոսկի րոպէներ։

«Մի յիշեցնէք, մի՛, այն ղգացմունքը,
«Որով լցուած էր սիրտս և հոգիս,
«Որով շնչեցի, որով ապրեցայ,
«Ինչպէս մի ծաղիկ գգուած զեփիւռից։

«Ահդ մի երազ էր.... կամ գէթ առաչօք,
«Որ կրակ ձգեց սրտիս մէջ անմար.
«Թշնամի վհուկ, երևի, կախեց
«Աչքերիս վերայ լժժանք անհամար։

«Ինձ այն ժամանակ քանի՛ ու քանի՛
«Երևեցաւ նա այն ծառերի տակ,
«Մինչ, լիալուսին խոր գիշերի մէջ,
«Երգումէր ուրախ, անհոգ, միայնակ։

«Նա տեսայ նորան, բայց մի այլ տեղում,
«Յաւերժահալանի ունէր կերպ ու ձև,
«Թռչումէր, շարժուում օդի մէջ, այնպէս,
«Ինչպէս մի փետուր. առաւե՛լ թեթև։

«Մի անգամ տեսայ Ամենասի պէս
«Զրահաւորված ղինուորի զէնքով,
«Մի ամբողջ խմբի տալիս էր հրաման,
«Իւր ձեռքի բռնած թեթև հրացանով։

«Նա տեսայ դարձեալ, մի ուրիշ անգամ,
«Մինչ անհոգ, ուրախ, խաղացած տեղից

«Նորան բռնեցին, որպէս մահապարտ.
«Ի՛նչ անմեղութիւն, ի՛նչ հայեացք աչքից.
«Մինչ ոտքից գլուխ սպիտակ հագած
«Դիմումէր տխուր դէպ ի պատժարան,
«Անհոգ արձակած սաթի պէս մազերը,
«Արտասուք թափելով հեղեղի նման.

«Մինչ զըպարտողը խոստանումէր կեանք,
«Թէ միայն հաճէր.... լինել հաւնձայն.
«Ա՜յն ի՛նչ շնորհք էր, որ կաթնից մատից,
«Որով ցոյց տուեց երկինք ժանտին այն.

«Ո՛հ, մի այլ անգամ, ինչպէս փրկեց նա
«Աւազակներից մի անմեղ կեանք.
«Առանց խօսելու, համր նշանով,
«Վտանգի ժամը յայտնեց բացարձակ.

«Ի՛նչ կարեկցութեամբ, ինչ անմեղ սիրով
«Թունալի բաժակը տեղափոխեց նա,
«Որով դաւաճանը թունաւորվելով
«Թմրեցաւ մնաց, աթոռի վերայ.

«Ո՛ր մինը յիշեմ. ես տեսայ դարձեալ,
«Մինչ դուրս էր գալիս ծովից լայնարձակ.
«Հազար պչրանքով, քնքուշ շարժմունքով,
«Ձկնորս էր որսում, սրտով համարձակ.

«Ա՜խ խոստանումէր նորան անմահ կեանք.
«Նա՜ սիրելը էր անմահութիւն.
«Ես տեսայ, ինչպէս ձկնորսը ուրախ
«Վայելումէր մի ճոխ արքայութիւն.

«Ո՛ երջանիկ անգամն էր, աւել չտեսայ,
«Գնումէի ծովով հեռաւոր աշխարհ....
«Երկինքը մէջնեց, մրրիկը սուլեց,
«Որոտ, փայլակը անթիւ փայլակեց.

«Այրերի նման մեծ մեծ ալիքի
«Կատաղած ծովին նաւած խաղալիկ,
«Գալիս էր մի նաւ, ջարդված կայմերով,
«(Ցառաջ մեր նաւից տեսան նաւաստիք).

«Նկաւ մօտեցաւ նաւը մեր նաւին.
«Ի՛նչ սիրտ կտրատող մի պատկեր էր այն,

«Թշուառ յուսահատ իբր անխել նաւորդք
»Կորուսեալ էին և յոյս փրկութեան։

«Նաւորդների մէջ ես տեսայ նորա,
«Բռնել էր կայմից խելքը կորուսած,
«Ինչպէս յուսահատ անմեղ ազաւնին,
«Բազէի աչքից անգութ հալածված։

«Ընդունդի վերայ այսպէս քանի ժամ,
«Օրօրաց ճօճաց տարաբաղդ նաւը։
«Գիշերը կոխեց....կայծակը թնդաց....
«Կուլ տուեց բոլոր անյատակ ծովը....

«Կայծակի թունդը, մրրկի ձայնը,
«Խուլ աղաղակը կատաղի ծովի
«Միախառնվեցան վերջին ձայնի հետ,
«Որ արձակեցին այնքան շատ հոգի։
. . . . . .

«Մրրիկը անցաւ, ծովը հանդարտեց։
«Շատ հեռի չէինք մեք ծովեղերքից....
«Ջրեղէն գաշտում, դեռ նոր լաղաղած,
«Մի ապառաժուտ կղզի երևեց։

«Ուհա, նա դարձեալ ծովում լողալով
«Դիմումէ դէպ ի քարքարուտ կղզին։
«Մեք տեսանումենք....բռնեց քարերից
«Եւ շուտ վեր ելաւ իբր անհուն մարմին։

«Ծոգնած, ուժաթափ, մինչ վեր բարձրացրեց
«Իւր արտասուքով լցուած աչքերը,
«Եւ ահա լուսինը ամպերի տակից
«Դուրս սողաց տեսնել նորա երեսը։

«Ինս շատ նայեցայ....բայց մեր նաւն արագ
«Վաղեց դէպ յառաջ....կորաւ իմ աչքից....
«Եւ այլ միւս անգամ մինչև այս րոպէս,
«Կամ գուցէ յաւէժ ղրկվեցայ բաղդից։

«Ձէ՛. այն երազ էր....հեռի՛ ինձանից,
«Խօլական ցնորք, հոգի դիշատող.
«Թողէ՛ք ինձ հանգիստ մաշել իմ կեանքը
«Եւ խաղաղ սրտով մտնել դէպ ի հող»։

Այլ աւարտեց երգը օրիորդ Մարիամը, ամենի աչքը դարձան կոմսի վերայ, որ լսեն նորա կարծիքը այդ երգի մասին։ Այլ կոմսը ոչինչ չասաց, մի միայն շնորհակալ եղաւ օրիորդից, որ զուարճութիւն պատճառեց, երգելով ու ածելով. սակայն կոմսի երեսը չէր ցոյց տալիս, թէ նա զգացած լինէր զուարճութիւն, դորա հակառակ մթնում և մթնումէր նորա դէմքը, որքան երգը մօտենումէր վերջանալուն։ Նորա հեղինակը էր ինքը կոմսը, և երգի բովանդակութիւնը առած էր ստուգապէս պատահած անցքից....

— Ալբէն ժամանակ է դէպ ի տուն դառնալու, — ասաց կոմսը և հրաժարական ողջոյն տալով բոլորին, խոստացաւ օրիորդ Մարիամին ներկայ լինել նորա գալու ժամանակ։ Կոմսը, անձնատուր լինելով ախուր մտածութիւններին, դուրս գնաց Մահաեսի Թովմասի տանից։

(Շարունակութիւնը միւս տետրակներում.)

ՆՆԵԼՈՍԿԵՆՏ·

(Ընտանեկութիւն·)

ԳՕՐՈՒԱԾ 2·

ՄԱՐՍՈՂՈՒԹԻՒՆԸ·

Ինչպէս որ տեսանք վերևումը, մարդու համար շատ կարևոր է մնունդ առնուլը իւր մէջ: Այն անախորժ իմացութիւնը, որ ասումենք քաղց, հրաւիրումէ մեզ ուտել: Այս քաղցը կարող է ստոյգ ցաւ դառնալ, երբ փորը այնպէս դատարկ է, որ նորա պատերը միմեանց վերայ տրորվումեն: Ուրեմն անտանելի և տանջող է այն ախտը որ ասումենք ծարաւ. ծարաւի նստարանը է լեզուն, կոկորդը և որկորի ծակը: Վհաղցի ախտը յառաջանումէ փորից· երբ որ մեք լցուցանումենք այս բնական կարիքը, այնուհետև գոյանումէ մի շատ ախորժ զգայութիւն յագուրդութեան և կեանքի զուարթութեան: Այն ընթացքը որ կատարումեն մննդական նիւթերը մարսողութեան միջոցին, սոքա են. ձեռքերը կամաւորապէս շարժողութեամբ կերակուրը և ըմպելին տանումեն դէպ ի բերանը· սա բացվումէ և ընդունումէ նորանց իւր վրան մէջ: Որովհետև կերակուրքը ըստ մեծի մասին կոշտ և ջիլ են և բաղկանումեն նոյնպէս մեծ մեծ կտորներից, վասն այս պատճառի յառաջուց փշրվումեն ատամներով, և ինչքան օրինաւոր մանրանումեն այդպէս, այնքան ևս հեշտ է լինում նորա մարսումը: Այս խորհրդով ամրակազմ են Աստծերը, աւելի ամրակազմ քան թէ մարմնի միւս օսկրներըը, և ունին, ինչպէս կերակուրների նիւթը և պնդութիւնը, նոյնպէս ընտազան ձևակերպութիւն: Արդ

ունի 1, վերևից և ներքևից չորս կտրողական ատամներ, սոյանով կտրող է միայն կակուղ և փոքր ինչ չիլ նիւթեր կոտոր կոտոր առնել. 2, չորս անկիւնային ատամներ, ամեն մի ծնօտի մէջ երկու երկու, սոքա աւելի ամուր և պինդ լինելով, պիտոյ է ջլուտ մսոմիններըը պատառէն և մէջ խրվելով յետ պահեն այն մսոմիններըը, որ հարկաւոր էր աւելի երկար ծամել: 3, Ամեն մի կողմում հինգ ծամողական ատամներ. սոքա շատ զօրեղ են և աշխատաւոր էին մանաւանդ թէ կարծր կերակուրներ ծամելու ժամանակը: Նոքա անվախտելի խրված են ծնօտների մէջ, որ աւելի ուժով ու զօրութենով կարողանան շարժ գալ: Ծամելը հնարաւորվում շատ ամուր և ուժեղ ջղերով, որ ձնշելով պրացի լորձունաճին մանուկները, յառաջացնում են լորձունք որ ապա առանձին գնացքներով հասանում բերանի մէջ, խառնվում մանրած կերակրախիւսի հետ, և պատրաստում նորան որպէս մարսելի նիւթ: Կո՞ւ պոլվ, կամ կլանելվ, բերանի մէջ եղած կերակուրքը ցած են սեղմվում դէպ ի ստամոքը: Նախ և յառաջ կերակուրը լեզուի ծայրից բերվում դէպ ի բերանի յետին կողմը և մծամնոտով կոկորդի ծածկոցին, սեղմում սորան դէպ ի վայր, այնպէս որ շնչափողը փակվում և ոչինչ կերակուր կարող չէ ներս ընկնիլ նորա մէջ: Կերակրի ներս մտանելը քթափոսի մէջ որ, ինչպէս յայտնի է, վերջանում որկորի ծակովը, խառնվում փափկամորթ քիմքի միջնորդութեամբ, որ այդ միջոցին կծկվում: Նորը կերակուրը հասել է որկորածակին, այնուհետև, կէս մի լուր ծանրութենից և կէս մի առանձին ջղերով յառաջ է տանվում և վայր է ընկնում փորի մէջ: Առաւելապէս խոշոր և կոշտ նիւթերի ներքև կլանելը հեշտացնելու համար, ամենայն կողմից հասաքվում առատ լորձունք որկորածակի մէջ և պատելով այն նիւթերը, լպրծուն է շինում նորանց և շատ թեթևացնում նոցա դէպ ի ցած սահվելը: Այսն այս պատճառի, այս մասների մէջ գտանվում լորձունք պատրաստող մանուկներ շատ, մանաւանդ թէ կոկորդի մանուռքը և գանկիկի (լեզուակի), որկորածակի և կերակրափոսի փոքրիկ լորձունապատիճները: Որկորածակի շարժութիւնքը, քանի որ կերակուրը դեռևս բերանի և որկորածակի մէջ էր, լինումն կամաւոր. բայց երբ կերակուրը յառաջ է գնացել մինչև կերակրափողի ներսը, այնուհետև լինումին ակամայ: Կերակուրները հասած լինելով ստամոքի մէջ,

երկար ժամանակ մնումեն այս տեղ, խառնվումեն ստամոքսի հիւթի հետ և դուրանով ներթարկվումեն մի մեծ մարսողական գործողութեան։ Բայց հարկաւոր է մեզ այս տեղ աւելի մօտ ծանօթանալ Ստամոքսի հետ, որ մի կարևոր և մարմնի բոլոր միւս մասերի վերայ իշխանացած գործարան է։ Նա ձևացնումէ մի մաշկեայ ճուտասեակ պարկ, որ երեսայի մէջ ըստ մեծի մասին բոլորակ է, շատ նմանութիւն ունի պարկաբզդուկի հետ, դրած է ձախակողմեան փորի մէջ, լերդի, միջնամորթի և պիտակակողերի քամակումը։ Նա բաղկանումէ չորեքպատիկ մարթերից որոնցից առաջին ներքինը ունի համարեա թէ բարխանման կերպարանք, ստանումէ նոյնպէս շատ ջնդեր և արիւնի ամաններ։ Փոքրիկ լոլձունանօթք անդադար ծորումեն իւրեանցից մի պայծառ, լոլձունքին հաճեմատ հիւթ որ ոչ թթու է և ոչ աղի, և, ինչպէս կարծումեն, ունի մի առանձին, ապականութեան ընդդիմացող զօրութիւն, Դա, մի մասնով, լուծանումէ կերակուրը և ասվումէ ստամոքսի Հիւթ։ Մի քանի ձիերի մէջ, այնքան ազդու է այս հիւթի ներգործութիւնը, մինչև կուլ տուած սոկրները ևս հալումէ։ Ստամոքսից հատանումեն կերակուրը նեղ աղիքի առաջին մասին, այսինքն տասներկու մատնաչափ աղիքի մէջ, ուր հանդիպումեն նորա մէջ թափված մաղձին և փոխակերպվումեն կերակրախիւս։ Մի որդնապէս շարժութեամբ, որ պատճառումէ թէ ստամոքսին և թէ աղիքներին, հնարաւորվումէ կերակուրներին յառաջխաղացութիւնը։ Այս շարժութիւնը կատարվումէ մանրանալով թէ այն երկայնութեամբ ու լայնութեամբ գնացող մանրաթելերով և պատճառումէ ամենայն աղիքներին, ըստ որում զոքա փոխ առ փոխ երկարանումեն ու կարճանումեն։ Աղիքների այսպէս փոխ առ փոխ սղալու և զլորվելու պատճառը դոյանումէ նորա սեփական եղած զրդռականութենից, կերակուրների որպիսութենից, մաղձիցը և միւս, սոցա պատկանեալ հիւթերից։ Այս ձգձգեալ շարժողութիւնը, բնական կարգով, գնումէ միշտ վերևից դէպ ի ցած, բայց անսովոր և ընդհակառակ զրդռութիւնք կարող են տալ նորան մի հակառակ ընթացք, այնպէս որ ստամոքսի և աղիքների մէջ եղած նիւթերը բերվումեն դէպ ի վեր։ Նմին այս ներհակ շարժումը պատահումէ առաւելապէս ստամոքսի մէջ և ոչ սաստիկ, այնուհետև յառաջանումէ զղջանքի խմացութիւն, բայց եթէ սաստկացաւ, այնուհետև յառաջանու-

մէ փսխելը, որով ստամոքը իւր մէջ պարունակվածը միւսանգամ դուրս է ձգում որկորաձակից։ — Կերակրի մանրուածը տասերիս մատնաչափ աղիքից յառաջ ու յառաջ դնալով ցած է իջանում նեղ աղիքի մէջ. այս ձանապարհումը հետ ղհետէ աւելի փոխակերպվում, կորուսանում դոյանով իւր սննդարար մասները և վերջապէս հասանում ընդարձակ աղիքի մէջ, ուր չէ ասվում աւելի կերակրի մանրուածք, այլ աղտ, կամ ապականութիւն։ Այս որպէս սնուցիչ հնարների մնայորդ, խառնած է մաղձի դեղին և ձիւթային նիւթի հետ, փոքր ինչ նեխած է արդէն, և անպիտանացած է մարմնի համար։ Այսպէս փոքր առ փոքր յառաջ շարժվելով, հասանում նա Ենրաստանի աղիքին, ուր հաւաքվելով չափաւոր ոլքանութեամբ, մի անախորժ ղդայութեամբ ստիպում մեզ դուրս ձգել նորան։ Այսպիսի կերպով արձակվում ապականութիւնը մի կամ երկու անգամ օրի մէջ, այնպէս որ մի օր յառաջ վայելած կերակուրը ըստ օրինի մշակվելով և անպիտան նիւթեր դառնալով, դուրս են ձգվում աւեն օր։ Ենթէ չկամենք ոչինչ բան զանց առնել, որ վերաբերվում մարսողութեանը, ապա պէտք էր դեռ ևս յիշել այս տեղ, որ կերակրներից դոյանում երբեմն օդ, որ ենթէ դտանվում ստամոքի մէջ, դէպ ի վեր զարկվելով ինչպէս Ձդուտումն, դուրս է սեղմվում որկորաձակից. բայց ենթէ այդ օդը ծնանում երասանի աղիքի մէջ, այնուհետև մղվում դէպ ի տրա բացուածը և դուրս է գնում մարմնի միջից կամ ապականութեան հետ միասին, կամ թէ մենակ, և ասվում փուք։

ԳՕԴՈՒԱԾ 3։

ԿԵՐԱԿՐԱՀՒԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԵՐՍ ԾՆԱՆԻԼԸ։

Անդամական նիւթերից առ փոքր փոքր պատրաստվում կերակրահիւթը, որ իւր սպիտակ գունի պատճառով ասվում նոյնպէս կաթնահիւթ։ Նա ունի աղի քաղցր համ և պարունակում իւր մէջ նիւթեր որ շատ նման են արիւնի նիւթերին։ Նորա բաղադրական մասունքը են բուսական ալիւր, կենդանական ալիւկ և իւղ։ Նա կախվում աղիքների նեղքին բարխտանման կամ մազոտ մորթին և ընդունվում ծծողական անօթների մէջ։ Այսպիսի անօթներ սեփական են շնչառարների մեծ մասին. դորանց դասած

ևն ձկների, թռչունների և ձկների մէջ։ Մի անթիւ բազմութիւն փոքրիկ մանրների ընդունուելն իւրեանց մէջ այս անօթները, և անոնցմէ յոյս յարատեւ են կացուցանում իւրեանց մէջ պարունակուած կերակրահիւթի խառնուիլը արիւնի հետ։ Կերակրահիւթի պահարանի մէջ միաւորուելն այս ծծողական անօթներու, ապա ետքն իւրեանց մէջ պարունակուածը և սա մի առանձին փողուկով միշտ յառաջ խաղալով, վերջապէս բերուելն Ներակի արիւնակրակի (Vena clavicularis) մէջ։

ՑՕԴՈՒԱԾ 4.

ԱՐԻՒՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

Ընդհանուր մանրների մանրելովը որ լինելու է մանուածոյ թէ արիւնից, սա նուազելու անդադար, և այս պատճառով կարօտ էր վերահին լրանալու, եթէ պէտք էր առ հասարակ, որ պահպանուի առողջութիւն և կեանք։ Այս վերահին լրութիւնը գտանելու է արիւնը կերակրահիւթի մէջ, որ հասուցանուելն նորան ծծողական անօթները։ Այն հեղանիւթը որ գտանուելու է շնչերակների և արիւնակրակների մէջ, ասուելու Բէ֊։ Սորա մասին տանք այս տեղ քանի մի ընդհանուր ծանօթութիւններ։ Արիւնի մէջ պարունակուած արիւնի ոլքանութիւնը չէ կարելի ճիշդ սահմանել, բայց նա շատ մեծ է. զոր օրինակ մի դլխաստաճ երեխայասպան ինոջ արիւն հաւաքելով և կշռելով ստուդել են, որ 24 ֆունտ էր։ Զափահաս մարդիկ, արիւնհոսութեամբ երբեմն կորուսանուելն փոքր միջոցում 15 մինչև 20 ֆունտ արիւն, առանց վեռանալու. սորանից կարելի է իմաստասիրել, թէ ինչքան ահագին պիտի լինի նորա շատութիւնը։ Ա֊ հասարակ ընդհանուրն, որ եթէ մի մարդ կշռուսի 90 ֆունտ, դորանից 40 ֆունտը հասանուսի մարմնի ամուր մասներին և 50 ֆունտը նորա հեղանիւթին։ Եթէ մի երակից թողած է արիւն, սա սկզբում երեւուսի շատ փոքր տարբեր իւր առաջին որպիսութիւնից, երբ որ դեռ ևս կինդանի մարմնի մէջ էր. բայց շուտով կորուսանուսի իւր ջերմութիւնը, իւր հոտը, իւր հեղկկութիւնը և առ հասարակ իւր կանոնապատշաճ խառնուածը. նա սկսանուսի մնծանիլ (լերդանալ), և այս դրութեան մէջ նորա դլխաստը մասն է Պրուօր (Cruor) ասացեալ Արիւնախաժրը։ Սա որին պատկանուսի խա-

կապէս կարմիր գոյնը, կերպաւորվումէ բազմաթիւ կարմրագոյն գնտակներից, որ խոշորացուցով կարելի է շատ պարզ որոշել Թաւմ արիւնի մէջ. բայ ի սորանից բաժանվումէ արիւնից մի դեղնագոյն հիւթ, որ ասումեն Արիւնաջուր, որ և ըստ մեծի մասին բաղկանումէ մաճոյծից. սա է որ արիւնի մասները միմեանց հետ կապակցումէ. արիւնը բայ ի այդ յիշեալ բաղադրական մասներից վակումէ իւր մէջ այլ նիւթեր, այսինքն աղ և երկաթ: Ի վերայ այդր ամենայնի, ինչքան էս ձիշդ մինչև այժմ վերլուծված է արիւնը դէպ ի իւր որիշ որիշ բաղադրական մասները, ինչքան էս զանազան նիւթեր քննողութեամբ յայտնված էին նորա մէջ, բոլոր փորձերը այդ մասին անկատար են, պատճառ որ դեռ էս անկարող ենք այդ մասներից վերլուծին գոյացնել մի արիւնանման հեղանիւթ: — Մինչև այժմ յիշատակված բնական գործողութիւնները կարելի է այսպիսի դասակարգութեամբ շատ ձիշդ առաջի ընծայել. Նախ և յառաջ սննդական հնարները ընդունվումեն բերանի մէջ, այս տեղ խառնվումեն Լորձունքի հետ և մանրվումեն ատամներովը, ապա կուլ տալով հասանումեն ստամոքին. այս տեղ ստամոքի հիւթովը ըստ մասին վերլուծանվումեն և յառաջ են գնում: Տասներկու մատնաչափ աղիքի մէջ հանդիպումէ նորա մաղձը, և այնուհետև դառնումեն նորա կերակրախիւս: Աղրանից յառաջանումէ կերակրահիւթը որ ծծողական անօթները իւրեանց մէջ ընդունելով բերումեն հասուցանումեն արիւնին, սորա հետ խառնվումեն և սորա մէջ պատահած պակասութիւնը կրկին լցուցանումեն:

ԳՕԴՈՒԱԾ 5.

ԱՄՈՒՐ ՄԱՍՆԵՐՒ ՍՆԱՆՈՒԼԸ.

Ամմնի բոլոր ամուր մասները սնանումեն արիւնով. այս սնունդի վերայ հիմնաւորված է բոլոր աճելութիւնը, որի զօրութեամբ ամենայն գործարանքը մինչև մի սահմանեալ աստիճան մեծանումեն անպատար: Բայց և այնուհետև, երբ որ մասնիկը հասած էր այս աստիճանին, չէ լինում դադար, որովհետև բնութիւնը միշտ աշխատումէ կրկին և կրկին լցուցանել մաշած ու սպառված նիւթը կամ զօրութիւնը: Գործածութեամբ, այս-

ֆինքն է նոյն իսկ կենդանութեամբ հասնելու թէ մարմնի բոլոր մասնիկը, մանաւանդ թէ մինակներըը, զգայարանքը, ուղեղը և այլն, վաստակումն, և այդպէս պիտոյ է Թուլանային անպատճառ։ Այս Թուլութիւնը կազդուրումէ արիւնը, որից այն մասնիկը ստանումէին նոր կենդանութիւն։ Առատանուն օտարկիք և զօրաւոր մարսողութիւն մանաւանդ, ուշադրութեան արժանի բաներ են այս տեղ, որովհետև նոցանից է կախ օրինաւոր որպիսութիւնը կերակրահիւթի, որ մասնաւորվելով արիւնին, բերումէ տալիս է սորան իւր հարկաւոր բաղադրական մասնիկը։ Այդ բանը ստուգումենք փորձով հիւանդութեան մէջ, ուր մանաւանդ թէ մարսողութիւնը տկարանումէ, թէ ինչպէս շուտով նուազումէ մարմնի ոյգանութիւնը. բայց շուտով առաւելանումէ դա, եթէ վերատին զօրացել է մարսողութիւնը։ Այս բոլոր դորձողութիւնը ճնուումէ մեր հասոյ մի գժուար լուծանելի խնդիր. առաւել անհրամարելին այն է, թէ ինչպէս են գոյանում այդքան ամենևին զանազան նիւթեր, որ մեք գտանումենք կենդանական մարմնի մէջ, զոր օրինակ ջղերի ուղեղը, մասիւթը, լերդի բաղադրութիւնը, թոքերի և երիկամունքի նիւթը, դլխի ուղեղը և այլն։ Ինչպէս բազմօրինակ են այս բոլոր մասնիկը, նայելով նոցա ձևին և բաղադրական նիւթերին։ Մի և նոյն արիւնից գոյանումէ մինակներուն մասնիւթ, ջղերի մէջ ուղեղ, ոսկրների մէջ ոսկրանիւթ և այլն։ Ասն այս պատճառի պիտոյ է ենթադրել, թէ ամեն մի գործարանի մէջ պատահումէ մի ջոկ քիմիական գործողութիւն, որով ամեն մի մասը իւր բնութեան յարմարաւոր նիւթը վեր է կաշնում արիւնի միջից։ Երևումէ նմանապէս, որ մարմինը բնաւոր կենսական զօրութեամբ կարող է կերպաւորել այնպիսի նիւթեր որ ընդունած կերակուրների մէջ ներկայ չեն, զոր օրինակ փոսփորն և կրահող, ուրեմն և չէին կարող դուրսից մանաւորվել մարմնին։ Աճելութիւնը մարդու մէջ յառաջ է գնում աւելի ծանր քայլով և աւելի պակաս համեմատութեամբ, ինչքան աւելի հեռանումէր նա երեխայական հասակից և ինչքան առաւել պնդանումէին և ամրանումէին նորա անդամքը։ Առաջին տարիներումը, ուր նիւթի յաւելանալը շատ յայտնի երևումէ, մարդու բոլոր գործարանները, այո և ոսկրները և աճառները փափուկ ու կակուղ են. յետոյ կարծրանումեն աւելի և նոյն իսկ միսը ստանումէ ամրութիւն և պինդութիւն։ Ա՛ար-

պը սկսանումէ դոյանալ այն ժամանակը, երբ մարմինը ամողջութեան վերջին սահմանին հասել է. ձարպի պատրաստութիւնը ունի օգուտ, մինաւանդ եթէ չափազանց չէր. նա հաւասարապէս պարզումէ մորթը և դոլանով հաստատումէ մարմնի վայելչակերպութիւնը։ Բանի՛ զանազանութիւն կայ մի բոլորակ էքնաղակայր կոյս աղջկայ և մի անհիւթ պառաւ հնոջ մէջ. համեմատի՛ր նորա լուսապայծառ սպիտակութիւնը սորա դէղնի դունի հետ, աղջկայ միահաւասար մորթը պառաւի խորշոմութեան հետ. և այսչափ մեծ զանազանութեան պատճառը է միայն ձարպը։

Եթէ վերաբերութեամբ, ժահրակալութեամբ և սորա նման պատահարութիւններով պատահել է նիւթի կորուստ, այնպէս որ դորանից դոյացել է դատարկութիւն մարմնի մէջ, այնուհետև այդ կորած ու պակասածը վերստին նորոգվումէ և լրանումէ անընդդդրձութեամբ. այս վերստին կերպարերութիւնը զբաղ է մանաւանդ թէ ոսկրների մէջ։ Առնարիւն շնչաւորների մէջ շատ յաջողակ է լինում այս միւսանգամ նորոգութիւնը, վասն զի ամբողջ անդամին որ կորած էին, վերստին լրանումեն։

ՅՕԳՈՒԱԾ 6.

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՋԵՐՄՈՒԹԻՒՆ.

Ա՛յդուս մարմինը ունի կարողութիւն ծնուցանելու մի, իւր բնութեանը սեփական ջերմութիւն, որ անվիջաբար կախ չէ նորա շրջակայ հանդամանքներից, և ցուրտ կամ ջերմ օդի մէջ անկորուստ պահպանումէ մի և նոյն որպիսութիւնը։ Արդիհետև այս ջերմութեան ծնուցանելը պատկանումէ ոչ թէ միայն մարդուն, այլև անասուններին, առաւելապէս ջերմարիւններին, և աւելի նուազ սառնարիւններին, վասն այս պատճառի ասումեն նորան Կենդանական ջերմութիւն։ Նորա աղբիւրը է արիւնի մէջ, և մարդումն ունի 28 մինչև 29 աստիճան Ռէօմիւրեան ջերմաչափի վերայ, կամ թէ 96 մինչև 98 աստիճ. Ֆարնհէյթեան ջերմաչափի վերայ։ Այս առանձին ջերմութեան դոյանալը երևումէ կախ ի ջոկ նեղորձութիւններից փոքրիկ շնչերակների վերջվորմը, և այս տեղ դորձակից են իւրեանց կողմից և անդադրձութիւնը և թոքերը։ Նա գլխէ ամենայն հանդամանքների մէջ

ՁեռՈւՄ հաւատալ, միայն թէ փոքր ինչ զանազան է, նայելով հասակի և խառնուածքի զանազանութեանը, այլև մարմնի շարժողութեանը կամ դադարողութեանը, կեանքի երկայնակեցին, ուտելիքի և ըմպելիքի որպիսութեանը: Ուրեմն և այս տեղ մարմինը անկորուստ պահպանումէ իւր անկախութիւնը արտաքին ներգործութիւններից, և ջղերը, ինչպէս երևումէ, մեծ ազդեցութիւն ունին այս ջերմութեան գոյանալու վերայ. այս բանը բացայայտ ապացուցանումեն ցուրտ և ջերմ տեղերը, որոնց մէջ շատ զանազան է պատահումէ արիւնի երկանակը: Նմանապէս ախտի բորբոքութիւնը զօրացնումէ կամ նուազեցնումէ նորան:

ՀԻՒԹԵՐՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ.

Աղիւսը պատրաստումէ և որոշումէ բազմաթիւ հիւթեր, որ շատ այլ և այլ են միմեանցից: Դորանց կարող ենք բաժանել ջրային, ածխային, հողասային և խոլային: Ջրային հիւթերի կարգումը դասանելումեն Արտասուքը, Մէզը, Արտաշնչութիւնը և ըմպունակ հիւթքը. վերջինքս փոխանցական ձանապարհ են դէպ ի Մաղասայինքը որ երևումեն մարմիններուն ներքին մակերևոյթներուն վերայ, որոշվումեն մասններից և փոքր ինչ ջրի մէջ ալեձակումեն մի ջել, թէև պէս ձգական նիւթ. սորա համարումը դասումեն քթի, կոկորդի, շնչափողի, կերակրափողի, մաղձապարկի, միզաձանապարհների մաղասը: Սորանից շատ զանազան են իւղային կամ ճարպային հիւթքը. նորա պատրաստութիւնը հանդիպումէ մարմնի արտաքին մակերևութի վերայ, նորա պահպանումեն սոսան արտրանքից, պատելով մակերևոյթը. այսպէս են ականջների կերտը, արտասունքի ճարպը և այլն: Ներկային հիւթքը ըստ մեծի մասին բաղկանումեն մածոյծից. սորա կարդումն է յօդակապերի օծանելին: Բայ ի սորանից կան միւս աւելի բազմանասնեայ հիւթեր, զոր օրինակ մաղձը, կոթը, և աւելի նուրբ ինդոզական նիւթեր որոնց իսկական որպիսութիւնը մինչև այժմ չէ իմացուած ճշդապէս, զոր օրինակ ջղերի սկզբնապատճառը, երկարտնական նիւթը և այլն: Այն գործարանքը որ ասումենք մանր, ունին այն պաշտօնը, որ այս հիւթերը վեր առնուն և գործ դնեն իւրեանց մէջ: Մեք հրաժարվումենք այս տեղ մէջ բերել այն զանազան կարծիքները որ կան հիւթերի պատրաստութեան կեր-

պի մասին և յիշատակումներ միայն, թէ հաւանական է որ այս բոլոր բաներուն մէջ պատահումի մի քիմիական գործողութիւն, որ ամեն մի պատրաստողական գործարանի մէջ պիտոյ է այլապէս լինի։

ԵՐԻԿԱՄՈՒՆՔԸ. ՄԻԶԱՓԱՄՓՈՒՇՏԸ, ՄԵԶԸ։

Աղնդանի մարմինը շրջակայ ատմոսֆերայից անդադար ներս է ծծում բազմաթիւ հեղանիւթներ և ընդունում իւր մէջ որպէս բնական նոյնպէս շատ հեղեղուկ բաներ։ Եւ որովհետև այս հեղանիւթների ոլքանութիւնը հեշտ կարող էր ծանրացուցիչ լինել և վնասել, այս պատճառով բնութիւնը սահմանել է երկու ձանապարհ, նոցա աւելորդ շատութիւնը դուրս ձգելու համար։ Այս պատահումն անզգալի արտաշնչութեամբ և միզարձակութեամբ։ Առաջինի մասին յետոյ խօսք կը լինի մեսանգամ. վերջինի մասին մէջ բերինք այս տեղ առաւել գլխաւոր դիտելիքը։ Մէզը երիկամունքների միջնորդութենով որոշվում արիւնից և նոցա անցուցիչ գնացքներովը բերվում միզատարքի մէջ և ոցանով միզափամփուշտի մէջ, և այս տեղից միզափողովակի միջովը դուրս է թափվում մարմնից։ Երիկամունքը լինելով երկու փոքրիկ փորոտիք, բակլայի պէս ձևացած, դրած են ողնաշարի երկու կողմերը. ամեն մինի վերայ գտնվում էս մի փոքրիկ մանաւոր յատկացած, որ ասվում երկրորդական երիկամին։ Նոքա փակուած են իւրեանց գոյացութեան մէջ շատ անօթներ և փոքրիկ փողովակներ, որ որոշված մէզը ընդունելով իւրեանց մէջ, բերումն միզատարքի մէջ. այս տեղից դալիս է նա միզափամփուշտի մէջ որ մի ձուաձև պարկ է, որ և մի քանի ժամանակ պահում իւր մէջ ժողոված մէզը, որ նա դուրս չը հոսէ, բայց երբ որ միզափամփուշտը լցուած է, այնուհետև մէզը իւր ծանրութենով և իւր սեփական զրդռողականութեամբ պատճառում այն անախորժ զգայութիւնը որ հարկադրում մեզ դուրս թափել նոյան միզափողովակից։ Միզարձակութեան միջոցին միջնամկանի և փորամկանների գործակցութեամբը կծկվում միզափամփուշտի մաքիլքը և մէզը իւր ծանրութենով օդնում դուրս թափվելուն։ Այլ մի՛ դուցէ թէ միզափամփուշտը և միզափողովակը միևնոյն մկի կծանողական բաղադրութեամբ,

այս խորհրդով բազմաթիւ մանանեխ անդադար դոյացնումն այս մանանեխի նեղքին մակերևութի վերայ մի թանձր մաղաս։ Ընդոջ մարդուց թափված մեզը տեսանելմէ որպէս մի ջրային, ամենևին պայծառ խոնաւութիւն դեղին գունով և մի առանձին աղի համով ու հոտով։ Վերլուծանելով նորա բաղկացական մասները, գտանումնք մանաւանդ մի ջրային խոնաւութիւն, որի մէջ բաժանված էին թեղանիւթ, փոսփորաթթու կրահող, միջային աղ և մի ամենևին ջոկ թթվութիւն, որ եթէ չափաղանց նեղկայ է, տռիթ է տալիս հիւանդութիւնների և մանաւանդ թէ վամիշտաքարի դոյանալուն։ Միզի մէջ եղած նիւթերի որպիսութիւնը շատ զանազան է. նորա համը և հոտը թեթև է և չէ այնքան նեղկած, եթէ շատ ջուր ունի իւր մէջ. բայց եթէ պարունակութէ շատ աղեր, այնուհետև համը խայթող ու սաստիկ է. եթէ փակումէ իւր մէջ շատ վառելի նիւթեր, այնուհետև նորա գոյնը մոյգ է և հոտը կծու։ Միզի պարագայքը կախ են ըմպելիների որպիսութիւնից և շատութիւնից, ջերմից և ցրտից, և մարմնի ընդհանուր դրութիւնից։ Արտի շարժողութիւնքը նորա պատրաստութեան վերայ մի առանձին ազդեցութիւն ունին, որովհետև նա այս միջոցումը կորսանումէ իւր գունանիւթը և հրևումէ բոլորովին պարզ, ինչպէս ջուր։ Միզի պատրաստութեան որքանութիւնը կախ է ըմպելիների շատութենից, արիւնի, կլեմային, հասակի, տարու եղանակների զանազանութենից և այլն։ Նորա փոփոխութիւնքը ուշադրութեան արժանի են հիւանդութիւնների մէջ, ուր նա ստանումէ երբեմն ամենևին կրակի պէս կարմիր, կանաչային և սևորակ գոյն, և իւր հոտի մասին էս շատ ցլատեսակ է առողջ դրութեան մէջ թափած միզեցը։

ՄՕՐԹԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔԸ.

Մենք յառաջուց ձանաչել ենք մորթը ինչպէս ընդհանուր ախտի և շօշափութեան աղբիւր. բայց նա կենդանական մարմնին հասուցանումէ և այն օգուտները, որ կամենինք քննել այս տեղ։ Նորա բոլոր մակերևութի մէջ վերջանումեն բազմաթիւ փոքրիկ շնչերակներ, որ անդադար դուրս են շնչում մի ջրային գոլորշի և գոյանում լինում մորթը արտաշնչութեան գործարան։ Վասնի որ մեր մորթից հրաժարված դիջութիւնը չէ փոխարկված քըր-

տինք, անհրաժեշտ է մեր զգայարաններին և կացուցանումէ անզգալի արտաշնութիւնը. յետինս սեմական է ոչ թէ միայն շնչաւորներին ազդին, այլև բուսականներին: Սոցա բոլոր անուշահոտ նիւթերը ցնդումեն օդի մէջ, զոր օրինակ լօզմարինի հոտը 30 մինչև 40 մղոն Ափանիայից հեռի տանվումէ տարածվումէ ծովի վերայ և նաւարկուներին հանար լինումէ ստոյգ նշան, թէ մօտ էին նոքա ցամաք հոդելու: Այս հանգերի մասին կամենումէին մի զգուշիւն արտաշնչութիւն նկատած լինել. և ոսկին և արծաթը, ոմանց կարծիքով, կորուսանումեն իւրեանց ծանրութենից. Օդլէ բնագիտին կարծումէ մի ձիշդ կշռով որոշել զոցա կշռի պակասութիւնը 24 տարու մէջ: — Մարդու մարմին արտաշնչութիւնը կարելի է շատ բացայայտ ապացուցանել. զոր օրինակ եթէ մի յատակ և ողորկ հայելի մօտ բռնես մերկ և ջերմ մարմնի հանդէպ, այնուհետև հայելին կը ծածկվի մի թանձր և խոնաւ մառախուղով և կը պղտորվի: Նոյնը որ մնանումենք մի ստորերկրեայ փոսի մէջ, ուր օդը շատ թանձր է, այնուհետև մարմնի բոլոր մակերևութիւից բարձրանումէ մի թանձր տեսանելի մառախուղ. ուրեմն սոյնով անտարակոյս իմացվումէ, որ կայ մի արտաշընչութիւն և առանց մեր դիտութեանը: Նոյնը որ արիւնի շարժողութիւնը արագ է. նոյնը որ կենդանական ջերմութիւնը առաւելանումէ և նոյն միջոցին թուլանումէ մորթը, այնուհետև փոխանակ այս տեսանելի գոլորշուն, երևումէ քրտինքը որպէս մանր մանր կաթիլներ, որ մորթի մակերևութի վերայ նստումեն, միաների հետ միանումեն և կերպաւորումեն խոշոր կաթիլներ: Առաւել յաճախ երևումեն նոքա դլխի, կնճքի, անդամների թևքուածների վերայ և այլն: Արտաշնչութեան ոլքանութիւնը բաւական շատ է լինում: Ընկաստակելի փորձերը, որ արած է մի Սանկտորիոս անունով դիտնական, երկար տարիներ շատ ճշդապէս յատաջ տանելով իւր քննութիւնքը, որոնցով և անմահացուցել է իւր անունը, ապացուցանումեն թէ 8 ժամնա կերակրից ու ըմպելեւոց 5 ժամնա արտաշնչութեան ճանապարհով միանգամ դուրս է գալիս, ըստ որում դորա ոչ մարմնի ծանրութիւնը յաւելայնումեն, և ոչ մի տեսանելի արտաթորութենով կորչումեն: Այլ արտաշնչութեան ոլքանութիւնը չէ կարող միշտ հաւասար մնալ: Մի մանուկ աշխատասէր մարմին ջերմ սահմաններում կամ թէ ամառնային ամիսների մէջ աւելի շո-

դի է արձակուամ՝ քան թէ մի ծեր, հանդիստ մարմին ցուրտ կողմերուամ կամ թէ ձմեռնային ամիսներուն մէջ։ Այս տեղ պիտոյ է նոյնպէս յիշատակել թէ մորթը և միզարձակութիւնը որպէս թէ փոխադարձաբար ներգործուամն միմեանց վերայ. եթէ մորթի ծակերից կորչուամ շատ հեղանիւթ, այնուհետև փոքր է դուրս գնուամ միզամանապարհով, և անդրադարձաբար։ Ու հասարակ երևուամ, թէ արտաշնչութեան ողքանութիւնը պայմանաւորվուամ այսպիսի պատճառներից, ղոր օրինակ, արիւնի արագ շրջանակութենից, կենդանական ջերմութեան առաւելութենից, ջեռուցիչ և համեմային ըմպելիների գործածութենից, մորթի թուլութենից և մաքրութենից, սաստիկ ախտերից (ուրախութիւնը, յոյսը բաղմացնուամ նոյան, երկիւղը, զարհուրանքը և տրտմութիւնը փոքրացնուամ նոյան), օդից և նոյա զանազան եղանակներից։ Արտաշնչութեան դլխաւոր բաղադրական մասները են ջուր և հոտառելի նիւթ. այս վերջինը յայտնվուամ ահա իւր հոտով որով կարող է օդը նոյնպէս ապականվիլ, ինչպէս շնչովը։ Հոտառելի նիւթը բաղկանուամ փոսխորհրդոց անուշաղրից որի մէջ երբեմն (և աւելի յաճախ) առաւել նախասպատիս է անուշաղրը, քան երբեմն փոսխորհրդոն։ Ծանր այս բանը. արտաշնչութեամբ դուրս է գնուամ մարմնիցը փոքր չինչ թռչողական և սլքալեան նիւթ, և սորանով կարելի է բացայայտել այն գիւտանելը որ տեսանուամնք, երբ նոքա չետ են գնուամ մարմնի մէջ։ Ամեն մի մարդու արտաշնչութիւն պիտի ունենայ մի առենևէն առանձին յատկութիւն. սորան ապացոյց է հոտառական զօրութիւնը որ արտաշնչութեան առանձին յատնութեամբ դատնուամեն շունք իւրեանց տէրերը և որոշուամեն նոյանց բոլոր միւս մարդկերից։ Արտաշնչութեան մէջ շատ յաճախ ներկայ են նմանապէս կերակրուսնների և ըմպելիների ջոկ ջոկ հոտերը. այս տեսանուամնք ղոր օրինակ. երբ որ միսը սոխ, սխտոր և ծնեբեկ է կերած։ Նոյնպէս պատահուամ շատ անգամ որ բնութիւնը նոյա միջնորդութեամբ հեռացնուամ հիւանդութեան վնասակար նիւթերը, այդ միջոցին արտաշնչութիւնը ևթարկվաճ էր բաղմօրինակ փոխոխութիւններ։ Ուրեմն արտաշնչութեան օգուտը այն է առաւելապէս, որ նա արիւնը ազատուամ չարխափանց ջրից, որ առ հասարակ նոյանով դուրս են ձգվուամ մարմնիցը թռչողական բարկ և վնասակար նիւթեր։ Բայ ի դորանից, նա խոնաւացնուամ վերնամորթը և

պահպանումն մորթատուփերի հարիւրաւոր հազած քնքշութիւնը։—Այլ մորթը ունի ոչ թէ միայն արտաքինական անօթներ, այլև այնպիսի անօթներ, որ ներս են ծծումբ իւրեանց մէջ արտաքին նիւթեր. զոցանով ատմոսֆերայից հասանումն մարմնին մի նուրբ խոնաւութիւն։ Այս ներս ծծողութեան ապացոյցը տալիս են մեզ ներզործութիւնքը բժշկական դեղերի, որ մորթի վերայ դրված թաւանցումն մարմնի միւս մասերի մէջ. զոր օրինակ կապելն է մկնդեղից (արսենիկից) շինած մի օճանելի ներս տրորելով թունաւորել բոլոր մարմինը. նոյնպէս ներս է ծծումբ մորթը հիւանդութեան նիւթերի վնասակար ներզործութիւնը, զոր օրինակ ծաղկացաւի և ժանտախտի. այլև տեսանութիւնք, որ ծարաւը չքանումն, երբ որ զտանվութիւնք խոնաւ ատմոսֆերայի մէջ, կամ լուացվութիւնք սառն բաղանիքով։ Նմանպէս արտաշնչական, նոյնպէս և ներսծծողական ամանները մորթի կտրող են իւրեանց զրգռականութեամբ կծկվիլ կամ թէ թուլանալ։ Ախտերից և սրտի խռովութենից ստատկանումն կամ նուազումն այս զրգռականութիւնը. ախորժական ախտերից առաւելանումն դա, բայց անախորժներից պակասումն. պատահելով վերջինս, մորթը ստանումն մի խոշորութիւն, որ տալումն տագի մորթ։ Արտաքին երեսը մորթի թէ մարդու և թէ կամենակեր անասուններից առաւելով շատերի, պատած է մազերով. սոքա էին որպէս թէ բուսականներ կենդանական յատակի վերայ և յատաջանումն սոխատոր արմատներից և էին բազակ, թեքուն, ձղտական բայց ամուր թելեր, որ, ըստ որում զոզաւոր էին միջից, կարող են տալել փողովակներ կամ անօթներ։ Այս տեղ պիտոյ էր նոյնպէս յիշատակել զոլանց, ըստ որում պարունակումին իւրեանց մէջ մի հեղային հիւթ, որ տահմանումն մազերի սեփական գոյնը և իւր արտաշնչութենով պահպանումն մազերը փափուկ և իւղոտ։

ՆԵՐՔԻՆ ԶԳԱՑԱՐԱՆՔ.

Մնք յառաջուց տհա ծանօթացանք արտաքին զգայարաններին. հոդու զանազան կարողութիւններն և ներզործութիւնների վերայ հիմնաւորված են այն բանները որ տալումն Ներքին զգայարան, որոնց առնչի մօտ քննութիւնը պատկանումն Հոգեբանութեանը։ Այս տեղ պատ է մեզ յիշատակել նորանց այն պատճառով

միայն, բան որում շատ խոր և ամուր էր այն կապակցութիւնը որ կայ հոգու և մարմնի մէջ։ Հոգին ունի իւր յատուկ զօրութիւնքը, որ մի հայեցուածով առնևևին անկախ էին առնեայն մարմնեղէն նիւթից, բայց այդու առնեայնիւ կապող էին զանազան մարմնեղէն նիւթից զանազան կերպով եղանակաւորվիլ, ինչպէս որ մարմինը կարող է այլ և այլ տպաւորութիւնք ստանալ ազատ հոգուցը։ Որ օրինակ ուղեղն բարեյարմար որպիսութենից կախ է զատողականութեան ուղղութիւնը. եթէ ուղեղը ձնշվամբ, եթէ նա մի վատաբաղդ պատահարով կամ զարկուածով սասանութիւն է կրել, այնուհետև խառնաւինդրվամբ և միտքը, գաղափարների լծակցութիւնը ընդհատվամբ և մարդս ընկնում ուշաթարձութեան մէջ։ Եթէ պիտոյ էր մեզ զգալ, ապա հարկ է, որ մեր զգայարանքը կամ անմիջապէս կամ թէ միջապէս մի տպաւորութիւն ստացած լինին արտաքին մարմիններից։ Եթէ արտաքին մարմինը առնևևին մօտեցնվում զգայարանին, ապա լինում տպաւորութիւնը անմիջապէս. զոր օրինակ, մեք հոտոտումենք միջնորդութեամբ օդի, որ նորը հոտառելի նիւթերը բերում և մօտեցնում մեր հոտառական ջղերին։ Ուրեմն նախ և յառաջ մարմինը և յատկապէս ջիղերը ընդունում դուրսից մի տպաւորութիւն որ այնուհետև տարածվելով հասանում ուղեղին և այս տեղ մանաւորվամբ հոգուն, որ շատ կամ նուազ պայծառապէս պատկերացնում իւրեան յառաջացած ախտերը։ Ուրեմն հոգու բնակարանը է Ուղեղը, և մեր ճանաչողութիւնների բոլոր արմատական աղբիւրքը դրած են դուրսի աշխարհի տպաւորութիւնների մէջ (այսինքն զգայականութեան և իմացականութեան մէջ)։ Զգայականութիւնը տալիս է մեզ առարկայք և իմացականութիւնը մտածում նորանց։ — Հոգու ախտերովը տեսանում, որ զոյանում զանազան փոփոխութիւնք մարմնի պայմանների մէջ. որպէս Խոլո-ընենով սաստկանում արտի շարժողութիւնը և երակների զարկը, առաւելանում մուսկուլների զօրութիւնը և շուտացնվում մաղձի պատրաստութիւնը։ Տրոմ-ընենը անդորձ է կացուցանում արտի և ջղերի զօրութիւնը. դորա մէջ չքանում ախորժակը և նուազում մարմնի նիւթը։ Նէվ-ը դադարեցնում արիւնը երակների մէջ, խորտակում արտի քաջութիւնը և մահանման դառնաթափութեամբ պատում երեսը։ Սէբ Ցյալ և Ռոբախոնինը, եթէ չէին շատ չափազանց, ձեռնտու են մար-

թի արտաշնչութեանը, փութացնումն երակներուն զարկը, զօրացնումն ախորժակը, թեթեւացնումն արիւնի շրջանակութիւնը և տալիս են բոլոր կենդանութեանը մի ուրախ և զուարթ վերհամբարձութիւն։ Ծանոթ այս բանը. ի՛նչքան աղէկութիւն ունի հոգին երեսի և աչքի վերայ, ի՛նչպէս պատկերանումէ հոգին այդ երկուքի մէջ. ահուդողի աղաղակը, ուրախութեան հրճուանքը, բարկութեան գոռացքը և այլն. ի՛նչպէս ամենևին զանազան էին միմեանցից։ Վ՚երջապէս համարեա թէ հոգու կաքն է միայն, որ առիթ կամ պատճառ էր տալիս մարմնի ամեն մի շարժողութեանը։ Ա՚յս բաներուն վերայ տուած են հարկաւոր մանրամասնեայ տեղեկութիւնքը Ս. Նազարեանցի Հոգեբանութեան մէջ, որ տպած է Մոսկվայում 1851 թուականին, դրոց լեզուով. ցաւումենք որ հեղինակը մի առանձին խորհրդով ստիպուած է եղած գրել այդ դիտքը գրաբառ ոճով։

(Շարունակութիւնը յետոյ։)

Ս. Ա-եոպէեանց։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ։

—

— Վերսայլ — Փարիզի Մուրագեան և ազգային վարժարանքը — Ամբրոսիոս և Խորէն վարդապետք — Լամարթինի ներդաշնակութիւնքը Հայերէն — ուրիշ դրքերի ձեռնարկութիւնք, — Հ. Ղեոնդ Ալիշանեանց, (Նահապետ) — Նորա նուագները (Հայրունի) — Դրիդոր Վարդապետ Կաղզուանճի կարապետեան — Ընծայ — Ընծայի ընդունելութիւնը — Ընդունելութեան ընդդէմ մի թերթ, — Կարապետ Վարդապետ Շահնազարեանց — Հին Հայ հեղինակների տպագրութիւնը «Ըստ Հայ մատենադրաց» անունով — Ագամեան տպարան — Փեղկը և Պաւլինե — Ազգային երիտասարդք Փարիզի մէջ — Արեւմուտք կիսամադիրը — Թիւրքիայում, Հայ օրագրերի օրէ օր շատանալու յայտարարութիւնքը, Ցենսօր Թիւրքիայում տպելի դրքերի և օրագրերի վերայ»։

Ա՛ի նոր քաղաք մտանելով ես ոչ միայն անարժան, այլև ամենի եմ հատարում փողոցներ չափել դատարկ նորասիրութեան պատճառով։ Ես չտեսած հաւատում եմ, որ կայսրների, թագաւորների և դուքսերի ապարանքները բոլոր մահկանացուների բնակարաններից ամենափառաւորքն են։ Այո՛, ես գնացի Բեռլինի մուզէոնը, Լոնդոնի կենդանաբանական պարտէզը, բրիտանական հռչակաւոր մուզէոնը, Լոնդոնի համաշխարհական հանդիսարանը, բայց այդ դիպուածներում, գնալու խորհուրդս եղած է մի բան ուսանել։

Շեկսպիրը, անգլիական թեատրոնի պարծանքը և բանաստեղծական մեծ կախարդը, վաղուց դրել էր իմ մէջ մի ցանկութիւն Դուվերը և վինդզորը տեսանելու։ իսկ սորանց տեսանելուց յետոյ չէր կարելի չգնալ Վերսայլ, ուր գարերով գարբնվել է Ֆրանսիայի վիճակը։ Վերսայլ.... այժմ հեշտ արտաբերելի բառ։ բայց Լուդովիկոս տասնեւչորսերորդի ժամանակ.... Վերսայլը էր բոլոր եւրոպական թագաւորների նախանձելու առարկան։ Վերսայլն ճոխութիւնը, նորա փանտաստիկական շռայլութիւնը, նորա պատշաճի դաղափարքը երկար ժամանակ ազդեցութիւն են դործել եւրոպական պալատների վերայ։

Ես տեսայ այն ապարանքը, այն տները, ուր ապրումէր Ֆրանսիան. այո՛, Ֆրանսիան, որովհետև Վերսալը էր այս գործական, բայց Թեթևամիտ, աղդի պարծանքը։ Ֆրանսիացին, մի նուիրական հպարտութեամբ ցոյց էր տալիս Վերսալը օտարներին, կամելով ասել, թէ ահա՛ այն գոգաւոր հայելին, որի կենդրոնում հաւաքված են Ֆրանսիական փառքի, պարծանքի, հասկացողութեան և կարողութեան ճառագայթքը։ Թէև դոյն այդ պարծանքի առարկան, ժամանակներից յետոյ, դարձաւ Ֆրանսիացոց համար մի խայտառակիչ վկայութիւն թագաւորների ապգամոլաս շռայլութեանը. և յայտնի է, որ Ֆրանսիայի դրամական խնդիրները կարգի դնելու համար կալմած ժողովից դուրս ցոլացաւ Ռեվոլիւցիայի լոցը։

Գալատի զարդարանքի, շռայլութեան և միւս բոլորի արժէքը լիապես գնահատելու համար պիտոյ է հարիւր տարիներով յետ երևակայել իւր անձը, երբ ոչ այսչափ, ինչպես այժմ, ծաղկած էին գիտութիւնքը և արուեստքը։ Այսպիսի գատաստանով մանաւանդ կ'երևի Վերսալի մեծութիւնը, ենթադրելով, որ այժմեան եւրոպական լուսի տակ քննելով ամենայն մարդ խոստովանութեամբ զարմանալի։ Վերսալի պարտէզը զարդարած է հարիւրաւոր գեղեցիկ մարմարիոնեայ արձաններով, այն տեղ են բոլոր մարդերի և աստուածների արձանքը, որ պատկանութեան ցուցական և հռովմէական հնութեններին։ Ժամանակը, անձրևի կաթիլները սևացրել են և մաշել են այդ հոյակապ արձանների վերին մակերևոյթքը, այնպէս որ այժմ կորուսանելով իւրեանց փայլը և ծաղկաւեր դառնալով շարժուձեն տեսանողի կարեկցութիւնը։ Մարմարիոնը չէ՛ դիմանում ժամանակին....ժամանակը թագաւորում տիեզերքի վերայ. նա և՛ անցողական է և՛ յաւիտենական, նորա ատամները պիտի մաշեն մեզ ամենեսիս....միայն մի բան, որ դիմանում ժամանակի հոսանքին, որի վերայ չէր կարող ժամանակը նոյն ազդեցութիւնը գործել, ինչ որ ուրիշ բաների վերայ, այդ բանը....էր ճշմարտութիւնը։

Այս, ժամանակի ազդեցութեան ենթարկված, արձանների մէջ կանգնած էր և մեր Արշակունի Տիգրանի արձանը, մեծ հմտութեամբ կատարված քանդակագործութիւն։ Սառն մարմարիոնը հոգի է ստացել ճարտարագէտ քանդակագործի ձեռքի տակ. և արձանի իւրաքանչիւր գծերից դուրս է երևում բուն հայութեան տիպը։ Նորանից ոչ շատ հեռի կանգնած էր Մհերդատի արձանը։

Ես ներս մտայ Վերսալի այն բնակարանքը, ուր երբեմն եղ էր դալիս մի կնանք, թունաւորված լիւր հրապոյրներով....Վերսալը, արդարև մեծապես զանազանվում Վինդզորից։ Սա թողեց մեզ մի սար-

սափեղի յիշատակ, իւր մէջ պատահած ղարհուրելի գործերի, որոնց ամեն մինը եօթն հոգի է ստացել Շեկսպիրի արարչագործ գրչի տակ. բայց Վերսայլի հետ կապած է մի վերին աստիճանի շռայլութեան յիշատակ: Շռայլութիւն նիւթական կողմից, շռայլութիւն հոգու, սիրու և այլ ախտերի, Վերսայլի օդը միշտ վարակված է եղած սիրու ախտով, Վերսայլի բնակիչքը և այցելուքը միշտ վիրաւորվել են դէպ ի սիրտը Աստղիկ որդու նետերից.....

Յին ամայացած տները, որոնց մէջ մնացել են այժմ նոցա նախկին բնակիչների պատկերքը և կահ կարասիքը, այն կանացի և խորհրդական առանձնարանքը....խուռն յորձանքով յիշեցնումեն Լուդովիկոսները Գիւբարրի, Մենթենոն և Փոմիադուր սիրուհիքը:

Յմեն մի սենեակ, ամեն մի յիշատակարան զարթեցնումէր իմ մտքի մէջ ֆրանսիական մրրկալից պատմութիւնը սկսած Լուդովիկոս Տասնեւչորսերորդից մինչև պօլիտիկական մեծ աւազակը: Ամբողջ վեց ժամ մնաց գալուց յետոյ երեկոյացաւ, բայց ես որոշեցի գիշերել այն տեղ և նայել Վերսայլի վերայ գիշերի խոր և խորհրդական լռութեան մէջ:

Կէս գիշերն անցել էր: Մինչ ամենայն ոտք կտրվեցաւ, մինչ ամենքին ցերեկի ջերմութենից թուլացած անկողին մտան քնով զօրացնելու համար իւրեանց ոյժը, ես մտայ Վերսայլի ծառաստանը: Պայծառ էր գիշերը: զովարար քամին մխիթարութեամբ արևից տանջված ծառերի տերևքը, որ այժմ աւելի ուրախ և զուարթ խշխշումէին: Լուսինը ամենայն փառահեղութեամբ լողումէր կապոյտ երկնքի վերայ: Գերեզմանակա՞ն լռութիւն....Բնակիչներից ամայացած պալատը, սարի վերայից, տխուր ճակատով նայումէր իւր ոտքում գտանված լճերի և այժմ անջուր աւազանների վերայ: Այդ ժամերում բիւրաւոր ճրագներով լուսաւորած ապարանքը խաւար էր այժմ....

Ջալար յիշատակներ և բիւր մտածութիւնք, ասես թէ, պատեցրալ ունէին ուղեղիս մէջ: Ես կոխումէի գետինը այն ծառերի տակ, ուր պալատական տիկիններըը ժողովումէին ծնկաչոք ասպետների սիրու հաւաստիքը: Ես կանդնած էի մի այնպիսի տեղում, ուստի երևումէին գլխաւոր պալատը և մեծ ու փոքր Տրիանոնքը: Եւ եթէ այն րոպէին, հարիւրաւոր տարիներով, յետ գնար ժամանակը, եթէ մտքիս և յիշատակիս մէջ կենդանացած մարդերի մարմինքը ևս կենդանանային ապա ուրեմն պիտի տեսանէի անշուշտ թէ ի՛նչպէս անբաղդ Պոլոնիացի Մարիա Լէշչինսկին, դուրս էր գալիս մեծ Տրիանոնից անտառի և գիշերի առանձնութեան մէջ ողբալու իւր թշուառութիւնը, գիշերին, ծառերին և հովերին բանալու իւր սիրտը: Պիտի տեսանէի անշուշտ, թէ ինչպէս փոքր Տրիանոնի պատուհանում դրվումէր թագաւորի սիրականի ձեռ-

քով խորհրդաւոր ճրագը, և թէ ինչպէս Թոյլ և մեղկ և կարդինալին ստրկացած Լուդովիկոս տասնևհինգերորդը դուրս էր գալիս պալատից, ոգևորված միմիայն այդ խորհրդական ճրագի լուսով....

«Հո՛ւռ, հո՛ւռ, հո՛ւռ», ընդհատեց լռութիւնը աւերակների ժառանգը։ Ես հետևեցայ ձայնին, տեսանելու Ամենասի նուիրականը։ Նա թռել էր մի հոյակապ արձանի վերայ, որ կանգնեցուցած էր քարաժայռի տակ, մի բոլորակաձև հրապարակում։ Նայեցայ չորս կողմն, կամելով հասկանալ, թէ ի՛նչ տեղ էր այդ, և ահա յիշեցի ցերեկը ինձ առաջնորդող սպասաւորի պատմածը։ Այդ տեղ լինում էին երբեմն երաժըշտական նուագածութիւնք, որ կարգում էր ֆրանսիական թագուհիներից ամենաթշուառը — Մարիա Անտուանետտան.... Ցիշտակը այս անունի, մի կախարդական գաւազանի զարկուածքի պէս դղրդեց ուղեղս։ Աչքիս երևեցան իսկոյն ֆրանսիական պուպլիցիստները, Մարաթը, իւր սպիտակ կեղծաւոր, որ խոստանում էր փրկել թագուհու կեանքը։ Մի փոքրից յետոյ, ասես թէ, տեսանում էի խուռն բազմութիւն կատաղիների, ձայն, աղաղակ, խռովութիւն, էշաֆոտ, դահիճ և երկու կտրված ու արիւնով շաղախված դունաթաւի գլուխներ։ Ես ճանաչեցի Լուդովիկոս տասն և վեցերորդը և Մարիա Անտուանետտան.... նոյա կտրված գլուխների յար և նման մոմեղէնքը տեսած էի Լոնդոնում մադամ Տիւսսօի մօտ։

Ձէ պիտոյ մոռանալ, որ վերապրելի փայլողութիւնը սկսեց շինանալ այն ժամանակից, երբ ֆրանսիական աղգի սիրտը ցրտացաւ դէպ ի Լուդովիկոս տասն և չորսերորդը։ Այս ցրտութիւնը հաւասար չափով աճում էր, որքան Հ. Լաշէզ, թագաւորի խոստովանահօր ազդեցութիւնը Լուդովիկոսի վերայ։ Ասես թէ աղգը ղգում էր դորա հետեւանքը և արդարև Լուդովիկոսը մեռաւ Ցիսուսեան (եղուխա, ճիզվիթ) դարձած։

Առաւօտը վաղ վերադարձայ Փարիզ։

Փարիզի մէջ կան երկու ազգային վարժարանք, մինը Մուրադեան, իսկ միւսը Հայկական։ Առաջինը գտանվում Մխիթարեան միաբանութեան իշխանութեան տակ, և վարժարանի ներկայ կառավարիչը է Հ. Գևոնդ Ալիշանեանը։ Վարժարանը գտանվում Սէյնի միւս կողմում, քաղաքի ծայրում։ լաւական գեղեցիկ շինուածք, երկու յարկով, որի վերայ կարելի է ժամանակով յաւելայնել և երրորդ յարկ, եթէ միայն հիմքը կարող էր երաշխաւոր լինել յաւելուածի և ամբողջ շինուածքի ապահովութեանը։ Գլխաւոր շինութեան մէջ բոլանդակվում են մատենադարանը և մի փոքրիկ հաւաքոյթ ֆիզիկական գործիքների, և հանքաբանական և կենդանաբանական օրինակների։ Այն տեղ են

գարձեալ հիւրընդունարանը և կառավարչի և վերակացու կամ դաստիարակ կրօնաւորների բնակարանքը։ Գլխաւոր շինութեան աջ ու ձախ կողմից շինած են նոյնպէս բնակութիւնք, որոնցից մինի մէջ բովանդակվումեն աշակերտների ննջարանքը, ամենայն աշակերտի համար առանձին, իսկ միւսի մէջ դասատունքը, երեք կարգ բաժանված։ Վարժարանը ունի և մի բաւական գեղեցիկ և բաւական ընդարձակ մատուռ։

Աշակերտքը այդ դպրոցի որդիք են հռովմէական դաւանութեան Հայերի, և բուն հայկական կամ աւետարանական Հայերի ղաւակները տեղ չեն կարող գտանել այդ դպրոցի մէջ։ Աւելորդ է մի խօսք ևս ասել դպրոցի ուղղութեան բնաւորութիւնը սահմանելու համար, ըստ որում աշխարհին յայտնի է այսօր, թէ ի՛նչ ասել է աբեղայական դաստիարակութիւն։ վարժապետքը մեծ մասնով են Մխիթարեան սբեղայք, մնացածքը մի երկու ֆրանսիացիք։ Արժանահաւատ անձինք, որ շատ տարիներով բնակվումեն Փարիզում, վկայեցին մեզ, թէ ոչ մի աշակերտ, մինչև այժմ, Մուրադեան վարժարանի մէջ ստացած կրթութեանմէ չէ կարողացել մտանել որ և իցէ ֆրանսիական բարձրագոյն ուսումնարան։ Եւ այսպէս Սամուէլ Մուրադի բարի խորհուրդը չէ կատարված և չէ կատարվում էապէս։ սորա պատճառը դրած էր նորա նոյն իսկ կտակի մէջ որով նա լինելոց դպրոցի կառավարութիւնը յանձնուամբ Մխիթարեան աբեղաների տնտեսութեանը։ Եւ չգիտենք, թէ ի՛նչ է Մխիթարեանց իրաւունքը, որի վերայ հիմնվելով ընդունեմն միմիայն հռովմէական Հայերի որդիքը, չնայելով կտակողի վերջին, ուրեմն և նուիրական կամքին, որով աւանդումէր կտակը համօրէն ազգի օգտի համար։ Ինձ պատահեցաւ խօսք բանալ պատուելի կառավարչի հետ, թէ կարող էին արդեօք բուն Հայոց որդիքը մասնակից լինել Մուրադեան շնորհին։ ինձ պատասխանեց, թէ այն պատահած անախորժութիւններից յետոյ, որով կասկածելի էին երևել Մխիթարեանք, որպէս ստիպողք աշակերտներին ուրանալ իւրեանց բուն եկեղեցին, հարկ են համարել, խոյս տալով յառաջանալու անախորժութիւններից, չընդունել այլ ևս բուն Հայոց որդիքը։ Մեր կարծիքով, եթէ մաքուր էր Մխիթարեանց խղճմտանքը (կա՞), չէ պիտոյ ապերախտ գտանվէին ընդդէմ բարերարին, չէ պիտոյ պապականութիւնը որպէս մի պատնէշ կանգնեցնէին աղքատ Հայերի որբերի և հանդուցեալ Մուրադի շնորհի մէջ։ նորա պիտոյ է կամակար հրաւիրէին, որ բուն Հայոց կողմից գտանվի վարժարանի մէջ կրօնական դաստիարակ։ Նորա չէն արել այս և չէն առնելու։ ապա եթէ Հայոց աղգը յայտնէ իւր իրաւունքը մանակից լինելու կտակին, օրէնքը պիտի ստորագրեալ պատասխանէ Հա-

յերի օգտի համար։ Եւ մեղ պէտք է թվում, որ մեր նորընտիր Հայրապետը չթողուց այս խնդիրը առանց ուշադրութեան։

Ինձ պատմեցին փարիզում, թէ Մխիթարեան միաբանութիւնը, սորանից մի քանի տարի յառաջ, շինել է մի աղօթք, որ Մուրադեան տղայքը երգեն երեկոյ առաւօտ։ Աղօթքի բովանդակութիւնը է մի խնդիր առ Աստուած, որ բոլոր Հայերը պապական դառնալով միանան պապական փարախի մէջ։ Այդ աղօթքը ներկայացուցված է Պապին և արժանացած է ինդուլգենցիայի։ Շատ և շատ ցաւեցայ լսելով այս ոչ միայն տխուր այլև զզուելի բանը, ոչ այն պատճառով, որ այս անբնական աղօթքով կարող էին նոքա բարկացնել անյիշաչար Աստուածը, այլ նորա համար, որ անմեղ աշակերտների սիրտքը կարող էին վարակվել ֆանատիկոսական կոյր ախտով, որի հետևանքը, ցաւելի է ասել, եղած է և է կամակոր եղբայրատեցութիւն։

Ինձ շատ յարգելի է Հայր Ղևոնդի անձը, այս պատճառով ևս թախանձելով խնդրեցի դադարեցնել այդ անբնական աղօթքը։ բայց վերապատուելի Հայրը ուրացաւ և աղօթքի գոյութիւնը անգամ։ Նա ասաց ինձ, թէ դուցէ որ և իցէ աղօթք եղած լինի դպրոցում Հ. Գաւիսայէլ Թրեանցի կառավարութեան ժամանակ, բայց իւր օրում երբէք ոչ, և թէ որոշ տեղեկութիւն ևս չունի Թրեանցի օրով եղած աղօթքի մասին։ Միւս կողմից այլ մարդիկ և երբեմն Մուրադեան վարժարանում դաստիարակած աղգային պատանիք, թերևս Հռովմէական դաւանութենից, հաստատեցին մեղ, թէ արդարև եղած է մի այդպիսի աղօթք Թրեանցի ժամանակ և թէ մինչև այժմ ևս շարունակվում։ Ես չկարողացայ այս երկու տեսակ խօսքերը հաշտեցնել միմիանց հետ, մնայ որ վերստին (Յիշատակարանիս միջնորդութեամբ) խնդրեմ վերապատուելի Հ. Ղևոնդից, շնորհ առնել դադարեցնել այդ վնասակար աղօթքը, եթէ չկամին առնել տալ դաւթակղութեան, եթէ չկամին բորբոքել մի մեծ տարաձայնութիւն։ Աղգի միութիւնը և աղգային անդամների դէպ ի իրեար ունենալու եղբայրական և հարազատ արենակցութեան սէրը այնքան ծանր կշիռ, այնքան մեծ արժէք ունի իմ աչքում, որ այդ բանի համար, թէ ինչ ասես պատրաստ եմ։ . . .

Ակարծեմ, որ անյայտ լինի Մխիթարեանց, թէ պապականութիւնը ուշացած է Հայերի համար, և այդ խորհրդով կատարված աղօթքները չեն անցանում միջնորմից դէպ ի վեր։

Ուն աղգային անուանված վարժարանը գտանվում քաղաքից դուրս, գլուխն բարձրացուցած արուարձանի վիճակ մտոցում։ Վարձով բռնած տունը վարժարանի համար, անտարակոյս, չունի այն յարմարութիւնները որ ունի Մուրադեան վարժարանը, թէև մի և նոյն անյար-

մարուԼթեան ենԹարկված են երկուքը ևս, այն է քաղաքից ՀեռաւորուԼթիւնը, որ ծանրացնելու էր անտարակոյս օրինաւոր վարժապետների այցելուԼթեան և ուսուցչուԼթեան գինը, և այս է մանաւանդ պատճառը, որ շատ հասարակ մարդիկ դաստատու են այդ գպրոցներում: Ազգային վարժարանը բաղկանումէ մի բաւական գեղեցիկ տնից, ուր գտանվումեն արդոյ կառավարիչների բնակարանքը, հիւրընդունարանը և մի սենեակ, ուր կատարվումէ Աստուածային պաշտօնը: Տունը ունի մի բաւական ընդարձակ պարտէզ աշակերտների և կառավարիչների ՀանգստուԼթեան համար, պարապ ժամերում: Բայց ի ասացեալ տնից, նորա մօտ գտանվումեն երկու փոքրիկ շինուԼթիւնք, ուր բովանդակվումեն դասատունքը և աշակերտների ննջարանքը:

Ընդ ամենն տասն և եօԹն աշակերտ գտայ ես ազգային վարժարանումն, որ պարապումէին նախակրԹական պարզ առարկաներով ինչպես նաև Մուրադեան վարժարանի մէջ: Գպրոցը գտանվումէ Ամիրոսիոս և Խորէն յարգելի վարդապետների անմիջական տեսչուԼթեան տակ, որոնցից իւրաքանչիւրքը դաստատու են նոյնպես մի քանի առարկայի: Գպրոցը բացված է Սարգիս, Գաբրիէլ և Ամիրոսիոս վարդապետների ձեռքով, երբ սոքա կտրվեցան պապականուԼթեան հետ հաղորդակցուԼթենից. գպրոցի ծանրուԼթիւնը գտանվումէ Կոստանտնուպօլսի Հայերի յուսերի վերայ: Որովհետև ընդդէմ է առողջ բանականուԼթեան որ և իցէ գործ սկսանել առանց մի հաստատ հիմք ունենալու, այս պատճառով ևս ազգային գպրոցը, որպէս արդիւնք մի պատահական կացի, առանց որ և իցէ ապահովուԼթեան, այս րոպէումս գտանվումէ նեղուԼթեան մէջ դրամական մասին: Մեք Ռուսսիայի Հայերս սոՀվոր չենք այսպիսի գործ կատարել, բայց փորձերը, որ կատարվեցան քանի և քանի անգամ Տաճկաստանի, Կոստանդնուպօլսի մէջ, հաստատումեն, Թէ մեր այն տեղ գտանված ազգայինքը շատ դիւրաւառ են դէպ ի այսպիսի գործեր, որ յետոյ շինչանումեն շուտով չլինելով հնարք պահպանուԼթեան: Պէտք էր մի փոքր աւելի շրջանկատ լինել այսպիսի ծանրակշիռ գործերում. պատճառ, մի քանի տարի ոտքի վերայ պահել մի գպրոց և այնուհետև խափանել արդէն, յայտնի և բաւական զգալի վնաս է: Գումարը արծաԹի, որ գործ էր դրված այդ քանի տարու Համար, կարելի էր, աւելի շատ օգտի յուսով, հիմնաւորապես գործ դնել, մանաւանդ որ գպրոցի պէս բանը գոնէ վեց եօԹն տարի ժամանակի է կարօտ, որ կարողանայ ցոյց տալ մի արդիւնք, մի պտուղ. իսկ եԹէ նա փակվումէր դեռ ևս մի անգամ չաւարտած իւր ուսման շրջանը, ի՛նչ օգուտ աղգին:

Վարիզեան ազգային վարժարանի պահպանելը կամ փակելը ներկայումս Համարեա Թէ Հասարակաց խոսակցուԼթեան նիւԹ է Տաճկաս-

տանում։ Ոմանք համարումեն օգտակար, իսկ ոմանք ուրանումեն դրականապէս այդ դպրոցի օգուտը։ Երկու կողմը ևս յառաջ են բերում զանազան համոզիչ և ճշմարտանման փաստեր։ Մեր դրութիւնը այսպէս է։ ա) Դպրոց հարկաւոր է հիմնել և պահպանել այն տեղ ուր է աղքը։ բ) Դպրոցը հիմնելուց յառաջ ապահովել նորա միջնորդեալ ուղղութիւնը, որ աղատ մնայ ամենայն պատահարների երեսից։ գ) Դպրոցից յառաջ հոգալարձուներ դնել օրինաւոր աղգային դաստիարակներ պատրաստելու համար։ դ) Աղգային դպրոցը, աշխարհական լուսաւորութիւնը չշփոթել կրօնի կամ կրօնաւորների հետ։ ե) Դպրոցի կառավարութիւնը յանձնել ուսումնական աշխարհական անձերի։ զ) Մերժել հոգևոր վիճակից մարդերի իրաւասութիւնը որ և իցէ աղգային աշխարհական դպրոցի վերայից։ է) Դպրոցը վարել ճիշդ եւրոպական ուղղութեամբ։ ը) Դպրոցի մէջ աւանդվելու ուսումնքը և դիտութիւնքը յառաջ վարել եւրոպական երկրորդ դասակարգի վարժարանների ընթացակցութեամբ։

Որ գուտը մի վարժարանի, որ հիմնված էր այլ կանոնների վերայ, մեք ուրանումենք դրականապէս և ցաւելով աղգի կողմից ղուր տեղը գործ դրված արծաթի վերայ, բողոքումենք այն մարդերի ընդդէմ, որ զանազան առիթներից և պատեերից ստիպված համոզումին աղգին ձեռք զարկել մի անհիմն գործի։

Ներժանապատիւ Ամբրոսիոս և խորէն Գալֆայեան վարդապետքը աշխատումեն իւրեանց կարողութեան չափ դպրոցի վերայ, ինքեանք մանաւանդ ենթարկվելով նեղութիւնների և ծանր ծանր պատասխանատուութիւնների, որ յառաջացած կամ յառաջանալու էին դպրոցի տնտեսական մասնում գտանված անկարգութեան պատճառով։ Շատ և շատ ցաւելի է նոցա վիճակը և ցանկալի էր, որ աղքը մի փոքր կարեկից լինէր նոցա վշտերով նոցա ապագան և կորղելով այն վհատական դրութեան միջից որի հորիզոնում արդէն իսկ երևումեն յուսահատութեան անմխիթար ամպերը։ Գործ կատարել, ուսուցանել, հեղինակութիւն կամ թարգմանութիւն առնել առանց հոգու և սրտի անդորրութեան, անհնարին բան է, և եթէ վերջին ըզրութիւնքը գործ դրված թերևս հնարաւորվի, այնու ամենայնիւ կարելի չէ յուսալ մի տիրապէս պտղաբերութիւն։

Ներժանապատիւ խորէն վարդապետը այս օրերումն գուրս տուեց Լամարթին Ֆրանսիական բանաստեղծի Les Harmonies մակագրով տաղերգութիւնների հայ թարգմանութիւնը հին լեզուով։ Աղգային բանասէրքը, մինչև այժմ չկարողացան հասկացնել մեր բոլոր հեղինակներին թէ մի հին և մեռած լեզու, որ կորուսել էր իւր իրաւունքը ընկերական կեանքում, չէ կարող միջնորդ լինել կենդանի ժողովրդի մէջ

գաղափարք ներս լերլելու համար։ Անտարակոյս աւելի հեշտ է հին լեզուով թարգմանել, մանաւանդ, ոտանաւորը, բայց միթէ հեղինակի նպատակը պիտի լինի հեշտ կերպով կատարել մի գործ, երբ այդ եղանակը անօգուտ էր ժողովրդին։ Արդարև մեծ աշխատութիւն է յարգելի վարդապետի կողմից, ստանաւորով թարգմանել ոտանաւորը, որ գրված էր օտար լեզուով և յաւումնք, որ այդքան քրտինքով յառաջ եկած գործը մեռած է ազգի համար։

Մենք յաւումնք մանաւանդ արդոյ վարդապետի աշխատութեան քան թէ այդ գործը մեր ազգին անհասկանալի մնալու վերայ. Հայր խորէնին չէ յաջողվել ընտրութիւնը թարգմանելու գործի մէջ։ Աւելորդ չէ մի քանի բառ խօսել այս մասին և աւելի բացայայտ կերպով ասել մեր կարծիքը։

Ոչ ոք չէ տարակուսում, որ Պ. Լամարթինը մինն է արժանաւոր բանաստեղծներից և իւր նորա գործերը արժանացած են լուսաւորեալ աշխարհի համակրութեանը, բայց Լամարթինի գործերը առաջին հարկաւոր բաներըը չեն մի ազգի համար, որի մատենագրական չքաւորութիւնը բարձրացած է մինչև ի կոկիւտոս Հայոց։ Որ և իցէ անդաստիարակ ժողովուրդ միշտ անձնատուր է գտանվում միստիկականութեան, այսպէս և Հայոց ազգի մէջ, որքան մինչև այժմ յաջողել է մեղ քննել նորա հոգեբանական կողմերը, շատ առատացած է միստիկականութիւնը, որ միշտ խափան և արգելք է լինում ճշգրիտ լուսաւորութեան, վերացնելով կորզելով մտքերը այս աշխարհից, ուր պահանջվում գործունէութիւն և շարժողութիւն և ձգելով մի գաղտնածածուկ վերացականութեան մէջ, ուր դադարած էր ամենայն կեանք և շարժողութիւն, և ուր խոստովանված կեանքը էր մի անշարժութիւն և անզգայութիւն։

Լամարթինի Les Harmonies տաղերգութեանների իւրաքանչիւր տողերից միշտ միստիկականութիւն, որ ոչ միայն օգտակար չէ, այլ շատ և շատ վնասակար է, եթէ առողջ բանականութեամբ աչքի տակ ձգենք մեր ազգի վիճակը։ Մեզ հարկաւոր է կեանք և շարժողութիւն, հարկաւոր է յոյս ունենալ մեր անձին և մեր ընկերի վերայ, և առանց լքանելու և վերացական բաների թողնելու մեր մասին հոգաբարձութիւնը, մեր ձեռքով վարել մեր հողը։ Միստիկականութիւնը սեպհականութիւն է յուսահատ մարդերի. շատ անգամ երևելի մարդիկ անյաջող գտանվելով որ և իցէ նշանաւոր գործերում, փոխում են իւրեանց մտքերի տրամադրութիւնը ամենևին անդիտակից, բնական ազդեցութեամբ և ընկնում են որոնել իւրեանց ցաւի ճարը վերացականութեան մէջ։ Այս մի հոգու բարոյական հիւանդութիւն է որով վարակվե-

լով կորուսանումն այնուհետև յոյս և հաւատը իւրեանց վերայ, հանդիսացնումն մի ողորմելի պատկեր մնաւորական մեռելութեան, մինչև ղգայող մարդերի արտասուքը շարժել . . . . Լամարթինի կեանքը անցած է և անցանումէ այնպէս, որ դժուար էր նորան չընկնել միստիկականութեան մէջ։ Զարաչար խաբված է նա իւր կեանքումէ, խաբողը ընակվումէ Տուիլերիու, Լուվրի և Սէն-կլու պալատներումէ, իսկ Լամարթինի համար պիտոյ է ողորմութիւն հաւաքէին, որ ապրէր։ Մի՞թէ ծանր չէր նորան ընդունել ապերախտ բռնակալից 14000 ֆրանկ որպէս ողորմութիւն։ Մեր ընթերցողներին կը մնայ ուսանիլ Լամարթինի դանդատանքի թարգմանութիւնը, որով բողոքումէ նա . . . .

Ասպիսի հեղինակի գործը լինումէ միշտ միստիկական, բայց մեր ազգին հարկաւոր է հեռի մնալ։ Մեզ օրինակ չէ այս դիպուածումէ եւրոպացին, նորա բարոյական և լուսաւորութեան ոտքերը ադամանդից են շինված և միստիկականութիւնը տեղ չէ գտանելու հասարակաց սրտի մէջ, իսկ մեր ազգը կաւեղէն ոտքերով թաւալգլոր ընկած չարաչար կործանութեան անդունդի մէջ, արդէն իսկ լցրել է խելայռատակը այդպիսի դաղափարներով. կրակի վերայ կրակ յաւելացնելը մնծենումէ Հօմէոպատների խելագար առածին similia similibus curantur.

Լամարթինի գործի հայ թարգմանութեան ճակատը զարդարած է մի այսպիսի փոքրիկ պատկերով։ Երևումէ Արարատը, երկնքի վերայ ծիածան և աղաւնին թռչումէ դէպ ի տապանը։ Երկու հրեշտակ, որոնցից մինի գլխի վերայ աստղ և ձեռքումէ քնար ցոյց է տալիս բանաստեղծութեան ոգին, իսկ միւսի գլխի վերայ հրեղէն լեզու և աջոյ ձեռքումէ լռնած մի ջահ լուսաւորումէ Արարատը։ Սորա տակ մի դարնեայ պատկի մէջ գրած են հետևեալ տառերը Ս. Գ. Ա. Խ։ Ա. Այս բոլորը (պատկերը և տառերը) նշանակումեն, թէ Սարգիս, Գաբրիել, Ամբրոսիոս և Խորէն վարդապետքը, իւրեանց մէջ կենդրոնացնելով լուսաւորութիւնը, լեզուագիտութիւնը և բանաստեղծութիւնը լուսաւորումեն խաւարած Հայաստանը։ Մեր համար ոչինչ աւելի դժուար բան չկայ, ոչինչ աւելի ծանր չգիտենք քան թէ յետ պահել մեր ծիծաղը մի այսպիսի տղայական և պատուասիրական գործից։ Ցանկալի էր իմանալ, ի՛նչ է դոյա արածը, որ ապօթէոս են պահանջումէ մեզանից, դեռ ևս չորս միլիոն ազգի երեսփոխան քարոզելով իւրեանց [1]) մեք բողոքումենք։

---

[1]) Տես Յաւելուած ի պատմութիւն վերադարձի, երես 86. տպած Փարիզ. 1858 «Թէև դուշնաքեայք ումանք, բայց այս օրուան օրս չորս միլիոն ազգի մը երեսփոխանք են ճանչցուած գաղղիոյ կայսերանիստ մայրաքաղաքին մէջ։» Մինչ խպտա. բողոքումնիք այս ինքնակոչ երեսփոխանութեան ընդդէմ, Արևմուտքի հետ միասին։ Կ. Իմմանուէլ։

Ի՛միրոսիոս և Խորէն վարդապետքը պարապումեն այժմ Ֆրանսիա-բէնից Հայերէն, Հայերէնեց Ֆրանսիարէն ընդարձակ բառարանների վերայ, թարգմանել են ժողովրդական լեզուով ֆենելընի Տկլեմաքը, որի կէսը արդէն տպած պատկերազարդ և Հոյակապ Պ. Արամի տպարանում Թողումեն կիսակատար և այլ տպարանում նորուց պիտի սկսանեն տպել։ Այս անբնական գործողութեան ստոյգ պատճառը մեք չկարողացանք Հասկանալ։ Պատուելի թարգմանիչքը ասացին, թէ աւելի դիւրագին կը լինի այլ տպարանում նորուց տպել, քան թէ Պ. Արամի տպարանում սկսվածը շարունակել։ Երբ պատահեցաւ ինձ Հարցանել Պ. Արամից այդպիսի թանգութեան պատճառը, նա պատասխանեց, թէ բոլորովին այլ պատճառով Հրաժարվեցան շարունակել սկսվածը, և այս է պատճառը, որ պատուելի թարգմանիչքը յառաջ էին բերել տպագրապետին. թէ նամակ են ստացած Հնդկաստանից, որով գրուվեին թէ առնթ է վերապատուելի թարգմանիչներին բան տպել մի պնդիսի տպարանում, ուր տպվումեր Արեւմուտքը։ Ահա մի նոր գաղափար Հայերի ասիական թանձր պղտորամտութեան. մինչև այս աստիճան մտքի և գաղափարի այլանդակութի՞ւն. չգիտենք ի՛նչ մտածել։ Մնումէ մեղ միայն զարմանալ թէ ի՛նչպէս այդ այլանդակ և տմարդի գաղափար յղացողը կամ այդ խրատաբանութեան Հետևողքը ապրումեն մի և նոյն արևի լուսի տակ, ինչպէս բնակվումեն մի և նոյն մոլորակի վերայ. անդոռնելի կիրք։

Մուրադեան վարժարանի վերայ խօսելով ասացինք, թէ վերապատուելի Հայր Ղևոնդ Ալիշանեանց վարդապետը գտանվումէ Փարիզում, որպէս կառավարիչ Մուրադեան վարժարանին։ Այս արժանապատիւ անձը ծանօթ է Հայոց աղգին մանաւանդ նահապետի անունով։ Նորա աւագ և փոքր Մասիս, Հայոց աշխարհիկ, պլպուլն Աւարայրի տաղերդութիւնքը ջերմացուցել են շատ սրտեր նահապետի անունի վերայ։ Հ. Ղևոնդ Ալիշանեանցը իւր անունով և նահապետ ստորագրութեամբ Հրատարակած կամ մինչև այժմ դեռ ևս չտպված տաղերգութիւնքը տպել է առանձին, որպէս նուագք, Հայրունի մակագրով։ Հին լեզուով գրուածների մէջ տեսանումենք գործ գրված ամենայն ջանք և ճիգն միանախօս լինելու, իսկ նահապետի անունով գրվածքը թէև աշխարհաբառ, բայց շատ յաղթահարված հին լեզուից, և նմանել ցանկանալով մեծ Հայաստանի լեզուին շատ անգամ մէջ խառնած այնպիսի տեղական բառեր որ շատ սակաւ էին գործ ածվում։ Հ. Ղևոնդ Ալիշանեանցը ունի բանաստեղծական քանքար և այդ քանքարը կարող էր աւելի պարզ և վառ երևել, եթէ աբեղայական սևաթոյր վերարկուն չլինէր խափանարիլ։ Մի և նոյն կերպով յաւումենք և Խորէն վարդապետի

վերայ, քաջ դիտելով նոցա գրուածիւնը և հայեացքի, շատ անգամ դուչխ ակամայ, սահմանքը։ Շատ և շատ երախտապարտ կը կացուցանէ մեզ Ծերունի Նահապետը, և խոստանումնք, որ Հայաստանի լուսնակը իւր շողը կը կանէ նորա գերեզմանաքարի վերայ, եթէ իւր այսուհետև երգելիքը երգէ աւելի հասկանալի (հասարակ ժողովրդի համար) լեզուով։ Արժանապատիւ Խորէն վարդապետը խոստացել է մեզ այս, իւր կողմից, ուստի և աւելորդ ենք համարում վերստին խնդրելով ձանձրութիւն պատճառել։

Չէ կարելի մի երկու խօսք չասել Փարիզում գտանված մի Ծերունի պապական Հօր մասին։ Նորա վերստուածիւնը այսպէս է. Գրիգոր վարդապետ Կապարաճի կարապետեան, Հաւատոյ Մխիթարեանց Վենետկոյ։ Այս վերջին բացայայտիչ խօսքերը, թերևս գրվումեն այն միտքով, որ ընթերցողը իսկոյն հասկանայ, որ նա, թէպէտ արդէն քառասուն տարու չափ բաժանված Մխիթարեան միաբանութենից գտանվում Փարիզում, որպէս ֆրանսիական քահանայ, բայց այնու ամենայնիւ մի և նոյն ուղղութեան և սկզբունքի տէր է ինչպէս Մխիթարեանք։ Ուշ է զարթել այս Ծերունու մէջ գրելու ցանկութիւնը և եղիշէն իւր խորին Ծերութեան մէջ ֆրանսիարէն տպելով, ձեռք է զարկել հրատարակելու մի այլ գիրք։ Բայց այս գիրքը մինչև այժմ Հայերի մէջ տպված գրքերին չէ նմանում, նախ իւր բովանդակութեամբ և երկրորդ հրատարակելու կերպով, որից առված է և գրքի մակագիրը «Ընծայ»։

Ո՞նորհակալ ենք պատուելի Ծերունուց, որ պատուասիրեց մեզ ընծաներով, բայց ճշմարտութեան յարգը չենք կարող ուրանալ, մեզ ոչինչ ընծայով չէ կարելի կաշառել։ Ընծայ անունով գիրքը, թող որ երկու յառաջաբան և մի վերջաբան ունի, սակայն շատ աղքատ է իւր բովանդակութեամբ։ Գլխաւոր խորհուրդը ընծայի է յորդորել Հայերը դէպ ի միաբանութիւն. բայց այս միաբանութիւնը արդոյ Ծերունու գրչի տակից երբեմն երևումէ կրօնական մտքով, որ Հայերը ընդունեն պապականութիւն, իսկ երբեմն քաղաքական մտքով, որ Հայերը.... և այլն և այլն։ Արդոյ հեղինակը նոյն յորդորը տալիս է և Յոյներին և Հրէաներին և վերջապէս պատուիրումէ Հայերին ամենևին չխօսել այդ մասին։ Եթէ վտանգաւոր չէ տպագրութեան միջնորդութեամբ տարածել մի գաղափար, միթէ նորա մասին խօսելը է աւելի վտանգաւոր, և այդպիսի դիպուածում ո՞ր կողմից է վտանգը։ Ո՛հ, մեք երբէք վախենալու չէինք այդ վտանգից, եթէ.... եթէ.... վերջապէս եթէ գրված լինելիքը այլ հանգամանքի մէջ քան թէ պատանումնք։

Նորանից քանի տարիներով յառաջ բարձրացած կրօնական-սինոլաստիկական վէճերի պատճառով, Մխիթարեան միաբանութիւնը ուղղակի

կամ անմիջապէս հրատարակեց քանի մի տետրակներ և յօդուածներ, որոնց թէպէտ և պատասխանվեցաւ, բայց Ընծայի վէճակը այլապէս էր վճռել ճակատագիրը։ Շնորհակալ ենք Ընծայից, որ առիթ տուեց կարդալու «Ընդունելութիւն ընծայի» անունով գիրքը, որի իւրաքանչիւր տողերից դուրս է նայում մի ճոխ կատակերգական քանքար։ Այդ գրքի հեղինակը որպէս շատերին նոյնպէս և մեզ անյայտ է, ըստ որում թագուցել է իւր անձը թոռնակ կըկռիկեան շինովի անունի տակ։ Գրքի բովանդակութիւնը, ինչու գիրքն եմ ասում, յառաջաբանը, կամ աւելի լաւ, գրքի ճակատում դրած պատկերը «սկիզբն և վերջ ընդունելութեան» ստորագրով շարժումն մի անզովանալի ծիծաղ։

Այդ գրքի մէջ երևում Ընծան որպէս մի անօրինակ բան. նա գործում հրաշքները, նորան ցանկանում ստանալ, ամենայն տեղից յառաջանում թղթակցութիւնք, որոնց մէջ երևում և ճիշդ նկարագրվում Ընծայի հոգին։ Շատ և շատ անցքերից և նեղութիւնից յետոյ, որ կրել էր հեղինակը, զարթնում քնից իւր մօր ձեռքով, ըստ որում այդ բոլոր անցքերը պատահած էին երազում։ Ընծայի ընդունելութեան վերջին երեսները արժանի են ուշադրութեան, ըստ որում ցան ու ցիր բոլոր գրքի մէջ տարածված մտքերը ամփոփված են այն տեղ, վասնորոյ աւելորդ չեմ համարում ներս բերել Ցիշատակարանիս մէջ։

«....Ա՝ երջապէս առինք ու կարդացինք» գրում հեղինակը (Ընդունելութիւն ընծայի, երես 123)։

«Երկու յառաջաբան, եօթը յօդուած, վերջաբան մըն ալ ետևէն։ «որը 1812 ին տպուած, որը 1840 ին, որ մէկն ալ օրագրաց ու ժողո«վոց մէջ արդէն կարդացուած, ուրիշ բան չկայ.... Ասոնց ամենուն «տակը Համլոհ Մխիթարեանց Վ.ինեթկոյ ստորագրուած, հեղինակին ունե«ցած և չունեցած անուններն ալ ետևէն կարգաւ շարուած։ Այսպիսի «նորակերպ տողի մը նշանակութիւնն ի միտ առնելը մեր կարողութենէ «վեր ըլլալը կը խոստովանինք։ վասն զի, եթէ Մխիթարեանց միտքը «գրքին պատասխանատուութիւնն իրենց վրան առնելով ըստ սովորու«թեան (լռութեամբ) ամ ալ անցաւ ըսել էր, և կամ թէ այս անունը փոխ «տալով հեղինակը պատասխանատու կեցընելէն և չարկ եղած տեղը, «անոր վրայ ցնդած ածականը գնելէն ետև, անիկա մեղքէ շապկոյ է.վեր գա«պաձ է ըսելով, գարձեալ նոյն ամ ալ անցաւ ըսել էր նէ, ինչու հա«համար կը թողուն ղՀեղինակ, որ անհամաձայն և անխոհեմ կերպիւ «կ՝ելնէ ըսէ, կըսեմ և ըսելն վնաս գտպտրէր, ուրիշ տեղ մ՝ալ գրեցէ և կը գրեմ «կըսէ։ Իսկ եթէ միևնակ հեղինակն էր պատասխանատուն, ի՞նչ հարկա-

«ւորութիւն կար այդ Մխիթարեան պատկառելի անունը [1]) յանդգնու-
«թեամբ մէջ բերել ու անոր բարոյական պատիւն աղտեղել։ Մխիթա-
«րեանց ու Համախոհ ընկերին անել և պատուտուր ճամբուն եթէ քիչ
«մը ճշտենանք դատելու Համար, մենք ալ պիտի կորսվինք։ Թող որ հե-
«ղինակը կամ վախէն և կամ տկարութենէն առջի քաջութիւնը մոռ-
«նալով ինք զինքը Մխիթարեանց ղօրաւոր անուամբը պատսպարեր ու
«պատասխանատութեան հրաժարականն ելեր ի սկզբանէ տուեր է։ ասոր
«ի՛նչ ըսենք, ի՛նչպէս Հասկընանք, Հասկնանք ալ նէ, որի՛ պոչէն ըմբռ-
«նենք։ այսպիսի գրքի մը կատակէն ուրիշ ի՛նչ պատասխան կրնայինք
«տալ։ Դուք, որ այդ գիրքը կարդացիք և հեղինակին ըսածին Համա-
«մատ անշուշտ ամեն տողերուն մէջը մէյմէկ խնաստ գտաք ու գատե-
«ցիք, մենք ատոնց վրայ ծաղրէն ուրիշ ի՞նչ կրնայինք աւելցնել։
«Գիրք մը, որ Հայ, Յոյն, Հրէայ, աղգ չը Թողուր ամենուն ալ սրկէց
«ելլի Հունա նստէ, այդ կուժը ձգէ միւսն առ, և ասոր նման Հաղար ու
«մէկ խրատներ և սպառնալիք Հայերէն գրով Հայերէն լեզուաւ խօսե-
«լէն ետև, ցՅոյ բանիցո ըսելով Հայոց բերնին կղպանք մը կը դնէ, որ
«այս բանին վրայ օտար աղգաց Հետ ամենևին չխօսին։ այսպիսի Համա-
«խոհական գիրք մը կատակէն ուրիշ ինչի՞ արժան էր։

«Մխիթարեան Համախոհ մը կ'ելլէ Հռովմէականութեան հրաւի-
«րող գրութիւն մը կը հրատարակէ և պոչը նեղի մնած ատենը, ես
«Հռովմէական Հայոց Համար էրեցի կըսէ։ Հռովմէական Հայերը Հռովմէակա-
«կանութեան հրաւիրող ծաղրալի գրութիւն մը կատակէն ուրիշ ի՛նչ
«բանի արժան էր։ Մխիթարեան Համախոհը Հայոց վրայ ամեն չարիք
«կը դնէ, ու գրիչը փարիզի Հայոց վրայ կը գարչնէ և առակ չթողուր
«իրենց կանչելէն ետև, անոր ալ գոհ չըլլար կ'ելնէ (իբրև կարեկից)
«Էջմիածնայ վարդապետի մը խնդրոյ մէջը կը մտնէ, ու ֆայթոնչը-քիւն
«բառը վերջապէս կ'արտասանէ, քանի մը կէտ ետևէ դնելն ալ չմոռ-
«նալով Մուրադին կը Հասնի։ պատասխանիս ատոր իրաւ կամ սուտ
«ըլլալուն վրայ չէ, այլ այնչափիկ լաւ գիտենք, որ ժողովուրդք ամեն
«ատեն պատրաստ են պայթակղելու, և անոր Համար իրենց արդելք մը
«չէ գրված։ բայց Վարդապետին պարտքն է չգայթակղեցնել զժողո-
«վուրդս, և իրեն այնպէս Հրաման եղած է։ Իսկ եթէ մեք զՄխիթա-
«րեան Համախոհը դատելու միտք ունենայինք, պիտի Հարցնէինք
«իրեն։

---

[1]) Ձգիտենք, թէ պ. թ. կըկուկեանը, ինչ խորհրդով Մխիթարեան անունի վերայ դնուած պատկառելի ածականը «պատկառելի»ն Մխիթարեանց որ գործի Համար վերագրվուած նոցա անունին այդ ծանրակշիռ իսօսքը։ Ն. Եմմանուէլ։

«Նախ, մեր ընտանի խնդիրներուն մէջ մտնելու արտօնութիւնը «ուստի՞ առած է։

«Երկրորդ, նոյն արտօնութիւնը մեզ ալ կը տայ, որ Մխիթա- «րեան Համախոհի մը վիճակին փախուցած աղջկանը պատմութիւնը «ընենք։

«Երրորդ, արտօնութիւն կը տայ, որ այն աղջկանը համար վանքի «տպարանին մէջը (մեծաւորէն և միւս անդամներէն ծածուկ) տպուած «շինծու անցագրին պատմութիւնն ընենք։

«Չորրորդ, արտօնութիւն կը տայ, որ ատեն անցնելէն ետև, աղ- «չկան ոտքը Լումպարտիա դպածին պէս կառավարութենէ բռնվելուն, և «անոր անցագրին ինչ կերպով տպվելը հաստատվելէն ետև.... Մխի- «թարեանց շիտակ ատենին վճարած տուդանաց հաշւոյն հետը անու- «րանալի պատմութիւնն ընենք։

«Հինգերորդ, արտօնութիւն կը տայ, որ դատարկաշրջիկ և ծոա- «քայլ Մխիթարեան համախոհի մը տարիներով փարիզի մէջ ըրած «անառակութիւնները տեղերովն ու վկայութիւններովը ու մնացած «ստկին հաշիւն ու պատմութիւնը ընենք։

«Վեցերորդ, արտօնութիւն կը տայ, որ Մխիթարեան համախոհի «մը երիտասարդութեան ատենին երկու տեսակ հանդերձից նկարա- «գրութիւնը ընելէն ետև, մեկուը ֆէսլաֆէն միւսովն ալ ըռոնի-ֆլին ունե- «ցած նմանութեան պատմութիւնն ընենք, ու այս օրուան ունեցած իր «պատուաւոր և Աստուածայ վճռակովը մերկանդամ ազգին առջևը խայ- «տառակենք....

«Եօթներորդ, արտօնութիւն կը տայ, որ պօլսեցի Մխիթարեան «համախոհաց վրայ քիչ մը խօսինք ու աղգայնոց կամացը դէմ և մեր «աչաց առջևը տներուն մէջ եղնել մտնելով իրենց ըրած անզգամու- «թեանց մանրամասն նկարագրութիւնն ընենք։

«Այս մենք այսպիսի խնդիրներու մէջ մտնելու և Մխիթարեան «համախոհին օրինակաւը ժողովրդեան մէջ դայթակղութիւն ձգելու «միտք չունինք. միայն թէ այս վերջիններուն համար Գերապայծառ «Հասունին [1]) խրատ կը տանք, (ան ալ իրեն կրօնակցաց օգտին համար) «թէ կամ իւր իրաւասութեան տակը գտնուող քահանայքն, (ըստ

---

[1]) Գերապայծառ Հասուն ասելով, հասկանուէ պապական Հայերի պատրիարքը Կոստանդնուպոլսի մէջ։ Սա արդէս Փրոփականդացի Թշնամի է Մխիթարեանց, և Մխիթարեանք միշտ ինչ ընդդիմութիւն ցոյց տալուց յետոյ, խոնարհական և մեղա- յական նամակներով, թերևս ընծաներով ստիպվեցան նորա սիրտը առնուլ։

«արևելեան սովորութեան) ամուսնացնէ, կամ անոնց համար վանք
«շինէ, ու երկաթեայ պատուհաններուն առջևն ալ մէյմէկ գինուոր
«կայնեցնէ, և կամ ամենքը ժողովէ վ.ենետիկ ղրկէ....

«Հայց ինչո՞ւ մեր նպատակէն շեղելով ուխտերնուս դէմ ըրինք,
«մեր գրութեան հիմը և միտքը գտնել կամ պատասխան տալ չէր, այլ
«միայն կատակել ղՀամախոհս Մխիթարեանց, ուրեմն շարունակենք
«մեր խօսքը։

«Ընանուն փեսիէ Մարիձայի մը ղաւակ, եւրա տետրակ մը հանեց,
«որով անուն և ածականաղարդ չարիք չթողուց աղգին վրայ դրաւ,
«մենք ալ զՀամախոհս մարդիկ կարծելով, եւրանք ինք զինքնիս (եթէ
«ոչ անուշութեամբ, գէթ իրաւամբ) բանաւոր կերպիւ պաշտպանե-
«ցինք և բացէ ի բաց մերժեցինք այն անարժան հայհոյութիւնը որ
«իրենց աչքին և տպարանի մամուլներուն տակէն եւրած էին. հիմա
«նոյնը նորոգող և ընծայէ հագուստով դռներնիս նորէն չալող կաշի-
«երես Համախոհը կատակէն ուրիշ ի՛նչ պատուոյ արժանի էր։

«Ըսանց ամենը մէկ դի։

«Համախոհաց ծիծաղելի Աստուածաբանութեան առանց մատչե-
«լու (որն որ արհեստնիս չէ, մնտենալու միտք ալ չունինք) լուսաւոր-
«չական Հայերս բիւր անգամ ըսինք, թէ մեք զբաբկէն անմեղ անձ,
«մանաւանդ հայրենասէր մարդ մը կը ճանաչենք, ան էր, որ իր ազգա-
«յին ազատութիւնը պահել ուզեց, անոր ուղելուն և ի գործ դնելուն
«պատճառաւն է, որ մինչև հիմա Հայոց աղգը կանգուն կեցած աշխարքիս
«մէջ, գոնէ ընկճեալ ազգաց թիւը կը Հաւարուի. ըսինք նաև թէ մեք
«լուսաւորչականքս, ոչ միայն Հռովմէականութեան պատրաստ չենք,
«այլ և պապին անունը մեղի յիշած առեննիդ վրանիս այնպիսի սարսափ
«մը կը գայ, որ, շատ անգամ, ամիներով ալ հիւանդ կըլլանք.....
«Մեր ըսածները չլսելու զարնող Համախոհին ընծան, ի՞նչպէս կրնա-
«յինք ընդունել եթէ ոչ կատակաւ։

«Վ.իտենք, որ յանուն Բաբկէնի վերի գրած յիշատակութիւննիս
«Մխիթարեան Համախոհաց իրաւունք պիտի տայ ամեղ ցիեղ Աս-
«տուածաբանութեանց թերթերը նորէն գարցնելու և մեր մոլորու-
«թեան տարեդրացը վերջի Հատորներն ընդարձակելու. բայց մենք ոչ
«այն կողմերն ենք և ոչ իրենց տրամաբանութեանցը մոխիկ ընելու
«գլուխ ունինք։ Մեղի պէտք եղածն ու ազգային իրաւունքնիս այն է,
«որ Բաբկէն իր առենին երևելի Հայրապետն էր և տասը Հինգ միլ-
«լիոն ժողովրդի կը տիրեր, այնպէս ժողովրդի մը, որ սրտերնին իրենց
«Հայրապետին ամիլ, միշտ արիւնին թափելու պատրաստ էին։ Այսպի-
«սի Հայրապետ մը, երբ որ խմացաւ թէ Հայոց եկեղեցին ուրիշներէն

«կ՝արհամարհուի, լուսաւորչաց աւանդութիւնքն աղէկ մը բռնելուն ու «իրենց կռիւներով քուէ ձգած Սահմանադրութիւնը չընդունելուն «համար, ան ալ, իր նախորդաց ճամբուն մէջը գտնուելուն իրաւամբ, «եւս բանադրեց զարհամարհողս. և աղէկ ըրաւ, իրաւամբ ըրաւ. այն «տեղին համար իր պարտքն էր. չըներ նէ, շաբերոն պէս աղգատեաց կըլ- «լար և գժոխքը կերթար.....

«Մխիթարեան համախոհք ասոր ըսելիք ունի՞ն. իրենց պապը, «սա ժամանակիս, միլլիոն մը հաւատարիմ ժողովուրդ ունինէ, թող «հաստատուն, որ դրիչիս կոտրատունք ու մեկդի ձգենք.....երկայն բա- «րակ մտածել պէտք չէ. համախոհք, գրէք քահանաներնալ մէջը «գրէք.....չը լեցաւ.....կէս միլլիոն ալ չեղաւ.....վայ ձեր թշուա- «ռութեանը. այդպէս ըլլալը շատոնց գիտէինք. այսու ամենայնիւ «այս օրուան օրս կըդնէ կը վերցնէ Հայաստանեայց Հայրապետ մը «անկէց ինչ վար տեղ ուներ։ Արդարև, կատակէն ուրիշ բանի արժա- «նաւորութիւն մը չունիք եղեր։

«Հայոց եկեղեցին Բաբկէնին ըրածը տարուէ տարի նորոգելէն շա- «տոնց դադրեցաւ, իսկ Մխիթարեան համախոհայ սեւաներկ վարա- «գոյրը տարին տասներկու ամիս քաշուած մնիկ ընելով դլուխնիս «դդում դարձաւ.....քաջութիւնը Մխիթարեան համախոհացը չէ, «բայց յանցանքը Հայոցն է, որ քանի մը Տիտայական տրամաբանու- «թենէ վանենալով կապուած մնացին ու հերձուած անունը միշտ մե- «ժեցին. ի՛նչ կայ այդ հերձուած անունին վրայ, և ի՛նչ ըսել է, որ «այդ չատ խրտեր են ու չկրցին օր մը ոտքի վրայ երթնեալով ըսել թէ, «այո՛. հերձուած ենք անունցմէ, որ երեղեցինէս ի՛արհամարհեն, ի՛նչ անպատուութիւն «կայ այդ անուանը մէջ.....եթէ այսպէս ըսէին, գուցէ իրենց պարծանքն «մըն ալ կըլլար այն անունը, որով ոչ միայն Մխիթարեան համախոհս «թաւալգլոր բերած ու անել անդնդոց մէջը ձգած և ի թշնամեաց ան- «դառնալի կերպիւ հեռացած կըլլային, այլ և Եւրոպան ալ առաւել «որոշ կերպիւ և ըստ ամենայնի ղատ ու առանձին ազգ մը կը ճանչնար «ղերենք։

«Ըհմա դուն ըսէ, սրամիտ ընթերցող, այս մտքով չաղկալ ազգդ, «Հռովմէականութեան հրաւիրող անձանց սկաւառակներուն մէջ պճեղ «մը խելք կայ.....

«Կատակէն ալ ուրիշ արժէք ունի՞։

«Մխիթարեան համախոհայ հազար անգամ գործքով ալ ցոյց «տուած էինք, որ մեք, թէ Լուսաւորչական, թէ Հռովմէական և թէ «Աւետարանական Հայքս մէկ սերունդէ, մէկ ընտանիքէ և եղբայր ենք, «մեր երակներուն արիւնը մէկ տեղէ կը լղխի և անոր անուամբը կը

«կանչուինք, զերար ձգելու և զերար ատելու միտք չունենալնիս, դեռ
«քսան չորս ժամ չեղաւ որ հրատարակեցինք և ըսինք, Թէ մեք ձեզի
«գործիք ըլլալէն և եղբայրնիս ուրանալէն կամ սպանելէն դադրեցանք
«և ուխտ ըրինք այսուհետև ձեր ծիծաղելի վէճերուն զոհ չըլլալու· վասն-
«որոյ չենք ուզեր, որ Մխիթարեանց համախոհներն ելնեն որ և իցէ
«կերպիւ մեր ազգայնոց ներքին սէրն ատելութեան, կապակցութիւնը
«բաժանման և խաղաղութիւնը խռովութեան փոխելու պատճառ ըլլան·
«այսպիսի բանաւոր և պատկառելի լուրջքնուս ընդդիմութիւն ընող
«Մխիթարեան համախոհը կրնայ՞նք կատակէն ուրիշ բանով մը
«պատուել։

«Ինչ ընթերցողը ընծայէ յօդուածներն իրարու վրայ դիզէ ու խալ-
«կինի մը մէջ դնէ և ամենավարպետ քիմիագէտի մը ձեռնտուութեամբ
«լուծէ, Թէ որ երիտասարդ բանասիրի մը ներքին համոզմամբը մերժուած
«Հռովմէական պարգևը չելնէ նէ, կատակնիս ետ կառնենք·····գնա,
«Մխիթարեան համախոհ, գնա, Նեփէլի համաձայն 29 երորդ երեսի վերջին
«հինգ տողերը կարդա····[1]) ան թող ըլլայ քեզի պատասխան, եթէ
«ոչ այսուհետև քու արժէքդ կատակ է։

«Մխիթարեան համախոհք·

«Յօդուածներնիս ընծայէն չէ, վասնզի այն պատիւն անոր ընելու միտք
«չունինք, և ուխտիւք կը խնդրենք, որ անոր նման քանի մը հատ
«գրքեր դուրս հանէք, որպէս զի ձեր ծիծաղելի գրութիւնը բոլոր
«աղգն աղէկ իմանայ և արժէքնիդ ճանչնայ։ Բայց ձեզի վերջին խրատ
«ըլլայ ըսելիքիս, և երանի՛ Թէ կարենայինք օգտել։ Մենք Հայկայ զա-
«ւակներս համոզուած և մտքներնիս հաստատուած ենք, Թէ մեր ամէն
«թշուառութեանցը միակ և առաջին և վերջին պատճառ դուք (և ձեզի
«նման ազգատեաց, Թէ Լուսաւորչական, Թէ Հռովմէական և Թէ Ցու-
«նական քահանայքդ) եղած էք, դուք էք Հայաստանն աւերակ դար-
«ձնողը, դուք էք միլլիոնաւոր ժողովրդոց անհետ ըլլալուն պատճառը·
«դուք էք Հայկայ անմեղ զաւակներուն եռևէն ու առջևէն ընկնողը,
«որ պետերուն, սարերուն և դայլերուն բերանը բիւր հազարներով ձգե-

---

[1]) Ներքին համոզումն, տպած 1853· Նոյեան աղաւնոյ տպարանաւմ, երես 29· «Ա՛ տպած դրքերդ, բեզ Թող ըլլայ, վանքիդ մէջ պահէ դանոնք որ ուրիշի մը ընծայ ընես Պապին կողմէն. մենք քեզմէն շնորհակալ ենք, ու Հռովմէական պարգևի կարօտ չենք»։ Արդարև այս խօսքերը լսելուց յետոյ Մխիթարեան համախոհին վերստին ընծայ առնելը մեր ևս ճանաչուժնիք վերին աստիճանի անհամեմատութիւն։ Եւ այսպիսի ընծան, համաձայն ենք պ. Գրիգորիկեանցին, որ կատակից աւելի ուրիշ բանի արժանի չէ։

Կ· Ի՞։

«լէն եւս, մնացածներն ալ իրենց մարցը գրկէն յափշտակեցիք ու «անոնց արտասուալից և սրտապատառ աղերսանացը ձայներուն ականջ- «նիդ ու սրտերնիդ խիելով տարիք ձեր փառասէր ակնկալու թեանց «իրրև փոխարէն, դժոխաորդոց ձեռքը գրաւ ձգեցիք.....

«Դո՛ւք էք, որ երևելի և աներևոյթ ծաղրալի խնդիրներով ազգը «ճղակոտոր հանեցիք ու ընտանեաց մէջ հուր, սուր, բաժանումՙ և ատե- «լութիւն ձգելէն եւս ազգութիւննիս մահուան և դերեզմանաց դըռ- «ները հասուցիք։ Դո՛ւք էք, որ մինչև ցայսօր չը կշտացաք մեր արիւնը «ծծելէն....

«Ձեզ ասեմ, ով համախոհք և գիշատիչք Հայկեան սեռին. անմե- «ղաց արեան շոգին Աստուծոյ կենդանւոյն առջևն ելած քնաչունչ չէր «աւետ լսել ըսելու վրայ է....բայց մինչև այն ատենը կատակէն ու- «րիշ բանի մի՛ սպասէք. վասն զի անկէց ալ ուրիշ արժէք մը չունիք։

Շ նորհակալ ենք Պ. Կրկորիկեանից և մանաւանդ ուրախ ենք նորա կատակերգական քանքարի վերայ, բայց չենք կարող չասել, թէ այն շրջանակը, որի մէջ երևեցնումՙ նա ընթերցողներին իւր տաղանտը, ամենևին անարժան է նորան։ Հոգով չայի ցանկանումենք, որ արդոյ հեղինակը իւր մտքի ծնունդը աւելի պատշաճաւոր ղգեստով հանդէս հանէ երբեմն մեր ընթերցասէրներիս առաջև։

Ընծայի հեղինակը, սաստիկ սրտնեղած Պ. Կրկորիկեանի ընդունե- լութեան վերայ, հրատարակել է մի փոքրիկ թերթ, որպէս մերժողա- կան պատասխանի. բայց այդ թերթի իւրաքանչիւր տողերից դուրս է նայում մի ծերացած զօրութիւն, որ իւր մանկութեան ժամանակ ևս չէ յատկացած մի պնդութեամբ. ամենազօրաւոր պատասխանին, որ լսումենք ծերունի հօր բերանից, այս է, Պապան եղէր, ոչ խօլէր։ Լսեցինք, թէ այս թերթը ևս ընդունել է իւր արժանի պատասխանը, բայց մեզ չյաջողեցաւ տեսանել և ընթեռնուլ։

Լսելով այսքան հոգևոր վէճակից մարդերի վերայ, հարկ համա- րումենք հանդէս հանել Ցիշատակարանիս մէջ Արդոյ Շահնազարեանց կարապետ վարդապետը, Թիֆլիսի Թեմական ատենի երբեմնական նա- խագահ ատենակալը որ գտանվումՙ այժմ Փարիզումՙ։ Քանի մի տարի սորանից յառաջ բարձրացած մրրիկը խլեց նորան իւր տեղից և բաւա- կան միջոց պատճառով ձգեց վերջապես Ֆրանսիայի մայրաքաղաքի մէջ։

Արդոյ վարդապետը ձեռք է ղարկած, մինչև այժմ չտպուած Հայոց հին հեղինակների գործերը իւր ծանօթաբանութեամբ և մեկնաբանու- թեամբ տպելու։ Այս գործերը տպվումեն «Շար Հայ մատենագրաց» մակագրութեամբ և բաժանվումեն նոցա, որոնք յառաջուց գրված

էին այս հրատարակութեան բաժանորդ։ Լսումենք, թէ տան և չորս հատոր պիտի լինի բոլոր հրատարակութիւնը։

«Որպէս հնութեան յիշատակարան պատուելի է մեզ այս հրատարակութիւնը և այն ազգային դպրութեամբ պարապողների համար. թող արդյ տպագրողը հաճի ընդունել մեր շնորհակալութիւնը։ Ինչ որ վերաբերվումէ տպագրողի սեպհական ծանօթութիւններին, մեք գտանվումենք մեծ տարակուսի մէջ, և անտարակոյս մի օր ազգային կրիտիկոսքը կը դատեն այդ բանները, աւելի ղեղով և մաքրելով, ինչ որ դեռ ևս մնացած էր խառն և շփոթ։ Արդյ վարդապետը, այս բանները տպումէ իւր առանձին տպարանում։ Խօսելով տպարանի վերայ պարտականութիւն ենք համարում մեք լուռ չմնալ Պ. Հանիկ Արամեանի տպարանի համին։

Պ. Հանիկ Արամեանը, Նիկոմիդիա քաղաքից, երկար ժամանակ փարիզ բնակվելով և տպագրական արուեստին համառանալով, բաւական հարստացուցել է իւր հայկական տպարանը բաղմատեսակ տառերով։ Այդ տպարանի մէջ գործածական տառերը սովորաբար են նոր ոճով շինուածք. թէպէտ և ոչ բոլորովին կատարեալ, ճարտարութեան համին։ Բայց Պ. Արամեանի փոյթը և ջանքը, այլև պատրաստականութիւնը ընդունելու ամեն մի բարեմիտ խորհուրդ, իւր տպարանից այս կամ այն թերութիւնը վերացուցանելու համար, արդարև վկայումէ, թէ մինչև որ աստիճան աշխատումէ նա ծաղկեցնել հայկական գրատպութիւնը Եւրոպայի խորհրդաւոր մայրաքաղաքներից մինի մէջ։

Պ. Արամեանը վաճառումէ իւր տպարանից թէ մայրեր և թէ ձուլելաձ տառեր և ցուցակը այդպիսի տառերի վաղուց հրատարակած է մի առանձին մեծ թերթի վերայ։ Մեծ հաճութեամբ յայտնեցաւ մեզ լսել Պ. Արամեանից, թէ նա շուտով պատրաստվումէ առնել մի հրատարակութիւն, թէ ամենայն ուղարկված ձեռագիր կարելի է տպել նորա տպարանում և այդ կարելութիւնը հիմնված է միայն մի պայմանի վերայ. ինչ պայման է այդ. որ ընդդէմ չլինի տպելի բանը ֆրանսիական քաղաքականութեանը։ Այս պայմանը շատ հեշտ յանձնառական է, մանաւանդ որ Հայք յարակցութիւն չունենալով Ֆրանսիականի հետ, ինչպէս ուրիշ կառավարութեանների հետ, ուրեմն և նոցա օգուտը կապված չէ մի միասի հետ, որ պիտի վերաբերվէր ֆրանսիական կառավարութեան։ Շնորհակալութիւն Պ. Արամեանին, և առաւել շնորհակալ կը լինինք, եթէ բոլորովին աղատօրէն և անկախաբար լցուցանէ իւր խոստմունքը։ Աղատ գրատպութիւնը մեծ քայլափոխ է դէպ ի յառաջադիմութիւն. և ամենայն մարդ, որ կարող էր որ և իցէ կերպով,

ընթացք տալ աղատութեան արժանի՝ և արժանի՝ է մեծ շնորհակալութեան։

Մեր ներկայութեամբ դուրս եկաւ այդ տպարանից մի գիրք «Փելիքս և Պաւլինէ» Պ. Թորոսեանի ձեռքով իտալական ընագրից թարգմանված։ Բայց ի շնորհակալութենից ուրիշ բան չունինք ասելու պարոն թարգմանողին. ներողամիտ աչքով նայումենք թէ լեզուի և թէ թարգմանութեան թերութեննների վերայ, յարգելով նորա ամենու ձգտողութիւնը, իւր ձեռքից եկածի չափ հարստացնելու մեր ժողովրդական աղքատին դպրութիւնը։ Բայց չէ կարելի մի քանի խօսք չասել այն մասին, թէ հեղինակը այդ գործի, զուր տեղը աշխատել է մի քանի բան այլապէս փոխելով. աւելի լաւ էր բառ առ բառ օրինակել Բեռնարդէն դը Սան-Պիեռի «Պաւլոս և Վիրգինէն», քան թէ նոյն բանը բայց աւելի անշուք կերպարանքով հանդէս հանել որպէս մի նորութիւն. գոնէ աւելի հաճութեամբ կը կարդայինք դորան։ Ամենայն մարդ, որ կարդացած էր Պաւլոս և Վիրգինէ անունով Բեռնարդէն դը Սան-Պիեռի գործը, Փելիքս և Պաւլինէի մէջ պիտի տեսանէ մի կոյր նմանողական ձգտողութիւն. ոչ թէ միայն դաղափարքը մի և նոյն, այլ և շատ անգամ խօսակցութեան նիւթը ևս։ Այս տեղ ևս երևումեն երկու անբաղդ դերդաստանք, երկու աղքատ ու անմեղ սիրահարք և վախճանը գործի, մի փոքր այլապէս ընթացք տալու համար, կատարված աւելի կոպիտ և անբնական կերպով։

Այդ գործը (ընագիրը) չունի ոչինչ մատենագրական արժանաւորութիւն։ Աղաչումենք մեր եղբայրակիցքը, թարգմանութեան ժամանակ ուշ դարձուցանել այն բանի վերայ, որ ընագիրը ունենայ մի հաստատիւն արժանաւորութիւն։

Մեր ուրախ ենք, որ ամենայն տեղ Հայերի մէջ երևումէ այժմ փոքր ի շատէ շարժողութիւն, աղգը և աղգութիւնը ասես թէ կամաց կամաց դառնալու են հասարակաց խօսակցութեան նիւթ. բայց մեր ցանկութիւնը այն է, որ այդ առարկայի վերայ աւելի շատախօսութեամբ չհերիքանան։

Շատ փոքր է Փարիզում դտանված Հայերի թիւը, բայց այս փոքրի մէջ երևումէ աղգայնութիւնը աւելի շատ, քան թէ այլ բազմահայ քաղաքներում, ուր շատ անգամ ձգել է մեզ բաղդը։ Փարիզում դտանվումէ քանքարաւոր Պ. Ս. Սկանեան ուսումնական աղգայինը, որ քանի մի ժամանակ սորանից յառաջ հրատարակելով Արևելք անուն օրագիր (խափանված մի Հայ ճիզվիթի դարանագործութեամբ, ասո՛ւթ և խայտառակութիւն այդ սևահոդի անպիտանին), այժմ հրատարակումէ Արևմուտք անունով կիսամսագիրը։

Ընդարձակ արգոյ և պատուական եղբայրակիցք Պ. Թիւյսիւզեան, Պ. Քեաթիպեան և այլք հոգաբարձու լինելով բոլոր տպագրութեան ծանրութեանը, հրաւիրած են Պ. Ոսկանեանին յանձն առնուլ միայն շարադրելը։ Ազնիւ Հայը ըմհելով իւր ժամանակը կամակար ընդունուէ այս հրաւէրը և ահա Արևմուտքը երևուէ Հայերի աչքին։ Մեք դիտենք մի աղատասնօս հեղինակի վիճակը անկերթ ազգի մէջ. այդպիսի հեղինակը ոչ թէ միայն պիտի կուրծք մաշէ, աչքի լոյսը թափէ ազգին նոր դաղափարք տալու համար, այլև պիտի տանի այն սև սև բամբասանքներին, որ անխորհուրդ խաւարասէրքը անշուշտ ուղղելու էին մի այդպիսի հեղինակի վերայ։ Ասիացին չէ կարող մերկանդամ տեսանել ճշմարտութիւնը. Իղիսը պիտի քօղով ծածկվի միշտ եգիպտացու աչքից. այս պատճառով ևս տեսանուէնք զանազան խլրտմունք և թշնամական յարձակմունք Արևմուտքի թէ հիմնադրերի և թէ շարագրողի ջանքը և աշխատանքը ունայնացնելու համար։ Զգիտենք, թէ մինչև երբ պիտի յարատևէ Հայ-ճիզվիթների ազդեցութիւնը մեր ազգի վերայ.... Ո՛հ, օրերով, ամիսներով և տարիներով ողբալու նիւթ։

Մեք մի առանձին յօդուածով մանրաւորապէս կը խօսինք Արևմուտքի վերայ և մի երկու բան մէջ կը բերենք Արևմուտքից այդ յօդուածի մէջ, մեր ընթերցողներին մի փոքր ճաշակ տալու համար։ Այժմ այսքան թող հերիք լինի ծանուցանել, որ այդ օրագիրը հրատարակվուէ ամիսը երկու անգամ. իւրաքանչիւր համարը բաղկանուէ մի քառածալ թերթից, տարեկան դինը փարիղում է հինգ մանէթ, Մոսկվայի մէջ վեց մանէթ, իսկ Ռուսսիայի այլ քաղաքների համար եօթն և կէս մանէթ։ Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են իւրեանց խընդիրը պատկանեալ արծաթով հանդերձ հասուցանել կամ Պ. Նազարեանցին կամ Պ. Նալբանդեանցին։ Հիւսիսափայլը յանձնառու է Արևմուտքի գործակալութեանը Ռուսսիայի մէջ։

Ընդհանուր ազնիւ հրատարակողը և հիմնադիրքը թող հաճին ընդունել մեր առ ի սրտէ հրապարակական շնորհակալութիւնը, որոնց ցանկանուէնք նոյնպէս ամենայն յաջողութիւն և յառաջադիմութիւն։

Հիմնադրերից մինը, ինչպէս ասացի, Պ. Թիւյսիւզեան արգոյ երիտասարդը փարիղում վաճառականութեան և երկրագործութեան դպրոցների մէջ աւարտելով իւր ուսման ընթացքը, պարապուէ ներկայումս առևտրական գործողութեամբ։ Այս պարոնը ընկերանալով Պ. Գռէյլ (Grélle) ֆրանսիացու հետ կատարուէ վաճառական աշխարհում մեծ գործեր։ Այս երկու ընկերակիցքը ունին վաճառական տներ փարիղում և Կոստանդնուպոլսում։ Քառասուն տարուց աւելի տևուէ

Գոհ յլի վաճառական տունը և շահած է բոլոր Եւրոպայի և Ամերիկայի վաճառական տների հաւատը։

Ազգային վաճառականք ուր և իցէ կարող են ամենայն ապահովութեամբ գործ կատարել այս տան հետ. մանաւանդ նախիջևանեցոյ օգտակար էր այս տունը, որին գործակից էր մի ազգասէր Հայ։ Եթէ շատ ցորեան կամ այլ ապրանք ուղարկվելու լինի Եւրոպա Մարսէյլի վերայով, այդպիսի դիպուածումի պ. Թույսուզեանը և պ. Գոհյլը պատրաստ են մի առանձին տուն բանալ Մարսէյլում։ Ահաւասիկ պ. Թուսուզեանի հասցէն։

№ 56, Boulevard de Sébastopol. Paris, M. Tuysuzian.

Ամենայն հոգով ցանկանումենք, որ մեր ազգային եղբայրակիցների մէջ բացվին ղանալան կապակցութիւնք։ Մի բարոյական կապակցութիւն, մի բարոյական ընկերութիւն աւելի հիմնաւոր է և հաստատ, եթէ յարակից լինին նորան այնպիսի հանգամանք, որ աղբիւր էին և նիւթական շահաստացութեան. այս լնդրին կարող է կատարելապէս պատասխանել առևտրական կապակցութիւնը։ Ես միանգամ Ցիշատակարանիս մէջ (1858 օգոստ. էջ. 8) խօսելով Նախիջևանի հացի, իւղի և երկաթի վաճառականութեան մասին, յայտնել էի իմ խորին ցաւակցութիւնը այն բանի վերայ, որ Նախիջևանեցի արդյ վաճառականք անմիջական յարակցութիւն չունենալով Եւրոպայի հետ հարկադրված են հնազանդվիլ եւրոպական վաճառական տներին, որ գտանվումեն Ռոստով և Նախիջևան քաղաքների մէջ։ Ինչպես մեզ քաջ յայտնի է, պ. Թույսուզեան ազգայինը պատրաստ է բանալու ամենայն տեսակ յարակցութիւնք և իւր հետ գործ կատարել կամեցողներին միշտ յայտնել ապրանքի գները և հարկաւորութեանների քանակութիւնքը։ Մանաւանդ յարմարութիւն կայ մեր հայ վաճառականներին, որ կարող են հայ լեզուով թղթակցիլ, մինչդեռ օտար տների հետ գործ ունենալու ժամանակ պիտի նեղութիւն կրեին լեզուի կողմից։

Այդպիսի վաճառականքը պ. Թույսուզեանցի հետ առաջին անդամ ծանօթացնելու և աւելի մանրամասն լուրեր և ծանօթութիւնք, առևտրական գործողութեանների վերաբերեալ, տալու համար պատրաստ է կոմս Ի. Մ. Լանուէլը, եթէ լնդրեն նորա միջնորդութիւնը։

Ազգային լնդիրներով պարապող և ազգի վիճակին ուշադիր եղող մարդը չէ կարող չտեսանել, որ Հայերի մէջ ևս օրէ օր առաւել շատ դուրս երևելու վերայ են օրագիրք, լրագիրք կամ այլ բանասիրական հանդէսք։ Թիւրքիայի Հայ օրագիրքը և լրագիրքը համարեա թէ ամենայն ամիս հրատարակումեն այս կամ այն, հրատարակվելու նոր օրա-

րի յայտարարութիւնք։ Այո՛, ցաւելով խոստովանումնք, որ շատ անգամ այդպիսի օրագիրը հաղիւ թէ տեսած հրապարակի լոյսը և ահա շիջանումն ասուպների նման, մի տխուր յիշատակ թողնելով մեղ իւրեանց մի քանի հատորը։ Օրագրերի այսպիսի անհաստատութիւնը չէ պիտոյ յանցանք համարել հրատարակողներին. մեր ազգի մէջ, ինչպէս վերևում ասացինք, օրինաւոր մատենագիրը կամ օրագրի հեղինակը պատերազմ ունի ոչ միայն ազգի դարերով կարծրացած նախապաշարմունքի հետ, այլև խաւարապաշտների հետ. և ոչ միայն այսչափ, փառք և պարծանք մեղ Հայերիս, նաև Հայկական ճիզվիթների հետ, որոնց պօլիտիկային ընդդէմ է ամենայն ճշմարտութիւն, որի հետևանքը լինելու չէր մի օգուտ ճիզվիթներին։

Թիւրքիայում մինչև այժմ ազատ էր դրատպութիւնը, բայց այժմ լսումնք, որ ամենայն ազգից կարգված են ցենզօրք (ցենիչք) և, ինչպէս պատմումն, մեր ազգից կարգված պարոնը առաւել խիստ վարվում հեղինակների հետ, քան թէ պահանջումէր թիւրքիայի խաբխաբուկ կառավարութիւնը։ Այս տեղ երևումէ մոլի եռանդը.... մեք բողոքումնք այդպիսի ցենիչների ընդդէմ, և խնդրումնք, ուշադիր լինելով մեր անբաղդացած ազգի վիճակին, տեղիք չտալ անձնական կրքերի և ախտերի, երբ որ պիտոյ էր կատարել իւր պաշտօնը։

Ուր չկայ մտքի և բանականութեան ազատութիւն, այն տեղ կայ հոգու ստրկութիւն, իսկ ուր ստրկութիւն, այն տեղ չկայ կեանք։ Հայոց ազգը առանց նորան ևս քաղաքականապէս մեռած է ներկայումս. մի վերանորոգութիւն, մի բարոյական վերածնեալութիւն եթէ կարելի էր երբ և իցէ յուսալ, ապա ուրեմն պիտի լինի այն ճշգրիտ և ստոյգ լուսաւորութեան միջնորդութեամբ։ Լուսաւորութիւնն է միակ հնարը միմիանցից բաժանված և շատ անգամ, կրքերի և ախտերի խաղալիկ դառնալով, իրեար հետ թշնամացած ազգային անդամքը միմեանց հետ անքակտելի կապակցելու և ազգային մարմնի ամբողջութիւնը դուրս երևեցնելու համար։ Լուսաւորութիւնն է այն աստուածային շունչը, որ աշտարակի օրերից բաժանվածքը միաւորումէ դէպ ի մի կատ եղբայրակցութեան և սրտակցութեան. նա է այն աստուածային հուրը, որ ջերմացնումէ ամենայն սառն սիրտ և պղպջաբեր է գործում ամենայն ամուլ և անծին հոգի։

Նպատակ լուսաւորութիւն ստուգապէս, լաւ միտք առնելով այս մեծախորհուրդ բառիս նշանակութիւնը, առանց թոյլ տալու իւրաքանչիւր մարդու ազատօրէն խոստովանել իւր սրտի վկայութիւնը, մեք ճանաչումնք կորստաբեր խնամտակութիւն, առաջնորդված ճիզվիթական հոգով։ — Կնայե՞ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ։

Ը՛ղջատ Աստուածն այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անղօր թեւերով
Աղատութիւնն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրումէի ներանից
Բաղուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Աղատութիւնը սիրել։

Յոթով լեղուս մինչ կապերը
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն որ ասացի
Ջէր Հայր, կամ մայր, կամ այլ ինչ.
Աղատութի՛ւն, դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ը՛ղատութի՛ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.
«Աղատութեան դու ղինուոր
Կամիս գրվիլ այս օրից։
Ո՛հ, միշտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կը սպասէ.
Աղատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»։

— Ը՛ղատութի՛ւն, — գոչեցի, —
Թող որոտայ իմ գլխին,
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ դնէ ինձ համին,

Ես մինչ ի մահ, կախաղան
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՝ կրկնեմ
Անդադար. ապատութիւն։

Կոմս Լոմնաուել։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Յիշատակարանի երես 725 , տող 10 , սխալմամբ տպվել է դուվեր, որ պիտոյ է կարդալ Տօըր (Tower), մի հին ամրոց Լոնդոնի մէջ, ոչ հեռի Թէմզէ գետից, որ սպասաւորուած պէս տէրութեան բանտ։ Դորան հիմնարկել է Վիլհելմոս Տիրապետողը 1078 թուականին։

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենեաց պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Տնտեսական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաթօս Ատեղաբաշխութեան, ֆիզիայի, Հանքաբանութեան և Ֆիլիզօլօգիայի վերայ· այլև բանախօսութիւն տունկերի, դիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարդական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և ղգայողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով· Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից· այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը սոսնձալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց ինդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Пазарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար 9½ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ, Октября 17-го, 1859 года.

Цензоръ В. Бекетовъ